



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ	1
ԽՍԲԱԳՐԱԿԱՆ.....	2
«ԿԻՆԸ ՀԻՄՆ Է, ԵԹԷ Կ՛ՈՒԹՁԷՔ, ԱԿՆ ՈՒ ԱՂԲԻՒՐԸ ՑԵՂԻ ՄԸ».....	2
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ.....	5
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԳՈՀԱՐ ԳԱՍՊԱՐԵԱՆԻ ՀԵՏ (Կանանց միամսեակին առիթով, կ'արտատպենք հետեւեալ հարցազրոյցը տաղանդաւոր եւ մեծ հայուհի ԳՈՀԱՐ ԳԱՍՊԱՐԵԱՆԻ հետ)	5
«Մեր սէրն է հողը հայրենիք դարձնում».....	5
ԿԻՊՐԱՀԱՅ.....	9
ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՔԱՂՅՐԱՀՈՒՆՉ ԵՐԳԵՐՈՎ.....	9
ՇՆՈՐՀԱՆԴԷՍ.....	10
ՀՀ ՍՓԻՒՌՔԻ ՀԻՄՆԱԴԻՐ ՆԱԽԱՐԱՐ ՓՐՈՖ. ՀՐԱՆՈՅՇ ՅԱԿՈԲԵԱՆԻ	10
«ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓԻՒՌՔ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՏԱՍՆԱՄԵԱՅ ՈՒՂԻՆ (2008-2018)» ԵՌԱՀԱՏՈՐԻՆ:	10
ԿԻՊՐՈՍԻ ԹՐՔԱԳՐԱԻԵԱԼ Ս.ՄԱԿԱՐԱՅ ՎԱՆՔԸ ԱՍԲՈՂՋԱԿԱՆ ԱԻԵՐԱԿՄԱՆ ԵԶՐԻՆ.....	14
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ.....	15
ՍՓԻՒՌՔԻ ՄԵԾ ԲԱՅԱԿԱՆ՝ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆ.....	15
ՅԻՄՆԱՄԵԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՅ ԳԱՂՏՆԻ ԲԱՆԱԿԻ.....	18
ՈՒՂԵՐՉ ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ.....	18
ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԴԻՒԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՂ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՆԿՈՒՍԸ ԵՒ ՀԱՅԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՆՑ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍՆԱԿԻ ՃԱՆԱՉՈՒՍԸ.....	22
ՄԱՐՏ 8-Ի ԾԱՂԻԿՆԵՐՈՒ ԵՐԱՆԳՆԵՐՈՎ.....	25
ՍՈՒՐԻԱ՝ ԶԱՐԴԻ ԵՒ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ.....	27
ՏԵՍԱԿԷՏ.....	29
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆԱԽԱԳԻԾ	29
ՊԱՏՈՒՀԱՍՈՒԹԻՒՆԵՐ՝ ՆԵՐՔԻՆ ԲՈՎԵՐԷՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ՀՈՎԵՐԷՆ.....	34
(ՌՈՒԲԷՆ ՎԱՐԴԱՆԵԱՆՆԵՐԸ ՎԿԱՅԱԿՈՉԵԼՈՎ).....	34
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓԻՒՌՔԸ ՊԷՏՔ Է ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԻ	38
ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԻՐԷ՛ ԱՆՇԱՀԱԽՆԴՐՈՒԹԵԱՄԲ	40
ԹՐԱՍՓԸ, ԻՐ «ԹՐԷՅՆ»ՈՎ ԿԸ ՍՈՒՐԱՅ	42
ԱՌԱՆՑ ՀԱՇՈՒՄԲԵԼՈՒ ԱՋ ՈՒ ԶԱԽ.....	42
ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ.....	46
ՓՈՒՆՋ ՄԸ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ	46
ԻՆՉՈ՞Ւ ՄԽԱԼ ԿԸ ԳՐԵՆՔ.....	49
ՆՈՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՍ ՄԻՒՆԱԿԸ.....	51



« ՇԷՆ ՄՆԱՔ, ՊԱՅԾԱՌ ՄՆԱՔ...».....51

ԻՄ ՊՐԻՄՄԱՎԷՍ53

ԱՌՕՐԵԱՅ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ.....53

ՏԱՐԻՆ ՈՐՉԱՓ ԱՐԱԳ ԿԸ ՍԱՀԻ:.....55

ԱՆՑԱԳԻՐ ԴԷՊԻ ԾՆՆԴԱՎԱՅՐ 15-3-2024.....55

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ 57

ՔԱՌԵԱԿՆԵՐ..... 60

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«ԿԻՆԸ ՀԻՄՆ Է, ԵԹԷ Կ՛ՈՒԶԷՔ, ԱԿՆ ՈՒ ԱՂԲԻԻՐԸ ՑԵՂԻ ՍԸ»



Այս խօսքերը կը պատկանին մեծ Հայուհի՝ Զապէլ Եսայեանի գրիչին, անոնց մէջ խտացնելով կնոջ դերակատարութիւնը ընդհանրապէս ցեղի մը կեանքին մէջ: Քանզի ան է ծնուցիչն ու սնուցիչը ցեղի մը զաւակներուն: Ան է որ իր հոգիէն՝ հոգի եւ ոգիէն՝ ոգի կը փոխանցէ իր զաւակներուն՝ իր ամէնօրեայ դաստիարակութեամբ, խրատներով ու յորդորներով եւ մանաւանդ իր անձնական կեանքի, սեփական վարքի օրինակով: Մայրական սէր, նուիրում, քնքշութիւն ճառագայթող եւ միաժամանակ տոկունութիւն, խիզախութիւն, պայքարի

անկոտորում ոգի եւ արժանապատուութիւն արտացոլող իր անհատականութեամբ ու կենսակերպով: Ի գուր չէ որ Հայաստանի Հանրապետութեան մէջ, ամբողջ միամսեակ մը յատկացուած է հայ կնոջ տօնին, Մարտ 8-էն մինչեւ Ապրիլ 7-ը: Միամսեակ՝ երբ կը մեծարուի հայ կինը, հայ մայրը ու կը վերարժեւորուի անոր տեղն ու դերը հայ կեանքին մէջ:

Ազգ մը մեծ կ'ընծայուի վստահաբար, երբ անոր զաւակներուն ծնունդ ու սնունդ տուող առաջին եւ գերագոյն դաստիարակները՝ մայրերը, իրենց սեփական վարք ու բարքով, կենդանի օրինակով, կը բոցավառեն հասակ առնող նոր սերունդին մօտ՝ ազգային, բարոյական բարձրագոյն արժէքներու վրայ հիմնուած, ինքնօրէն ազատ ու արժանապատիւ կեանքի մը տենդը, ոգին, հրայրքը, մաքառումի եւ պայքարի կորովը: Նման մայրերն ու հայուհիներն են, մեր պարագային, որ կրնան դառնալ ջահակիրները ազգային-հայրենական մեր երթին, բարձր բռնած հայոց լեզուի, հայ հոգեւոր-մշակութային արժէքներու մշտաշող լոյսը...: Հայուհիներ՝ որոնք պահանջատէրը ըլլան մեր պատմական իրաւունքներուն եւ



անժամանցելի Դատին: Հայուհիներ՝ որոնք աննահանջ ոգիով պայքարին ազգային ամեն դասալքութեան, օտարացման, ազգային-բարոյական եղծանումներուն դէմ եւ յանուն հայրենիքի հզօրացման, յանուն ազգային արժէքներու նոր ճառագայթումին: Հայուհիներ որոնք նորովի յայտնաբերեն ազգի ու հայրենիքի վերածնութեան շունչը...

Հայոց պատմութիւնը լեցուն է նման հայուհիներու օրինակներով: Հայրենապաշտ Մամիկոնեաններու Շուշանիկներէն եւ հայոց աշխարհի «Փափկասուն Տիկնայք»էն մինչեւ զէն ի ձեռին հայրենիքի ազատագրութեան համար մարտնչած Սօսէ մայրիկներն ու ֆէտայի հայուհիները: Հայ կեանքի զարթօնքին նուիրուած լուսամիտ ու յառաջապահ Արշակունիի Թէոդիկներէն, Սրբունիի Տիւսաբներէն ու Չապէլ Եսայեաններէն, մինչեւ Եղեռնի գեհեճային օրերուն, ամէն անձնական իրեղէն թողած, «Մշոյ Ճառընտիր» վիթխարի եւ արժէքաւոր գիրքը՝ թուրքին եաթաղանէն փրկած երկու մշակութանուէր հայուհիները եւ անոնց նմանները, որոնցմէ իւրաքանչիւրը իր մէջ կը խտացնէ հայ կնոջ իտէլի մեր հաւաքական կերպարը... Այդ կերպարի նորօրեայ մարմնաւորումն էին անկասկած Արցախեան ազատագրական պայքարի մէջ փայլատակած հայ հերոսուհի կիներն ու առիւծածին մայրերը:

Ներկայիս երբ ազգային մեր կեանքէն ներս, անչափ ուշագրաւ եւ ակնառու դարձած են ազգային ինքնութեան ճգնաժամը, ազգային արժէքներու եւ խորհրդանիշներու նսեմացումն ու նոյնիսկ մերժումը, հայոց պատմութեան իւեղաթիւրման փորձերը, պարտաւորականութեան, յանձնառոյտական եւ նահանջականութեան սերմանումը, ազգային հրատապ հարցերու նկատմամբ անտարբերութիւնը, հայուհին պարտի կանգնիլ ազգի լինելութեան կամ գոյութեանական մարտի առաջին գիծին վրայ...: Ան պիտի կարենայ ստեղծագործաբար նոր ուղիներ որոնել ազգային արժէքներով ոգեշնչելու մատղաշ հոգիները, համահայկական ոգի եւ մտածողութիւն ներշնչել, հայրենասիրութիւն եւ հայրենատիրութիւն, իրաւատէր ու պահանջատէր սերունդ մեծցնել: Զուգահեռաբար, ան պարտի ազգային-պէտական մտածողութիւն ջամբել հայ նորահաս սերունդին մօտ: Այս բոլորին համար՝ ՊԱՅՔԱՐԻ ՈՊԻ, ԱՆՆԿՈՒՆ ԿԱՄՔԻ ՈՅԺ եւ անշուշտ ԽԵԼՔ ազգային մեր իղձերու իրականացման ի խնդիր:

Հայ կին ըլլալ, հայ մայր ըլլալ՝ մասնաւորաբար սփիւտքի այլասերող պայմաններուն տակ, խորապէս պարտաւորեցնող, դժուարին ու ծանր պատասխանատուութիւն է: Անկկա կ'ենթադրէ թիավարել հոսանքն ի վեր ձուլման ահեղ հոսանքին, հայ ապրիլ ու հայ ապրեցնել է, ոգեղէն հայրենիք ստեղծել է օտար հողին վրայ, մայրենին կենսունակ պահել է օտարալեզու միջավայրին մէջ, մեր սրբութիւններուն վրայ դողալ է, երբ շուրջդ մամոնայի բռնակալութիւն է... Տակաւին, ամէն օր սեփական խղճին առջեւ պատասխան տալ է... Աւելին, ազգդ ներկայացնել է օտարներուն՝ գլուխդ բարձր, արժանապատիւ, բանիմաց:

Այնքան իմաստալից կը հնչեն Գարեգին Նժդեհ մեծ հայուն հետեւեալ յորդոր-միտքերը. «Հայ կինը աւելի հերոսուհի, քան թախծութեան մայր պիտի լինի: Նրա շրթունքներէց պիտի չպակասեն Ժանտարքեան բառերը՝ ուղղուած մեր սերունդներին. «Եթէ յոգնած էք, դադար առէք, բայց մի՛ լքէք կոուադաշտը, մի՛ դասալքէք»: Նա միայն պիտի չողբայ վերքերն իր Հայրենիքի, այլեւ մեր սերունդներին անսահման սէր ու պաշտամունք պիտի ներշնչի դէպի



այդ վերքերը: Նա աւելի պիտի սիրի և հպարտանայ, քան կարեկցի: Նրա հայրենասիրութիւնը եւս՝ աստուածային կրակ, բոց ու ջերմութիւն, պիտի արթնացնի թմրած առիւծը իր ժողովրդի մէջ, պիտի բարձրացնի մեր առօրեայ կեանքի թափը, պիտի քաղցրացնի ու հեշտացնի անձնագոհութիւնը: Ոգիացած հայրենասիրություն, որից ժողովուրդները ստեղծում են մի հրաշագործ ուժ, անհրաժեշտ՝ Հայրենիքների անկախութեան ու հզօրութեան համար: Յաճախ վիրաւոր, բայց հոգեպէս անպարտելի. միայն նման ժողովուրդներն են յաջողում պատմութեան մէջ: Յաջողում են նրանք, որոնք ծանօթ չեն յուսահատութիւն կոչուած տկարութեան»:

Այո, հիմա առաւել քան երբէ՛ք, արժեքներու ճգնաժամային խառնաշփոթի եւ աշխարհը վերաբաժնելու Ոյժի կեդրոններուն ստեղծած աշխարհաքաղաքական քառսի մեր ժամանակներուն, պատմութեան երթի ջահակիրները կրնան ըլլալ այն ազգերն ու ժողովուրդները, որոնք իրենց մէջ ոգի եւ ոյժ կը գտնեն յաղթահարելու ամէն նահանջականութիւն ու պարտաւորականութիւն, անտարբերութիւն եւ յարմարողականութիւն եւ՝ բարձր պահած ԱԶԳԻ, ՀԱՅՐԵՆԻՔԻ գիտակցութիւնն ու արժանապատուութիւնը, հայրենասիրութեան, հայրենատիրութեան եւ հայրենապաշտութեան ոգին, կը մաքառին ու կը պայքարին կերտելու համար անոր լուսաւոր ու հզօր ապագան: Իսկ այդ երթին մէջ, վճռորոշ, առաջատար դեր է վիճակուած կնոջ ու մօր՝ «հիմը, ակն ու աղբիւրը» որեւէ ցեղի:

Հայ կինը այսօր պէտք է զինուի կրկնակի ուժով, կրկնակի ոգիով, կրկնակի տոկունութեամբ, կրկնակի հաւատքով ու սիրով, ապրելու անկոտորում վճռականությամբ ի փառս ազգի, հայրենիքի, ազգային պետականութեան լինելութեան եւ հզօրացման...Յարգա՛նք ու խոնարհո՛ւմ նման վարքագիծ ու կեցուածք ցուցաբերող բոլոր հայ կանանց եւ մայրերուն:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԳՈՀԱՐ ԳԱՍՊԱՐԵԱՆԻ ՀԵՏ

(Գանանց միամսեակին առիթով, կ'արտատպենք հետեւեալ հարցազրոյցը տաղանդաւոր եւ մեծ հայուհի ԳՈՀԱՐ ԳԱՍՊԱՐԵԱՆԻ հետ)

«Մեր սերն է հողը հայրենիք դարձնում»

Արխիւային հրատարակում

— Տիկին Գասպարեան, ցանկանում եմ, որ մեր զրոյցը բացառապէս առնչուի Ձեր առինքնող ու հարուստ կենսագրութեանը, մանկութեան ու պատանեկութեան յիշողութիւններին, անցած ճանապարհի այն դրուագներին, որոնք աւելի քիչ են յիշուում պաշտօնական հարցազրոյցներում, բայց մարդու կեանքի ամենանուիրական պահերն են ամփոփում:



— Նախնիներս Խարբերդից են, Չունգուշից: Նրանք մեծ հեղինակութիւն են ունեցել հայրենիքում, ապրել են շքեղ, բարեկեցիկ, բարձրակարգ կրթութիւն են ստացել: Իմ տոհմը յայտնի է բազմաթիւ հոշակաւոր անուններով, ինչպէս օրինակ՝ Երուսաղէմի պատրիարք Յարութիւն Եգիպտացին, Եղիա Տեմիրճիպաշեանը...

Նրանց հայրենասիրութեան մասին լեզենդներ էին պատմում: Ինձ յատկապէս յուզել էր ապուպապերիցս մէկի աղջկայ գեղեցիկ,

վեհ ու ողբերգական պատմութիւնը: Չնաշխարհիկ գեղեցկուհուն սիրահարուել է թուրք իշխանաւորներից մէկը եւ ցանկացել է կնութեան առնել, հակառակ դէպքում՝ սպառնալով հաշուեյարդար տեսնել ամբողջ ընտանիքի հետ: Աղջիկը համաձայնել է, բայց հարսանիքի գիշերը անձնասպան է եղել: Պապերս 1832թ. հերթական խժոժութիւնների ժամանակ փախել են Եգիպտոս ու հաստատուել Զագալիք քաղաքում: Զագալիքում մեծ հայկական համայնք կար, եկեղեցի, դպրոց: Մերոնք աւանդաբար զբաղուել են բամպակի առետրով: Պապերս միլիոնատերեր էին: Մեր տունը Նեղոսի ափին էր, եռայարկ պալատը չորս մասնաշէնք ուներ: Մեր հսկայական այգում ծաղկում էին աշխարհի բոլոր ծաղիկները, աճում էին աշխարհի բոլոր մրգերը: Միայն 25 տեսակ վարդենի կար, իսկ հարիւրաւոր արմաւենիների գազաթը մագլցելու համար բերքահաւաքի ժամանակ բազմաթիւ նեգրեր էինք վարձում: Հայրս՝ Միքայէլ Խաչատուրեանը, յայտնի իրաւաբան էր, դատաւոր, մեծ իրաւաբանական գրասենեակ ուներ՝ բազմաթիւ ծառայողներով: Ընդհանրապէս, հայերը բարի համբաւ ունէին Եգիպտոսում, նրանք աշխատասեր էին, խելացի, ազնիւ ու վայելում էին եգիպտական իշխանութեան բարեհաճութիւնը: Ես ծնողներիս միակ երեխան եմ: Եօթ ամսական եմ ծնուել, մէկ քիլօ 800 գրամ, տատս ինձ բամպակի մէջ է պահել, ու միայն նա է հաւատացել, որ ես կ'ապրեմ: «Մեծ մարդ է դառնալու, — ասել է, — տասը մատներն էլ լոյս են տալու»: Փոքրուց առանձնայատուկ խնամքի ու հոգածութեան եմ արժանացել: Եղել եմ շատ համարձակ, անվերջ պարել—երգել եմ, բացառիկ ընդունակ եմ եղել: Մի դէպք յիշեցի: Մեր յոյն հարեւանի երեքամեայ տղան՝ Եանաքին, իմ ընկերն էր, նրանք տանը պատեֆոն ունէին, ու ես յաճախ մեծ սիրով երաժշտութիւն էի լսում այնտեղ: Մի օր էլ



Եանաքին պատեֆոնը բարկացած փակեց ուղիղ մատներին վրայ, քանի որ չէի համաձայնում երաժշտութիւնը թողած, իր հետ գնդակ խաղալ բախում: Հայրս շատ վշտացաւ, երբ լացելով տուն մտայ: Նոյն օրը պատեֆոն գնեց ինձ համար ու, չգիտես որտեղից, գտաւ Կոմիտասի ստեղծագործութիւնները: Այնպէս էի երջանկացել: Ես սիրում եմ երազել: Մեր տան մօտով մեծ շոգենաւեր էին անցնում: Ու մի անգամ ես բարձրաձայն մտորեցի՝ երանի այս շոգենաւերից մէկը իմը լինէր, ու շրջէի ամբողջ աշխարհով: Մեծ մայրս պատահմամբ լսեց ու խստօրէն ասաց. «Դու էրգիր պիտի գնաս, միայն այդ մասին մտածիր, քո աշխարհը էրգիրն է՝ Հայաստանը»: Մեծ մայրս շատ հայրենասէր էր, հայրս սաստեց նրան՝ ինչու՝ ես երեխային թեւաթափ անում: Ես խռովեցի ու սկսեցի վազել դէպի ծովը: Աւագների վրայ մեր նեգր աղախիներին երեխաներն էին խաղում: Զգիտես ինչու, կօշիկներս հանեցի, հագայ աւազի վրայ ընկած սանդալներից մէկն ու սկսեցի վազել: Մեծ մայրս հասաւ յետեւիցս: Ու երբ ցանկացաւ պարզել, թէ ումն են սանդալները, որ վերադարձնի, ոչ ոք ձայն չհանեց. երեխաներն ինձ շատ էին սիրում, նրանք այդ սանդալները նուիրեցին ինձ: Մինչեւ հիմա պահում եմ: Դրանք մարդկային անկեղծ սիրոյ, ջերմութեան խորհրդանիշներ են ինձ համար: Սէրը ամենամեծ պարգէնն է ու ամենաթանկ գանձը: Իմ մանկութեան կոլորիտը ամբողջական չի լինի, եթէ չպատմեմ մեր օձի մասին: Հսկայ անակոնդա էր, մեծ գլխով, մեզ հետ էր ապրում տան անդամի պէս: Խաղում էր մեզ հետ, ճոճում էր իր հսկայ իրանով: Շատ խելացի էր ու խաղաղ: Բայց մի օր աղախինը ներս վազեց ու ասաց, որ անակոնդան գրկել է իւղի պուլիկն ու թքում է մէջը: Տասու օձի հետ արաբերէն էր խօսում: Թքեց—մրեց օձին, անպատուեց, բայց օձը, հանգստանալու փոխարէն, սկսեց աւելի ուժգին սեղմել պուլիկն ու ջարդեց. իւղը սկսեց կաթ-կաթ հոսել: Մեծ մայրս հաւաքեց աղախիներին ու պահանջեց խոստովանել, թէ ինչպէս են բարկացրել անակոնդային: Պարզուեց, որ պարտիզպանը ինչ-որ ձուեր է գտել խոտերի մէջ, եւ, չհասկանալով ինչ է, թափել է ծովը: Մեծ մայրս սարսափեց, օձի ձուերն են եղել, ասաց՝ ձագերին ծովն ես թափել: Հայրս փութով նաւ նստեց ու գնաց փրկելու անակոնդայի ձագերին: Ձուերի մի մասը դէմ էին առել ինչ—որ փայտի: Հայրս դրանք կրկին դրեց խոտերի մէջ, ու միայն դրանից յետոյ մեր անակոնդան հանգիստ թողեց մեզ...

... Երբ 7 տարեկան դարձայ, հայրս որոշեց ինձ ուղարկել ուսանելու Գալստեան ազգային վարժարանում: Վարժարանը կրում էր մեծ գիտնական, Գալուստ աղայի անունը, այն շատ բարձր, հիմնաւոր, բազմակողմանի կրթութիւն էր տալիս: Վարժարանը Կահիրէում էր: Հայրս առանձնատուն գնեց այդտեղ, եւ ես, հայրս, մայրս սկսեցինք ապրել մեր նոր տանը, որը նոյնպէս շատ գեղեցիկ էր, յարմարաւէտ ու մեծ: Տեսնելով ընդունակութիւններս՝ ինձ տեղափոխեցին վարժարանի երրորդ դասարան: Մենք ուսանում էինք չորս լեզու, ընդ որում՝ խորացուած հայերէն, գրաբար, հայոց պատմութիւն, երգեցողութիւն եւ պար, յաջողութեամբ մրցում էինք տեղի եւրոպական դպրոցների հետ, համերգներ էինք տալիս օպերայի դահլիճում: Չնայած երաժշտական հակումներիս՝ հայրս երազում էր, որ ես փաստաբան դառնամ, ու 8-րդ դասարանը յաջողութեամբ աւարտելով՝ ես ընդունուեցի ֆրանսիական փաստաբանական դպրոց: Առաւօտեան յաճախում էի փաստաբանութեան դասերի, իսկ երեկոյեան հօրիցս գաղտնի ուսանում էի երգի դպրոցում, որտեղ դասաւանդում էին պատերազմի տարիներին Գերմանիայից, Ֆրանսիայից, Իտալիայից Եգիպտոս եկած բազմաթիւ հրաշալի մասնագէտներ: Ուզում եմ պատմել, թէ ինչպէս ես մասնակցեցի մրցոյթի ու դարձայ ռադիոյի մեներգչուհի: 15 տարեկան էի այդ ժամանակ, փոքրամարմին աղջնակ էի՝ թիթեռնիկ զգեստով, կարճ գուլպաներով, վախուրած: Մրցոյթի գնացի ուսուցչուհու՝ օրիորդ Անահիտ Մարտիրոսեանի հետ: Նա տաղանդաւոր երաժիշտ էր ու պիտի դաշնամուրով նուագակցէր ինձ: Հեղինակաւոր ժիւրին՝ համալրուած իտալացի, գերմանացի յայտնի երաժիշտներով, մեզ լսում էր անթափանց ապակու յետեւից: Ես երբեք միկրոֆոն չէի տեսել, ու ամէն ինչ շատ



արտաստվոր էր, յուզումնալից: Երգեցի Պուչինի՝ Տոսկայի արիան, Մարգարիտայի արիան «Ֆաուստից», իսպանական երգ եւ էլի երկու յայտնի ու բարդ գործեր: Երբ աւարտեցի, լսեցի, որ ներսից ծափահարում են, բայց մտքովս չանցաւ, որ այդ ծափահարութիւններն ինձ են ուղղուած, յետոյ դուռը աղմուկով բացուեց, ժիւրիի անդամները լցուեցին սենեակ ու սկսեցին գրկել, շնորհաւորել եւ գովաբանել օրիորդ Անահիտին: Երբ վերջապէս, ուշքի գալով, ուսուցչուհիս հասկացրեց, որ երգողը ոչ թէ ինքն էր, այլ թաքնուել ցանկացող տազնապահար փոքրիկը, բոլորը կարկամեցին: Երեկոյեան իմ էլոյթը պէտք է հաղորդէին ռադիոյով: Ռադիոյի ձայնը մինչեւ վերջ բարձրացրել էի: Առաջին երգս դէռ չէի աւարտել, երբ վազելով ներս մտաւ հայրս ու խանդավառ դիմեց մայրիկիս. «Այս ի՞նչ երգչուհի է, որ չեմ ճանաչում, ի՞նչ ձայն է, ի՞նչ կատարում...»: Աղջիկդ է՝ անխռով պատասխանեց մայրս: Հայրս ապշել էր: Այդպէս 15 տարեկանում դարձայ ռադիոյի մեներգչուհի: Ինձ բաւականին բարձր էին վճարում: Ի դէպ, ես մեծ յաջողութեամբ աւարտեցի նաեւ փաստաբանական դպրոցը, ու իմ դիպլոմային աշխատանքիս մասին անգամ թերթերը գրեցին:

—Ինչու՞ յանկարծ որոշեցիք թողնել ամէն ինչ՝ հարստութիւն, համբաւ ու վերադառնալ մի անձանօթ, անորոշ ապագայով երկիր, որտեղ սով էր, զրկանք, մանաւանդ՝ Ձեր պապերը հարիւրամեակ առաջ էին հաստատուել Եգիպտոսում:

—Եգիպտոսում մարդիկ հրաշալի էին, հանդուրժող, բարեսէր, բարեացակամ: Մեր ազգուտակը յարգուած էր, արտօնուած, մինչ օրս Եգիպտոսում կերպասի տեսակներ կան, որ պապիս անունով են կոչուում: Բայց ի սկզբանէ որոշուած էր, որ ես պիտի հայրենիք վերադառնամ: Մերոնց համար Հայաստանն «Էրզր» էր, որի հետ մեր ճակատագիրը կապուած էր անքակտելիօրէն: Երբ փոքր էի, տատս միշտ կրկնում էր՝ հայերէն սովորիր, որովհետեւ դու պիտի Էրզրում ապրես: Երբ սկսուեց ներգաղթը, հայրս առաջին հերթին իմ անունը գրանցեց: Ես ամուսնացայ Հայկ Գասպարեանի հետ եւ ուղեւորուեցի հայրենիք: Մենք բոլորս էլ գիտէինք, որ Հայաստանում կեանքը դժուար է: Բայր երբ Երեւանում մեզ տեղաւորեցին ախոռ յիշեցնող մի կիսաւեր սենեակում, բառացիօրէն անասունների հարեւանութեամբ, հոգեկան ցնցում տարայ: Ես շփացած, խնամուած աղջիկ էի, ապրել էի ըստ պահանջի, ունեցել էի՝ ինչ ցանկացել էի, ու միանգամից ախոռում յայտնուելը չափից դուրս էր: Ես հոգեկան ապրումներից կորցրի շարժուելու, խօսելու ունակութիւնս: Մի քանի ամսից աղջիկս՝ Սեդան պիտի ծնուէր, ու ամուսինս շատ էր վախեցել: Մեր հարեւանութեամբ ապրում էր Խաչիկեանների ընտանիքը: Տանտիրոջ քոյրը՝ Բելլան, Վիզէն Խեչումեանի կինն էր: Այդ հրաշալի ընտանիքը մեզ շատ սաստարեց, տեղ տուեց իր հիւրընկալ յարկի տակ: Չեմ մոռանում իմ առաջին համերգը Մեծ թատրոնում: Յանկարծ վերջին պահին պարզուեց, որ կորել է Ֆլէյտայի պարտիան, ու երաժիշտը չի կարող նուագակցել ինձ: Երգեցի առանց նուագակցության: Դահլիճը փոթորկուել էր: Ինձ բացառիկ մենահամերգի հրաւիրեցին, երգեցի գիշերուայ ժամը 11-ից մինչեւ երեքը: Ամբողջ կուսակցական էլիտան դահլիճում էր: Ինձ չէին թողնում հեռանալ բեմից, խնդրում էին կրկնել կատարումները:

—Կարելի՞ է ասել, որ հենց այդ մենահամերգը դարձաւ Ձեր գլխապտոյտ յաջողութիւնների, ճանաչման ու հռչակի առաջին քայլը:

— Ասում էք՝ գլխապտոյտ յաջողութիւն, հռչակ... ու այնպէս հեշտ է թուում: Մինչդէռ ես ինքնակատարելագործման դժուարին ճանապարհ եմ անցել: Մի անգամ պատահմամբ հանդիպեցի մեր նախկին հարեւանուհուն, ու նա յիշեց, թէ ինչպէս էի ես օրը ութ ժամ երգում: Գովասանքները, ձեռքբերումները, բնատուր շնորհները ինձ ինքնաթմբի չէին մղում: Այսօր ես օժտուած ուսանողուհիներ ունեմ, բայց նրանք, ցաւօք, չեն աշխատում իմ



եռանդով ու նուիրումով: Պակաս է սերը մասնագիտութեան, երգարուեստի հանդէպ, պակաս է խանդավառութիւնը, բարձրանալու, կատարելագործուելու ձգտումը, հաւատը սեփական ուժերի հանդէպ: Ես միշտ նպատակաւսաց եմ եղել ցանկացած հարցում, կարողացել եմ պայքարել, դիմակայել ու հասնել նպատակիս: Մի անգամ պատասխանատու համերգից առաջ մայրս աստուծոյն հետ խօսեց: Մօրս արագ տեղափոխեցի հիւանդանոց ու սլացայ համերգասրահ: Գեղեցիկ, ճերմակ զգեստս պատռուել էր ու արիւնոտուել: Այդպէս էլ բեմ բարձրացայ ու երգեցի: Ասում են, որ այդ օրը բացառիկ յուզմունքով եմ երգել ու յուզել դահլիճը:

—Ուզում եմ խնդրել, որ պատմէք Ձեր եւ Տիգրան Լեւոնեանի գեղեցիկ սիրոյ պատմութիւնը:

— Առաջին ամուսնուս՝ Հայկ Գասպարեանի հետ Հայաստանում եօթ տարի ապրեցի: Նա հեղինակաւոր լեզուաբան էր, դասախօսում էր պոլիտեխնիկում: Հայկը չէր ցանկանում, որ ես երգեմ, իսկ ես հասկանում էի, որ բնատուր շնորհ ունեմ ու առանց երգի չէի կարող ապրել: Բաժանուցեցինք առանց վէճերի, առանց բարդութիւնների: 56 թ. հանդիպեցի Տիգրան Լեւոնեանին: Նա վաղուց էր տարուած իմ արուեստով, պաշտում էր իմ երգը, գալիս էր բոլոր համերգներին: Յետոյ մեզ վիճակուեց երգել «Արշակ Երկրորդում»: Աւելի մօտիկից ճանաչեցինք իրար: Մեր միութիւնը բացառիկ ներդաշնակ էր, դա արտասովոր սեր էր, որ դիմացաւ բոլոր փորձութիւններին, յաղթահարեց բոլոր խոչընդոտները: Մեզ կապում էր այն արուեստը, որին նուիրուած էինք երկուսս էլ, մեզ կապում էին ընդհանուր հետաքրքրութիւնները, աշխարհայեացքը, բարոյական ըմբռումներն ու չափանիշները, յարգանքն ու վերջապէս մեծ, աստուածատուր սերը, որը չխամբեց մինչեւ վերջ: Կը հաւատա՞ք, մենք երբեք չենք վիճել, չենք գծտուել: Տիգրանի կողքին ես եղել եմ պաշտպանուած, անհոգ, սիրուած ու երջանիկ: Նա հրաշալի մարդ էր, մեծահոգի, բարի, կիրթ, զարգացած: Տիգրանը մեծ հայրենասէր էր, նրա բոլոր ներկայացումներում առկայ էին հայկական ոգին, ազգային շունչը: Ես չգիտեի, որ Տիգրանը հիւանդ է, ինձ չէին ասել: Երբ հիւանդանոց էր գնում, գրկեց ինձ ու լաց եղաւ: Թուում է, քեզ էլ չեմ տեսնելու, ասաց: Չորս օր յետոյ մահացաւ: Չեմ կարողանում համակերպուել կորստի հետ: Տիգրանն ինձ համար ամէն ինչ էր: Ասում են՝ ժամանակը կը բուժի, բայց օրերն անցնում են, իսկ ցաւս չի մեղմում: Մինչեւ Տիգրանի մահը երգել եմ, բայց այլեւս չեմ կարող բերանս բացել: Երբեք նման զգացողութիւն չեմ ունեցել: Տիգրանից յետոյ յանկարծ զգացի, որ յոգնել եմ: Զգացի տարիների բեռը:

—Ինչպե՞ս էք գնահատում հայ օպերային արուեստն այսօր:

—Պիտի կարողանանք հայրենիքում պահել մեր ներուժը: Այսօր Հայաստանից արտերկիր գաղթած օպերային երգիչները այնքան շատ են, որ նոյնիսկ միութիւն են ստեղծել: Մեր հարստութիւնը ցրել ենք աշխարհով մէկ, ու բնական է, որ մեծ յաջողութիւնների չենք կարող հասնել այս վիճակում: Ես ընդհանրապէս դեմ եմ արտագաղթին: Ոչ մի պատճառ չի կարող արդարացնել հայրենիքը լքելն ու օտար երկրներում բախտ որոնել: Հողը հայրենիք է դառնում, երբ ապրում ես նրա վրայ, երբ օրդ բացում ու մթնում է նրա հետ, երբ ամէն օր զգում ես նրա շունչը, տեսնում պատկերը: Ես շրջել եմ ամբողջ աշխարհում (ընդամենը չորս երկրում չեմ եղել), ծանօթ եմ հայկական սփիւռքին: Մէկ ժամ սահմանին կանգնած զինուորի վաստակն աւելին է, քան շատ շատերի զգայացունց, կարօտաբաղձ հայրենասիրութիւնը: Զինուորը ֆիզիկական հայրենիք է պաշտպանում, արուեստագէտն անառիկ է պահում մեր հոգեւոր հայրենիքի սահմանները, երկուսն էլ՝ հայրենի հողի վրայ եւ ո՛չ հեռուից, երկուսն էլ՝ կոնկրետ գործով եւ ո՛չ ճառերով: Սա է իմ իմացած հայրենասիրութիւնը: Հայրենիքն աւելին է, քան այն հողը, որ մետրերով ենք չափում: Հայրենիքը պատմութիւնն է, մշակոյթը,



հաւատքը, ժողովուրդը, նրանց սիրելու համար նրանց կողքին պիտի լինես: Ես մէկ դուստր ունեմ, երկու թոռ, չորս ծոռ: Թոռս՝ Գէորգը, ատամնաբոյժ է, պատուով ծառայեց, կատարեց զինուորական պարտքը, հայրենիքի մասնիկը դարձաւ, քանի որ իր ուժերից, սրտից, կեանքից ինչ—որ բան տուեց հայրենիքին: Հայաստանի ապագան լուսաւոր ու անամպ կը լինի, եթէ կարողանանք երկիրը, հողը հայրենիք դարձնել բարձրացող սերնդի համար: Արցախը վերադարձրինք, ազատագրեցինք, քանի որ ապրում էին Արցախը սիրող, Արցախն իրենց հողը համարող մարդիկ: Մեր կորուսեալ հողերը վերադարձնելու յոյսը չի մեռնի, քանի դեռ չի մեռել ապրող սերնդի սերը այդ հողերի հանդէպ, քանի դեռ չի մեռել ազգային պատուախնդրութիւնը: Թուրքիայում էի: Հիւրանոցի դուռը թակեցին ու մի շքեղ ծաղկեփունջ տուեցին ինձ՝ ինդրելով, որ դնեմ Աթաթուրքի գերեզմանին: Ես կտրականապէս մերժեցի: Նախնիներիս երեք սերունդ է սրի քաշել այդ մարդը՝ ասացի, թուրքական կառավարութիւնն անմիջապէս բողոքի նամակ յղեց Մոսկուա ու պահանջեց, որ ինձ այլեւս Թուրքիա չուղարկեն: Չպէտք է թոյլ տանք, որ ժամանակը բթացնի ցաւը, ատելութիւնը, վրէժի փափաքը: Ու այդ դէպքում, քանի դար էլ անցնի, մեր բռնադատուած գանձերը հետ ենք վերցնելու:

—Տիկին Գասպարեան, Դուք նուաճել էք բոլոր հնարաւոր բարձունքները, բոլոր տիտղոսները, դժուար է անգամ թուարկել ձեր շքանշանների ցանկը: Ձեզ վարձատրուած զգու՛մ էք: Ի՞նչ ապրումներ է ունենում արուեստագէտը փառքի գազաթնակէտին:

— Ամենամեծ վարձատրութիւնը հարազատ ժողովրդի սերն է ու այն գիտակցութիւնը, որ իրականացրել ես բոլոր երազանքներդ: Որ քո անունով բարձրացրել ես երկրիդ անունը, որ քեզնով հայրենիքդ են ճանաչել: Ես երջանիկ մարդ եմ՝ երջանիկ արուեստագէտ, երջանիկ կին, երջանիկ մայր...

—Ի՞նչ կը մտղթէք սահման պահող զինուորներին:

—Թող զինուորները անփորձանք լինեն ու երջանիկ տեսնեն իրենց սիրելիներին: Թող սեփական քաջութիւնը հպարտութիւն ներշնչի նրանց:

Հարցազրոյցը՝ Գայանէ Պողոսեանի

Արտատպուած է «Հայ զինուոր» թերթից

ԿԻՊՐԱՀԱՅ

ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՔԱՂՅՐԱՀՈՒՆՉ ԵՐԳԵՐՈՎ...

Ուրբաթ 28 Փետրուար 2025, երեկոյեան ժամը 7:00-ին, Նիկոսիոյ Ս. Աստուածածին Մայր եկեղեցոյ մէջ, տեղի ունեցաւ ԼԻԼԼԱ Չայնային Քառեակի Համերգը, կազմակերպութեամբ ազգային Առաջնորդարանի եւ Կիպրոսի Համազգային Մշակութային Միութեան «Յակոբ Օշական» Մասնաճիւղին:



Քառեակի պատասխանատուին բառերով, իսկապէս ալ հայ հոգեւոր երգը կրկնակի աղօթք է առ Աստուած: Ի զուր չէ որ բանաստեղծ Վահան Թեքեան կը գրէ իր «Եկեղեցին Հայկական» անմահ բանաստեղծութեան մէջ. «Եկեղեցին Հայկական մէն մի քարին տակ գետնի Դէպի երկինք բարձրացող գաղտնի ճամբայ մը ունի»:

Հայ հոգեւոր երաժշտութեան հոգեպարար փունջ մը հրամցուցին՝ Երեւանէն ժամանած, ԼԻԼԼԱ քառեակի չորս շնորհալի անդամուհիները, որոնք ունին երաժշտական մասնագիտական պատրաստութիւն եւ հմտութիւն, ինչպէս նաեւ կատարողական բարձր արուեստ: Երգերը ընդգրկեցին մեր աննման շարականներէն՝ «Սուրբ-Սուրբ»ը, «Ո՛ր Ես Մայր Իմ», «Ամէն Հայր Սուրբ»,

«Առաւօտ Լուսաբեր», «Ծագումն Հրաշալի» եւ այլ: Երգացանկը ունէր նաեւ համաշխարհային հոգեւոր երգեր, ինչպէս «Ավէ Մարիա»ն եւ այլ: Յայտագրի երկրորդ մասը գերազանցօրէն կը բաղկանար հայ ազգային- ժողովրդական սիրուած երգերէ, ինչպիսիք են՝ «Ես Լսեցի Մի Անոյշ Ձայն», «Կանչում Եմ», «Բինգեօլ», «Չինար Ես», «Շողեր Ճան», «Ալազեազ, Խնկի Ծառ», «Իմ Չինարի Եարը», «Նազան Իմ Եարը» եւ այլ: Դաշնակի ընկերակցութիւնը կատարեց երգչուհի, երաժիշտ եւ դաշնակահար Տիկ. Ջարա Բարխուտարեան:

Որքան ճիշդ է Համերգի աւարտին՝ Թեմիս Կաթ. Փոխ. Գերաշնորհ Տէր Կոմիտաս Արքեպիսկոպոսի տուած գնահատականը հայկական շարականներուն մասին, որոնց նմանը չկայ ամբողջ աշխարհի եկեղեցական երաժշտութեան մէջ: Ան նշեց նաեւ որ հայ երգին մէջ կը ցոլայ ամենայն հարազատութեամբ հայ ժողովուրդի հոգին, որ եղած է միշտ խաղաղասէր, ազնիւ ու բարի...

Կը շնորհաւորենք ԼԻԼԼԱ ՁԱՅՆԱՅԻՆ ՔԱՌԵԱԿը, մաղթելով անոր կանաչ ճանապարհ եւ նորանոր վերելքներ հայ երգը տարածելու իր կարելոր առաքելութեան մէջ: Ե.Գ.

ՇՆՈՐՀԱՆԴԷՍ

ՀՀ ՍՓԻՒՌԻ ՀԻՄՆԱԴԻՐ ՆԱԽԱՐԱՐ ՓՐՈՖ. ՀՐԱՆՈՅՇ ՅԱԿՈԲԵԱՆԻ

«ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓԻՒՌ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՏԱՄՆԱՄԵԱՅ ՈՒՂԻՆ (2008-2018)» ԵՌԱՀԱՏՈՐԻՆ:



Կիրակի 9 Մարտ 2025, երեկոյեան ժամը 7:00-ին, հրաւերովը եւ կազմակերպութեամբ կիպրահայ համայնքի Պետ. Ներկ. Տիար Վարդգէս Մահտեսեանի, տեղի ունեցաւ ՀՀ Սփիւռքի հիմնադիր նախարար Տիկ. Հրանոյշ Յակոբեանի «Հայրենիք-Սփիւռք Գործակցութեան Տասնամեայ Ուղին (2008-2018)» եռահատորին շնորհանդէսը՝ Նիկոսիոյ ազգային Առաջնորդարանի «Վահրամ Իւթիւճեան» սրահին մէջ:

Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Պետ. Ներկ. Պրն. Վարդգէս Մահտեսեան, որ բարձր գնահատեց տասնամեայ արդիւնաւետ համագործակցութիւնը ՀՀ Սփիւռքի հիմնադիր նախարարին հետ, ինչ որ տուաւ իր բարի պտուղները:

Հիւրաբար բանախօսելու հրաւիրուած, լիբանանահայ ծանօթ մտաւորական Տիկ. Սեդա Մարկոսեան Խըտըշեան հանգամանալից կերպով դրուատեց Տիկ. Հրանոյշ Յակոբեանի ներդրումը հայրենիքը մօտեցնելու սփիւռքին եւ՝ փոխադարձաբար: Ան դիտել տուաւ, որ հիմնադիր նախարարը յաջողած է ամբողջ սփիւռքը գրաւել, սիրաշահիլ, սփիւռքի զանգուածներուն մէջ կրցած է տեսնել հայրենիքի կարօտով բաբախուն սիրտերը եւ տասը տարի ձեռնհասօրէն եւ մեծ սիրով ու նուիրումով կամրջած է երկու զանգուածները՝ ըմբռնելով հոգեբանական խորունկ իրողութիւնը, որ տարիներով ընկճած էր հայը, եւ որ՝ ընդհանրապէս կը վրիպէր պետական այլ պաշտօնեաներու ուշադրութենէն: Անդրադառնալով «Հայրենիք-սփիւռք գործակցութեան տասնամեայ ուղին (2008-2018)» եռահատորին, անոնցմէ իւրաքանչիւրը, ըսաւ ան, կ'ընդգրկէ տասնամեայ բեղուն ու ծաւալուն գործունէութեան ընթացքին, հայրենիքի թէ սփիւռքի մէջ, տարբեր առիթներով հեղինակին արտասանած խօսքերը, ելոյթներն ու նամակները, որոնց մէջ կ'արտացոլան սփիւռքի նախարարութեան ռազմավարական ծրագիրները, կապերու ամրապնդման միջոցներն ու հնարքները: Ան ըսաւ, որ Հ. Յակոբեան լաւապէս կը դիտարկէ հայրենիք-սփիւռք յարաբերութիւններու մէջ քաղաքական, ազգային, պատմական, հոգեւոր եւ մշակութային բոլոր հանգամանքները՝ անդրադառնալով Հայաստանի պետութեան քաղաքական վարքագծին եւ սփիւռքի ներուժի օգտագործման՝ յանուն Հայաստան-սփիւռք յարաբերութիւններու հզօրացման: Խտըշեան հաստատեց, որ հեղինակը լաւապէս կը ճանչնայ՝ սփիւռքի հոգեբանութիւնը, ցարը, կարիքները, թափած ճիգերն ու զոհողութիւնները, եւ այդ ճանաչողութիւնը զինք կը դարձնէ աւելի գիտակից, աւելի յանձնառու Հայաստանի պետութեան դերին ու պատասխանատուութեան նկատմամբ՝ ի նպաստ ազգապահպանման համար կատարուած աշխատանքներուն, հայ

պահանջատիրութեան, արտայայտուած յատկապէս 2015-ի «Հոչակագիր»ի մշակման մէջ: Ան նշեց այն բազում գործունէութիւններէն շատերը, որոնք իրականացան նախարարութեան ջանքերով, կարեւորելով ի մասնաւորի այն փաստը որ Եռահատորի խորագիրը ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓԻԻՌՔ է, եւ ոչ՝ ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻԻՌՔ, ինչ որ կը վկայէ որ սփիւռքը Հայաստանին կը նայի որպէս իր հարազատ հայրենիքը եւ այդ սիրոյ կապն է ամենէն էականը:

Յայտագրին յատուկ փայլ պարգեւեց Ս. Աստուածածին Մայր եկեղեցւոյ կրտսերներու երգչախումբը, որ ղեկավարութեամբ Տիկ. Վիքի Գույումճեանի կատարեց փունջ մը ազգային-ժողովրդական երգեր, քանոնահար՝ Տիկ. Ալիսիա Ոսկանեան, որ առանձին կատարողութեամբ ալ հանդէս եկաւ, ոգեւորելով ներկաները, ջեմացնելով մթնոլորտը:



Բովանդակալից եւ ոգեշունչ սրտի խօսքով հանդէս եկաւ Եռահատորի հեղինակ՝ Տիկ. Հրանոյշ Յակոբեան, որ յայտնեց իր ափէ ափ սերը սփիւռքին, սփիւռքահայ համայնքներուն, սփիւռքահայ բոլոր կազմակերպութիւններուն եւ կառոյցներուն հանդէպ եւ անշուշտ կիպրահայութեան, եւ այդ սերն էր եղած մղիչ ոյժը իր ծաւալուն տասնամեայ աշխատանքին, որ կեդրոնացեր էր հայապահպանման, հայկական ներոյժի հաւաքագրման եւ արդիւնաւորման, ինչպէս նաեւ հայրենադարձութեան նպատակներուն: Ան կարեւորեց «ուս-ուսի տալու», տասը միլիոնով համախմբուելու, բռունցքուելու անհրաժեշտութիւնը որ կարենանք այս իրավիճակէն դուրս գալ եւ դիմակայել բոլոր մարտահրաւերները որոնք կան մեր առջեւ:

Այս Եռահատորը, նշեց ան, համախմբման, մեր միասնութեան լոյսի ճամբան է: Մենք Արցախեան պատերազմի պարտութեան հետեւանքով պէտք չէ որ պարտուողական կամ յանձնուողական հոգեբանութեամբ յառաջ երթանք, այլ՝ հակառակը: Ան շեշտեց հայութեան հայապահպանման, մանաւանդ լեզուի պահպանութեան, հաւաքական ներոյժի օգտագործման կարեւորութիւնը, ինչպէս նաեւ հայրենադարձութեան խնդիրը: Ան ըսաւ, որ Սուրիոյ ճգնաժամային պատերազմի ժամանակ մենք կրցանք պահել 22 հազար սուրիահայեր եւ իրենց կարիքները հոգալ՝ հաստատելով, որ անոնք Հայաստան բերին՝ աշխատասիրութիւն, նուիրում, նախաձեռնութիւն, աշխատանքի մշակոյթ, աշխուժացուցիչ եւ զարգացուցիչ տնտեսութիւնը:



Եզրափակելով իր խօսքը՝ փրոֆ. Հրանուշ Յակոբեան ըսաւ, որ գիրքերու ուղերձն է՝ հայրենասիրութիւն, հայրենապաշտութիւն, հայրենատիրութիւն, սփիւռքի ուժացման դէմ պայքար, հայրենիք-սփիւռք միասնութիւն: Մենք պէտք է հաւատալով աշխատինք, հաւատանք մեր ոյժին, մեր կամքին, ընդգծեց Տիկ Յակոբեան եւ եզրափակեց իր խօսքը կոչ ընելով. «ԵԿԷՔ ՄԻԱՆԱՆՔ»:

Շնորհանդէսի աւարտին, խօսք առաւ թեմիս Կաթ. Փոխ. Գերաշնորհ Տէր Կոմիտաս Արք. Օհանեանը, բարձր գնահատելով Տիկ. Հրանուշ Յակոբեանի ամբողջական նուիրումը, աշխատանքը սփիւռքը սերտացնելու հայրենիքին եւ՝ փոխադարձաբար ալ եւ շեշտեց որ այդ բոլորին ակնադիւրը ՄԷՐՆ էր: Հուսկ, Պահպանիչ աղօթքով վերջ գտաւ այս սպաւորիչ Երեկոն:

Ե.Գ.

ԿԻՊՐՈՍԻ ԹՐՔԱԳՐԱԻԵԱԼ Ս.ՄԱԿԱՐԱՅ ՎԱՆՔԸ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱԻԵՐԱԿՄԱՆ ԵԶՐԻՆ

CULTURAL TRAGEDY ALERT: THE ONLY ARMENIAN MONASTERY IN CYPRUS ON THE VERGE OF COMPLETE DESTRUCTION!

ΣΥΝΑΓΕΡΜΟΣ ΠΟΛΙΤΙΣΤΙΚΗΣ ΤΡΑΓΩΔΙΑΣ: ΤΟ ΜΟΝΑΧΙΚΟ ΑΡΜΕΝΙΚΟ ΜΟΝΑΣΤΗΡΙ ΣΤΗΝ ΚΥΠΡΟ ΣΤΑ ΠΡΟΘΥΡΑ ΟΛΟΚΑΗΡΩΤΙΚΗΣ ΚΑΤΑΣΤΡΟΦΗΣ!

KÜLTÜR TRAJEDİSİNE DİKKAT: KIBRIS'TAKİ TEK ERMENİ MANASTIRI TAMAMEN YÜK OLMANIN ESİĞİNDE!



*The Armenian monastery of Sourp Magar, occupied Halevga
To Armenoμονάστηρο (Μονή Αγίου Μακαρίου), κατεχόμενη Χαλεύκα
Sourp Magar Ermeni Manastırı, işgal altındaki Alevkayası'nda
Սուրբ Մակարայ Վանքը, գրավեալ Հալէֆքա*

Այս օրերուն, դարձեալ կը բարձրաձայնուի Կիպրոսի բռնագրաւեալ Քայրինիոյ լեռնաշղթային վրայ գտնուող Ս. ՄԱԿԱՐԱՅ հնամեայ ու պատմական վանքի աւերակման մասին եւ անոր շուտափոյթ վերանորոգման անհրաժեշտութեան մասին...Ինչ խօսք, թուրքը, օրը ցերեկով, անխափան ու անարգել, կը գործադրէ իր մշակութային եղեռնը, փորձելով ոչնչացնել բռնագրաւեալ մեր մշակութային ժառանգութիւնը, յուշարձաններն ու կոթողները, որոնք մեր անուրանալի հետքն ու կնիքն են չքնաղ այս կղզիին վրայ ուր, ըստ պատմութեան



տուեալներուն, ոտք ենք դրեր դեռեւս վեցերորդ դարուն: Այժմ կիպրահայ համայնքի Պետ. Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեան բողոքի նամակներ յղած է Եւրամիութեան, Եւրախորհուրդի, ՄԱԿ-ի եւ Կիպրոսի UNDP-ի պատկան մարմիններու եւ կառոյցներու պտասխանատուներուն, որպէսզի անհրաժեշտ քայլեր առնեն ի փրկութիւն պատմական հնամենի սրբավայրին: Նոյն նպատակով, աշխատանքներ կը կատարեն Թեմիս Պատգամաւորական ժողովը եւ պատկան անձինք:

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՍՓԻՌՔԻ ՄԵԾ ԲԱՑԱԿԱՆ՝ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆ



✉ **ՀՐԱԶ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ**

ՄԱՐՏ 6, 2025 Դոկտ. Հրաչ Զիլինկիրեան



Վերջին տարիներուն, սփիւռքի կառոյցներու եւ ղեկավարութեան հարցը դարձած է աճող եւ մտահոգիչ երեւոյթ մը: Ապագան մշուշոտ է, իսկ ներկայ վիճակը՝ յուսախաբեցնող: Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի բնորոշումով՝ «Կը գտնուինք անդունդի եզրին: Համապատասխան դիրքորոշումներ պէտք է որդեգրենք՝ հեռու ամէն տեսակ անիրատես մօտեցումէ ու մակերեսային դատողութենէ:»(1)

Ժամանակն է կարկինը աւելի լայն բանալու եւ արմատական հարցերու մասին խօսելու:

Բացառութիւնները յարգելով, այսօր սփիւռքի «դասական» կազմակերպութիւնները կը նմանին լքուած շէնքերու, ուր անցեալի փառքը տակաւին յայտնապէս տեսանելի է, տէրերը, դեռ տեղ մը գոյութիւն ունին, բայց շատ քիչ բնակիչներ մնացած են: Ղեկավարները տեղ մը տակաւին ներկայ են, բայց անդամները, յատկապէս երիտասարդները, կա՛մ բացակայ են, կա՛մ ալ ներգրաւուած չեն: Ներկան ապրելու եւ ապագայ կերտելու ուժը զգալիօրէն թուլցած է: Ցեղասպանութենէն ետք, այս կազմակերպութիւնները կառուցուած էին ժամանակի պահանջներուն համապատասխան, երբ սփիւռքը նոր կը ձեւաւորուէր, երբ գաղթական հայութիւնը կենսական անհրաժեշտութիւն ուներ համախմբուելու, կեանք վերակերտելու եւ ինքնութիւն պահպանելու, կազմակերպուելու: Սակայն ժամանակները փոխուած են, իսկ կառոյցները՝ ոչ:



Երբեմնի աշխուժ ու կենսունակ այս կառոյցները խորքային վերանորոգում եւ նոր շունչ կը պահանջեն, սակայն կը թուի, թէ անոնց ղեկավարները ոչ յստակ նպատակներ ունին, ոչ ալ բաւարար միջոցներ: Փոխարէնը, գիտակցաբար կամ անգիտակցաբար, անոնք իրենց կազմակերպութիւնները վերածած են թանգարաններու, ուր իրենց ու անցորդներուն համար կը պահպանեն անցեալի վաստակի փայլքը՝ առանց ապագայի տեսիլքի, յոյսի կամ լուրջ ծրագիրներու:

Ղեկավարութեան խնդիրը միայն տեսական հարց չէ: Վերջին տարիներուն, Սփիւռքի մէջ կատարուած հարցախոյզերը եւս պատկերացուցած են այս հարցը: Սփիւռքահայ համայնքներու մէջ կատարուած ուսումնասիրութիւնները զգալի մտահոգութիւններ կը բացայայտեն ղեկավարութեան մասին: Տեսլական ունեցող եւ ուժեղ ղեկավարութեան պակասը կը նկատուի համայնքային կեանքի առաջնահերթ խնդիրներէն մէկը (2): Համայնքային ղեկավարներու եւ համայնքի անդամներու միջեւ կապը խզուած է, իսկ անդունդը՝ օրըստօրէ կը խորանայ:

Իրականութիւնը այն է, որ Սփիւռքը 21-րդ դարուն կտրուկ կերպարանափոխուած է, սակայն մեր կառոյցները չեն յարմարած այս փոփոխութիւններուն: Այսօր սփիւռքը չունի իր պահանջներուն համաձայն ղեկավարներ, որոնք կրնան իսկապէս առաջնորդել եւ վերակազմակերպել զայն: Եթէ նման ղեկավարներ գոյութիւն ունենային, այսօր այս խնդիրներուն մասին անընդհատ պիտի չխօսէինք: Ղեկավարութիւնը պէտք չէ սահմանափակուի միայն գոյութիւն ունեցող իրավիճակը կառավարելով, այլ պէտք է զծէ ու կերտէ ապագան, ցանկ ու սերմանէ հունտերը եւ մշակէ հիմքերը, այլապէս ան պարզապէս կը վերածուի վարչական պաշտօնի՝ առանց որեւէ խորքային ազդեցութեան:

Ղեկավարութեան ամէնէն էական պարտականութիւններէն մէկը կառոյցին մշտական թարմացումին եւ կենսունակութեան ապահովումն է: Այս հարցերը ղեկավարները նախ իրենք իրենց պէտք է ուղղեն եւ անկեղծութեամբ հայելիին նային: Ո՞րն է իմ կառոյցիս կամ կազմակերպութեանս առաքելութիւնը ԱՅՍՕՐ: Ի՞նչ նպատակներ պէտք է իրականացնեմ, ի՞նչ ձեւերով, եւ ի՞նչ միջոցներով: Ի՞նչ դերակատարութիւն ունի երիտասարդութիւնը եւ ի՞նչ հնարաւորութիւններ կը տրուին անոր: Քանի՞ կին անդամներ ունին մեր որոշումներ կայացնող բարձրագոյն ղեկավար մարմինները: Քանի՞ 25-35 տարեկան երիտասարդ մաս կը կազմէ ղեկավարութեան:

Այս եւ այլ հիմնական հարցերը լոկ ձեւական ուսումնասիրութեան համար չեն, այլ գոյութենական խնդիրներ են, որոնք եթէ չգտնեն իրենց լուծումը՝ կառոյցները դատապարտուած են աստիճանական փլուզումի:

Առանց անկեղծ ներհայեցողութեան, ինքնաարբագրումի եւ ներքին «յեղափոխութեան» անհնար է «հետեւորդներու» կամ «շարքայիններու» ուղղութիւն եւ յոյս տալ, ու աւելի էականը՝ նախընտրելի ապագայի մը ճանապարհաքարտէզը ուրուագծել :

Սփիւռքի միասնականութեան կոչեր կամ կենսոցներ

Ամէնէն մտահոգիչ երեւոյթներէն մէկն այն է, որ երբ խօսքը «համասփիւռքային», «միասնական» կամ «միացեալ» նախաձեռնութիւններու մասին է, անոնք յաճախ կը մնան անհասցէ եւ դատարկ կարգախօսներ: Ո՞րոնք են այդ յայտարարութիւններուն



հասցեատերերը.- ո՞ր կրօնական հաստատութիւնը, ո՞ր կուսակցութիւնը, ո՞ր կազմակերպութիւնը կամ կառոյցը: Շատ մը ղեկավարներ, որոնք նման կոչեր կ'ուղղեն, իրականութեան մէջ կը ձգտին համայնքային կազմակերպութիւնները համախմբելու իրենց ծրագիրներուն շուրջ՝ առանց իրական երկխօսութեան, փոխադարձ հասկացութեան կամ յարգանքի: Այսինքն, անոնք չեն ձգտիր հարցերուն շուրջ բաց քննարկումներու եւ համախոհ լուծումներու, այլ պարզապէս կը փորձեն միւսները բերելու իրենց կողմը՝ առանց երկուստեք գաղափարական կամ մարտավարական զիջումներու կամ յարմարեցումներու: Շատ անգամ, նման յայտարարութիւններ տկարութեան նշան են, այսինքն՝ ո՛չ մտածուած եւ մշակուած ծրագիր կայ ո՛չ ալ անհրաժեշտ միջոցները: Իսկ այն կազմակերպութիւնները, որոնք արդէն իրենց տնային աշխատանքը կատարած են եւ միջոցներ ձեռք բերած, աշխատանքը կը տանին առանց սպասելու այլ կառոյցներու «միասնութեան» կամ «համագործակցութեան»:

Վերջերս, յօդուածի մը մէջ (3), սրտցաւ եւ մտահոգ կուսակցական մը կը մատնանշէր իր կառոյցին հիմնական հարցը՝

[Շարքայիներու] ըմբոստութիւնը առիթ մը պէտք է հանդիսանար եւ հանդիսանայ... որ վերանային եւ քննարկէն կուսակցութեան ընդհանուր կառուցուածքը՝ սկիզբէն մինչեւ մեր օրերը: Այստեղ կառուցուածք ըսելով պէտք է հասկնալ անոր պատմութիւնը, կազմակերպական կառոյցը, աշխարհընկալումը, քաղաքական դերակատարութիւնը, ծրագիրը, այլ խօսքով ամէն ինչ որ կ'առընչուի կազմակերպութեան հետ, որպէս գաղափարներ եւ կազմակերպութիւն»:

Յօդուածագիրը ուրիշ կարելոր կէտ մըն ալ կը մատնանշէ, թէ ինչպէս իր կուսակցութիւնը— եւ ես պիտի աւելցնէի սփիւռքեան «դասական» այլ կառոյցները— իրենց պատմութիւնը եւ դերակատարութիւնը «առասպելականացուցած» են եւ իբրեւ այդպիսին «անքննելի» են: «Այս սրբացումը, որ շեշտուած է մասնաւորաբար Միջին Արեւելքի» կազմակերպութիւններու անդամներուն մէջ, «Ժամանակի ընթացքին այլամերժութեան հոգեվիճակ ստեղծած է» կառոյցներուն մէջ:

Այստեղ մեր քննարկումին համար կարելոր չէ ո՞ր կուսակցութեան մասին է խօսքը, ըսուածը բոլոր սփիւռքեան «դասական» կառոյցներուն կը վերաբերի: Սփիւռքի ապագան պիտի որոշուի ոչ թէ լոկ անցեալի ձեռքբերումներով, այլ ապագայի համարձակ եւ խորաթափանց տեսլականով: Այժմ ժամանակն է ոչ թէ միայն խօսելու «համասփիւռքեան միասնականութեան» մասին, այլ իրական, գործնական քայլերու դիմելու՝ նոր տեսլականով, նոր մեթոտներով եւ նոր առաջնորդներով:

Սփիւռքի կազմակերպութիւնները վերակենդանացնելու համար անհրաժեշտ է ինքնաքննադատութեան որդեգրումը, ինչպէս նաեւ աշխատելակերպի ու ոճի վերանայում: Սփիւռքեան կառոյցները պէտք է յստակեցնեն իրենց առաքելութիւնն ու նպատակները՝ ստեղծելով բաց երկխօսութեան հարթակներ ղեկավարներու եւ անդամներու միջեւ: Երիտասարդներու ներգրաւումը պէտք է դառնայ առաջնահերթութիւն՝ զիրենք ընդգրկելով որոշում կայացնող մարմիններուն մէջ եւ օգտագործելով թուային արհեստագիտութիւններ՝ զանոնք հասանելի դարձնելու նպատակով: Կանանց ներգրաւումը եւ ղեկավարութեան մէջ անոնց ընդգրկումը, ցանցային եւ ճկուն կառավարման մեթոտներու որդեգրումը, ինչպէս նաեւ՝ համայնքային կազմակերպութիւններու համար համագործակցային նոր



ձեւաչափերու փորձարկումն ու գործադրութիւնը կրնան նպաստել աւելի ժամանակակից եւ կենսունակ կառոյցներու ստեղծումին: Գաղափարախօսութիւնը գործնական ու կիրարելի պէտք է ըլլայ եւ ոչ միայն «դաւանանք»: Անցեալի սխալներու գիտակցութիւնը եւ քննական մօտեցում որդեգրելը, դասեր քաղելը եւ նոր մօտեցումներ ներմուծելը կրնան հնարաւորութիւն տալ կառոյցներուն ձերբազատելու անքննելի առասպելներէ եւ ականջալուր ըլլալու 21-րդ դարու պահանջներուն: Վերջապէս, նոր ղեկավարներու պատրաստութիւնը, սփիւռքի այլ կառոյցներու յաջողած օրինակներու որդեգրումն ու յարմարեցումը կրնան ապագայասլաց, կենսունակ ու արդիւնաւէտ ղեկավարութիւն ձեւաւորել:

*
Դոկտ. Հրաչ Չիլինկիրեան (www.hratch.info) ընկերաբան, սփիւռքագետ, հայկական հաստատութենական նորարարութեան ծրագրային հեղինակ եւ գործադիր է:

1. Երեւանի մէջ ընթերցուած Արամ Վեհափառի ուղերձը, «Երկիր» 26 Փետրուար 2025. <https://yerkir.am/hy/article/2025/02/26/287852>:
2. Հայկական Սփիւռքի Հարցախոյզ (2019, 2021, 2022), տես՝ www.armeniandiasporasurvey.com
2. «Նոր Յառաջ», 6 Փետրուար 2025, էջ 6:

ՅԻՄՆԱՄԵԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՅ ԳԱՂՏՆԻ ԲԱՆԱԿԻ ՈՒՂԵՐԶ ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ



Յիւնամեակ մը առաջ, հայկական Սփիւռքի գաղթօճախներուն մէջ հասակ առած նոր սերունդը՝ հայրենի հողին վրայ չճնած, բայց այդ հողի կարօտով ներծծուած նորահաս զարմը, զէն ի ձեռին ըմբոստացաւ:

Հայոց Յեղասպանութենէն մազապուրծ փրկուած, անոր արհաւիրքը ցմրուր ճաշակած սերունդի մը մատղաշ յետնորդները՝ որոնք Արարատը իրենց սեփական աչքերով չտեսան, բայց անոր վեհութիւնը իրենց սիրտերուն մէջ ամբարեցին, հնչեցուցին Թուրքիոյ կողմէ բռնագրաւուած հայկական հողերու ազատագրութեան ի խնդիր ռազմի շեփորը:

Ու անոնք, Մայր Հայաստանի ձեռքերուն մէջ ի պահ դրուած սուրի հզօրութեամբ ջրդեղուած, համայն մարդկութեան ազդարարեցին, որ իրենք այլեւս չեն հանդուրժելու Հայ ժողովուրդին պարտադրուած՝ հայրենագրկումի, իրաւագրկումի եւ պատուագրկումի լուծը:



Ազդարարումը այդ, գուպարի աւագանին մէջ մկրտուեցաւ ու անուանակոչուեցաւ՝ Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակ (ԱՄԱԼԱ):

Առաջին իսկ զինեալ գործողութիւններով ի լուր աշխարհին ան ծանուցեց, որ ունի՝ ե՛ւ անուն ե՛ւ ինքնութիւն, ե՛ւ գաղափար ե՛ւ տեսլական, ե՛ւ ծրագիր ե՛ւ առաքելութիւն, ե՛ւ պայքարի կամք ե՛ւ յաղթական ոգի:

Մեր կազմակերպութիւնը՝ յիսնամեակ մը ամբողջ անցնելով հուրի ու սուրի ընդմէջէն, աննկուն պայքարի տարերքին արձանագրելով վերելքներ ու վայրէջքներ, յաղթանակներ եւ ընկրկումներ, յառաջխաղացումներ եւ տեղքայլեր, զոհաբերելով հոյլ մը անձնագոհ նահատակներ, անձուէր վիրաւորներ եւ անվեհեր բանտարկեալներ, Հայոց պատմութեան մատենանին մէջ մեծատառով վերահաստատեց՝ իր ազգային եւ մարդկային անկորչելի եւ անօտարելի իրաւունքներուն համար պայքարող հայու անջնջելի ու անշիջելի գոյութիւնը:



(2-Ա) Զօրավար Անդրանիկ, Յարութիւն Թագուշեան (Ծածկանուն Յակոբ Յակոբեան – ԱՄԱԼԱ կազմակերպութեան հիմնադիր), Գէորգ Աճէմեան, Գուրգէն Եանիկեան, Շահան Նաթայի

Համաշխարհային պատմութեան ընթացքը կը բնորոշուի պատմաքաղաքական շրջափուլերու յաջորդականութեամբ, որոնցմէ իւրաքանչիւրը կը զանազանուի տուեալ ժամանակի եւ տարածութեան մէջ իր ուրոյն յատկանիշներով:

Յիրաւի, այլ էին աշխարհառազմավարական, ռազմաքաղաքական, աշխարհագրա-կան, ժողովրդագրական, հասարակական եւ տնտեսական, մշակութային, կրթական, գիտական եւ բարոյահոգեբանական իրողութիւնները անցեալ դարու եօթանասունա-կաններուն եւ ութսունականներուն, նոյնիսկ իննսունականներուն, եւ այլ են այսօր:

Պէտք է փաստել, որ ներկայիս հիմնովին փոխուած են համաշխարհային եւ տարածա-շրջանային իրողութիւնները, յառաջացած են ուժերու նոր յարաբերակցութիւններ եւ մեծապետական շահերու նոր դրսեւորումներ, բացայայտուած են նուաճողական ու ծաւալապաշտական սրուող անգուսպ ախորժակներ, որոնք պատմաքաղաքական ներկայ փուլին, ժամանակաւորապէս, իրենց անբարենպաստ ներգործումը կ'ունենան ազատագրական պայքարի ընթացքին, թափին ու ուժականութեան վրայ:



Վերոնշեալին զուգահեռ պէտք է արձանագրել նաեւ, որ Հայաստանի Հանրապետութեան մէջ ներկայիս գործող վարչախումբի կողմէ, հետեւողականօրէն ի գործ դրուող՝ ազգային իղձերու ու նպատակներու ժխտումը եւ ուրացումը, մեր ինքնութեան խաթարումը, կենսամտածողութեան եւ կենսակերպի աղաւաղումը ու խեղումը, եւ ազգային արժէքներու ոտնահարումը նպատակադրող նկրտումները, իսկ ի լրումն այս բոլորին՝ հայապատկան տարածքներու պաշտպանութիւնը ապահովելու իր պարտադիր պարտականութենէն ինքնաթոշար հրաժարումը եւ յատկապէս Արցախի կորուստը, համահայկական իրականութեան մէջ ստեղծած են նահանջի եւ հիասթափութեան համընդհանուր տրամադրութիւններ, խորացուցած են ազգային հիմնախնդիրներու նկատմամբ անտարբերութեան մթնոլորտը՝ Հայաստանը ու Հայ ազգը կանգնեցնելով գոյաբանական խնդիրներու դէմ յանդիման:

Այս իրողութիւններն են, որ ազգային – ազատագրական պայքարի ռահվիրայ մեր կազմակերպութիւնը հարկադրած են, վերարժեւորելու տուեալ շրջափուլի իր մարտավարական խնդիրները եւ առաջնահերթութիւնները:

Ելլելով նախանշուած հանգամանքներէն, հարկ է ընդգծել, որ Հայկական բռնագրաւուած հողերու ազատագրութեան ռազմավարական գերնպատակին առընթեր, մարտավարական հրատապ եւ անմիջական խնդիրներու վրայ սեւերումը եւ անոնց դիմագրաւման ու յաղթահարման ուղղութեամբ առկայ ներուժի ու միջոցներու կեդրոնացումը, ընթացող ժամանակահատուածի համար մեր կազմակերպութեան օրակարգի անբաժան մասնիկը եւ առաջնահերթութիւնը կը հանդիսանայ, այն պարզորոշ հիմնաւորմամբ, որ առանց այդ խնդիրներու հայանպաստ լուծման, ռազմավարական գերնպատակի ուղղութեամբ յառաջխաղացումը չի կրնար ձեռք բերել անհրաժեշտ ու հարկաւոր՝ գաղափարական, քաղաքական, հասարակական եւ բարոյահոգեբանական խթաններ:



Վան գործողութեան տղաքը դատավարութեան ընթացքին

Առ այդ՝

Բոլորելով յիսնամեակը եւ կանգնելով յաջորդ տասնամեակներու շեմին, մեր կազմակերպութիւնը կ'երդուի անշեղ եւ անայլայլ շարունակել բռնագրաւուած



հայապատկան բոլոր հողերու ազատագրման ի խնդիր անխոնջ պայքարը՝ միշտ վառ եւ կենսունակ պահելով միացեալ եւ ամբողջական Հայաստանի կերտման իղձն ու տեսլականը:

Ան կը վերահաստատէ իր անխախտ յանձնառութիւնը՝ միշտ եւ ամենուրեք պաշտպանելու ազգային գերագոյն շահերը, մեր ինքնութիւնը, արժէքները, արժանապատուութիւնը եւ աւանդոյթները:

Ան կը վերանորոգէ իր համոզումը, որ Հայ ազգի գոյութեան, գոյատեւման եւ յաւիտենականութեան գլխաւոր առհաստաչեան, Հայրենիքի պաշտպանութեան, պահպանութեան եւ հզօրացման զուգահեռ, բռնագրաւուած հայապատկան հողերու ազատագրութեան համար պայքարի մշտական բոցավառումով կ'երաշխաւորուի միայն:

Պայքարները, նամանաւանդ ազգային – ազատագրական պայքարները, ժամանակի եւ տարածութեան սահմանափակումներ չունին:

Անոնք ունին մէկ առաքելութիւն եւ մէկ խնդիր՝ յաղթանակով աւարտել նախաձեռնուած գործը:

Այս հրամայականի գիտակցութեամբ գօտեպնդուած, մենք կը շարունակենք եւ պիտի՝ շարունակենք մեր երթը՝ յանուն Հայրենիքի եւ Հայ ազգի:

Կը խոնարհինք ազգային – ազատագրական պայքարի նահատակներու յաւերժ յիշատակին:

Կը խոնարհինք Հայաստանի տարածքային պաշտպանութեան, սահմաններու անձեռնմխելիութեան, հայութեան անվտանգութեան ապահովման եւ Արցախի հերոսամարտի նահատակներու անմեռ յիշատակին:

Փառք ու պատիւ բոլոր ազատամարտիկներուն:

Պայքարը կը շարունակուի:

Յաղթանակը մերն է:

20 Յունուար 2025

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶՍՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՅ ԳԱՂՏՆԻ ԲԱՆԱԿ

Բովանդակ Հայաստանի Քաղաքական Ղեկավարութիւն (ԳԵՂԱՐԴ)

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՒՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՂ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՆԿՈՒՄԸ ԵՒ ՀԱՅԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՆՑ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍՆԱԿԻ ՃԱՆԱԶՈՒՄԸ

Յարութիւն Իսկահատեան – Պէյրութ



Հայոց Տեղասպանութեան միջազգային ճանաչումը ցարդ հասած չէ աշխարհի մեծամասնութեան չափանիշի: Հայասպանութեան թրքական ոճրային գործընթացի իբրեւ վերջին հանգրուան, Թուրքիա տակաւին կ'որանայ իր գործած Մեծ Ոճիրը: Թուրքիոյ թիկունք կը կանգնին ճանաչման հակառակ միջազգային անտարբերութիւնն ու կամայականութիւնը, որոնք մասնաւորաբար յատուկ են Ա.Մ.Ն.-ի, Բրիտանիոյ եւ Իսրայէլի եւ վերջերս ալ Ռուսիոյ: Այս երեւոյթը առիթ կու տայ աշխարհի տարածքին նոր ցեղասպանութիւններու եւ հաւաքական սպանդներու, որոնք կը գործադրուին զանազան ձեւերով՝

պատերազմական գործողութիւններով կամ յայտնի ու ծածուկ արիւնալի ահաբեկչութեամբ: Տարիէ մը աւելի է որ պաղեստինեան Կազայի շրջանին մէջ Իսրայէլ ամբողջ աշխարհի աչքերուն առջեւ կոտորած կը գործադրէ: Նոյն այս ժամանակաշրջանին Ափրիկէ՝ Սուտանի մէջ ջարդեր տեղի կ'ունենան, մարդիկ կը բռնագաղթեցուին եւ սովի ու հիւանդութիւններու կ'ենթարկուին: Թուրքիա պարբերաբար հարուածներ կը հասցնէ հիւսիսային Սուրիոյ եւ Իրաքի քիւրտերուն: Տակաւին շարքը երկար է...

Ժամանակակից աշխարհի դիւանագիտութիւնը հիմնուած է սուտի եւ կեղծիքի վրայ, ինչպէս նաեւ անոյշ խօսքերու: Բարձրաստիճան պաշտօնի վրայ նախագահներ, վարչապետներ, նախարարներ եւ դիւանագետներ իրենց յայտարարած խոստումներուն կամ բանձներուն ճիշդ հակառակը կը գործադրեն եւ լկտիաբար իբրեւ եզրակացութիւն կը խոստովանին իրենց գործած յանցանքը՝ արդարացնելով զայն «Նպատակը կ'արդարացնէ միջոցը» նենգ ասոյթով:

Կան պարագաներ երբ սուտ ու նենգ դիւանագետը որոշ հարցի մը շուրջ իր կեանքի կարելոր մէկ մասը յատկացուցած է կեղծ յայտարարութիւններու, սակայն անոր գործունէութիւնը եղած է ճիշդ հակապատկերը անոր յայտարարութիւններուն: Նորվեկիական արմատներով ամերիկացի հրեայ բայց ոչ-սիոնիստ պատմաբան Քրիսթոֆըր ճոն Պըյերքնես իր «Արգիլուած Պատմութիւնը Հայկական Ողջակիզման Զգուշացման Պատում Համայն Մարդկութեան», (Christopher Bjerknes, Forbidden History of the Armenian Holocaust: A Cautionary Tale for All Humanity - հեղինակային հրատարակութիւն cjbbooks.com, Օրլանտո, ԱՄՆ, 2022, 432 էջ, անգլերէն), հետեւեալը կ'ըսէ «Ա. Համաշխարհային պատերազմին Օսմանեան Պետութեան մօտ Ա.Մ.Ն.-ի դեսպան Հենրի Մորկընթաուի մասին. «Շատ մը հայեր սխալմամբ կը հաւատան թէ Հենրի Մորկընթաու կրտսերը ազնիւ ազատարար մըն էր Հայ ժողովուրդին եւ «ուղղամիտ հրեայ» մը: Իրականութեան մէջ Մորկընթաուը անկեղծ ջանք չըրաւ հայերը փրկելու: Փոխարէնը ան օգտագործեց դժուարին կացութիւնը, որ սիոնիստները ստեղծած էին ճիշդ այս նպատակին համար, իբր միջոց փորձելու Միացեալ Նահանգները պատերազմի մղելու Օսմանեան կայսրութեան դէմ: Սիոնիստներու նպատակը հայերը բնաջնջել էր, ոչ անոնց փրկելը:



Մորկընթաւուը սիոնիստ խաղացողներէն մէկն էր, որոնք պատրաստեցին հայոց անկումը այնպէս մը, որ ան ծառայէ «հրէական պետութիւնը» ստեղծելու Պաղեստինի մէջ: Մորկընթաւուի նպատակը հայերը փրկել չէր, այլ մանաւանդ ապահով ըլլալ, թէ անոնք զանգուածայնօրէն ջարդուին, այնպէս մը որ ինք յետոյ այս կոտորածը օգտագործէ իբր պատրուակ Ամերիկեան միջամտութեան, որուն արդիւնքը պիտի ըլլար Օսմանեան պետութեան կործանումը» (էջ 301-302):

Վերոյիշեալ հարցին մասին կարելոր կէտ մը կ'ուզենք շեշտել, որ թէեւ ըստ Պըյերքնէսի Մորկընթաւու հայոց դէմ գործած է այլ նենգ դիտաւորութիւններու կողքին, սակայն ան չէր կրնար հակառակը յայտարարել որովհետեւ Հայասպանութեան ճշմարտացիութիւնը աւելի քան հաստատ է:

Այլ դիւանագիտական զեղծարարութիւն մը՝ Ճորճ Պուշ կրտսերի Իրաքի մասին 2004-ին յայտարարած «գիտը», թէ Սատտամ Հիւսէյն երկիրը զրահաւորած է այնպիսի քանակութեամբ զենքերով, որ ընդհանուր քանդում կրնայ յառաջացնել հակառակորդին եւ նոյնիսկ աշխարհի: Միայն քանի մը տարի ետք է որ նոյնինքն Պուշ յայտարարեց, թէ իր այս խօսքը հիմք չունէր, առանց հեզելու սուտ բառը: Կը պարզուի թէ Իսրայէլի վարչապետ Նաթանեահուն օրին յուշած էր Պուշի, թէ Իրաքի զենքերը կը սպառնան Իսրայէլի գոյութեան:

Տակաւին վերջերս Ամերիկայի նոր նախագահը՝ Տոնալտ Թրամփ բացայայտօրէն սպառնալով յայտարարեց Փանամայի եւ Գանատայի հաւանական անհրաժեշտ կցումը Ա. Մ. Ն.-ի: Պաշտօնական մակարդակով հարց տուող չկայ թէ ո՞ր են ազգերու ինքնորոշման իրաւունքը, երկիրներու ինքնորոշութիւնն ու զերիշխանութիւնը եւ վերջապէս ՄԱԿի օրէնսդրութիւնն ու մարդկային իրաւունքները:

Արեւմուտքի քաղաքական ու դիւանագիտական պատասխանատուներու «ազգերու ինքնորոշման եւ ազատութեան», «մարդու իրաւունքներու» եւայլն ամէնօրեայ շոյլ յայտարարութիւններու տարափին ներքոյ, Ազրպէյճան նեցուկ ունենալով զինուորապէս Իսրայէլի եւ Թուրքիոյ ռազմական օգնութիւնները եւ դիւանագիտականօրէն Արեւմուտքի ծածուկ արտօնութիւնը (մանաւանդ անգլիականը նաֆթի դիմաց, որուն միացաւ Ռուսիան ալ կազմի վաճառման ազերիական միջնորդութեամբ), օր ցերեկով 2023-ի ամրան վերջաւորութեան ինն ամիս պաշարելէ ետք Արցախը, զայն տեղատարափ ուրբակոծումի ենթարկեց ու անոր տէր բնակիչ հայերը պարտադիր գաղթի ճանապարհ հանեց, որուն հետեւեցան սուտ պատճառաբանութիւններ եւ նորանոր սպառնալիքներ Հայաստանի դէմ:

Ներկայ օրերու դիւանագիտական ճամարտակութիւններէն է նաեւ Իսրայէլի կամայական վարուելակերպը Լիբանանի հարաւին վերաբերեալ: Երբ արդէն զինադադարի համաձայնութիւն գոյացած է երկու երկիրներու միջեւ եւ Լիբանան (նաեւ Դիմադրութիւնը) լիով կը պահապանէ անոր կէտերը, Իսրայէլ կը շարունակէ իր քանդիչ գործունէութիւնը անմեղ զոհեր խլելով, բնակարաններ եւ նոյնիսկ գիւղեր լրիւ քանդելով, հրդեհներ յառաջացնելով, ցանքերու պտղատու ծառերը արգիլուած զենքերու քիմիական նիւթերով այրելով, բուսականութիւնն ու հողը երկար ժամանակի համար վառելով դարձնելով զայն անատակ ցանքի համար ու խախտելով իր իսկ ստորագրած համաձայնութիւնը: Այս իրողութիւններու դիմաց Արեւմուտքը եւ մանաւանդ Ա.Մ.Ն.-ի ղեկավարները յարատեւ կը կրկնեն Իսրայէլի ապահովութեան հաւաստիացումը ամէն գնով, ինչպէս նաեւ իսրայէլացի ղեկավարներու եւ դիւանագետներու անօրէն սպառնալիքները:

Վերադառնալով Հայասպանութեան ճանաչման եւ հատուցման ու Թուրքիոյ անոր ուրացումին, եւ թէ ի՞նչ ազդեցութիւն կը ձգէ Հայասպանութեան փաստը վերջերս ճանչցած Ա.Մ.Ն.ի ծածուկ մեղսակցութիւնը Թուրքիոյ ուրացումին մէջ հայոց նոր սերունդի եւ միջազգային ազատատենչ հասարակութեան վրայ, այդ ուրացման պատճառներն ու հետեւանքները ընկերաբանական հարթակէն դիտուած, Մարալ Աթալլա ամերիկաբնակ



հայուհին կը քննարկէ իր մագիստրոսի հետեւեալ թէզով՝ «Նախընտրելով Լռութիւնը - Ամերիկայի Միացեալ Նահանգները, Թուրքիա Եւ Հայոց Ցեղասպանութիւնը», (123 էջ) (Choosing Silence: The United States, Turkey and the Armenian Genocide by Maral N. Atallah) վերնագրեալ, Ամերիկայի Միացեալ Նահանգներու Համալոյտ Պետական Համալսարանի ընկերաբանութեան բաժնին մէջ ներկայացուած, Մայիս 2007ին: Մարալ Աթալլահ կ'ըսէ. «Հակառակ այն իրողութեան որ միջազգային ընտանիքը իր ձեռքին մէջ ունի աւելի քան բաւարար փաստարկներ որոնք կ'ամրապնդեն Հայասպանութեան ճշմարտութիւնը՝ Ցեղասպանութիւն մը գործադրուած թրքական կառավարութեան հովանաւորութեամբ, տակաւին Թուրքիա կ'ուրանայ զայն: Ուրանալ Հայոց Ցեղասպանութիւնն ու վերապրողներու յուշերը կը նշանակէ խեղաթիւրել պատմութիւնը: Ուրացումը կը նսեմացնէ 1.5 միլիոն նահատակներու յիշատակը եւ կ'անարգէ հայոց նոր սերունդները, որոնք իրենց ինքնութիւնը կը հիմնեն Հայ Դատին վրայ:

Ուրացումը միայն կը զօրացնէ հայկական ինքնութիւնը...» (էջ 3)

Հայոց Ցեղասպանութեան ուրացման ծածուկ դիտաւորութիւններէն է մինչեւ վերջերս Իսրայէլի կողմէ գործադրուած պաղեստինեան Կազայի ջարդերը եւ պատերազմական ոճիրները, որոնք աշխարհով մէկ բազմաթիւ ձայներ, նոյնիսկ օտարաբնակ հրեաներ զայն խիզախօրէն «Ցեղասպանութիւն» կոչեցին, առանց կարենալ դադրեցնելու: Սակայն ներկայ միջազգային ազդեցիկ դիւանագիտութիւնը լկտիաբար բաւարարուած եւ գոհացած զգաց նկատելով, որ այսպիսով «ցեղասպանութիւն» արտայայտութիւնը «նուիրականացած է այլեւս» իբրեւ պատերազմական պարզ ու հեշտ միջոց եւ զէնք, որ իրաւունք ունի միայն ինք եւ իր դաշնակիցները զայն գործածել:

Ինչ կը վերաբերի Հայասպանութեան հարցին, պէտք է շեշտել որ առանց հողերու, ստացուածքներու եւ իրաւունքներու հատուցման, Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը կը նշանակէ լկտիաբար ու բարձրաձայն յայտարարել. «Այո՛, Հայասպանութիւնը տեղի ունեցած է, յետոյ ի՞նչ (so what!)»:

9/2/2025

Ադրիւր՝ ՊԱՅՔԱՐ

ՄԱՐՏ 8-Ի ԾԱՂԻԿՆԵՐՈՒ ԵՐԱՆԳՆԵՐՈՎ

7/3/2025

0



Մարտ 8ն գարնանային եւ ծաղկեփունջերով նշուած տօն մըն է, երբ աղջիկներն ու կանայք կը ստանան ծաղիկներ եւ շնորհաւորանքներ՝ տօնելու համար Կանանց Միջազգային Օրը:

Մարտ 8ն կը խորհրդանշէ նաեւ կանանց անկախութեան եւ տղամարդկանց հետ հաւասար իրաւունքներ ունենալու օրը:

1909ի Փետրուարին, Նիւ Եորքի մէջ կազմակերպուեցաւ «Կանանց օր»ը, երբ աւելի քան 15,000 կանայք պահանջեցին կրճատել

աշխատանքային օրը եւ տղամարդկանց հետ հաւասարաչափ աշխատավարձ ստանալ: Բացի այդ, անոնք պահանջեցին ընտրութիւններու մասնակցելու իրաւունք:

Հետաքրքրական է այն իրողութիւնը, որ Հայաստանն ու Ռուսիան աւելի յառաջադէմ գտնուեցան քուէարկութեան գաղափարի հանդէպ:

Հայ կինը քուէարկելու իրաւունք ստացաւ 1919ին, Առաջին Հանրապետութեան օրերուն: Ռուսիոյ մէջ այդ իրաւունքը ստացան 1917ին, Գերմանիոյ մէջ՝ 1918ին, Ամերիկայի մէջ՝ 1920ին, Անգլիոյ մէջ՝ 1928ին, Ֆրանսայի մէջ՝ 1944ին, իսկ Չուիցերիոյ մէջ՝ 1971ին:



1910ին, Դանիոյ մէջ տեղի ունեցաւ Աշխատաւոր կանանց միջազգային երկրորդ համաժողովը, որուն ընթացքին Գերմանիոյ Ընկերվարական կուսակցութեան կանանց խումբի առաջնորդ՝ Քլարա Չեթքին մեջտեղ բերաւ Կանանց Միջազգային Օրուան տօնի գաղափարը: Ան առաջարկեց կանանց տօնը բոլոր երկիրներու մէջ նշել Մարտ 8ին: Սակայն կայ նաեւ կարծիք մը, որուն համաձայն 1857ի Մարտ 8ին Նիւ Եորքի մէջ կայացած առաջին «Դատարկ Կաթսաներու Երթ»ը Կանանց Միջազգային Օրուան տօնակատարութեան հիմը հանդիսացաւ:

Քլարա Չեթքին



1914ին վեց պետութիւններու մէջ՝ Աւստրիա, Դանիա, Գերմանիա, Հոլանտա, Ռուսիա եւ Չուիցերիա, կը նշէին Մարտ 8ը: 1922էն սկսեալ, Մարտ 8ը սկսաւ նշուիլ նաեւ Չինաստանի մէջ:

Մինչեւ 1967, Մարտ 8ը նշելը կը համարուէր համայնավարական տօն: 1970ական եւ 1980ական թուականներուն կանանց շարժումներուն միացան նաեւ ձախակողմեաններն ու աշխատաւորական կազմակերպութիւնները՝ պահանջելով կանանց ի նպաստ իրաւական հաւասարութիւն եւ կանանց հանդէպ բռնութիւններու կանխարգելում:



1975ին, ՄԱԿը Մարտ 8ը սկսաւ նշել Կանանց Միջազգային Տարուան ընթացքին: Երկու տարի յետոյ՝ 1977ին, ՄԱԿի գլխաւոր անդամ պետութիւններուն առաջարկուեցաւ Մարտ 8ը սահմանել որպէս կանանց իրաւունքներու եւ աշխարհի խաղաղութեան օր:

Այդ օրուրնէ ետք, Մարտ 8ը կը նշուի որպէս Կանանց Միջազգային Օր: Սակայն այս տօնը, այլեւս նպատակ չունի հաստատելու կանանց հաւասարութիւնը, այլ անիկա կը համարուի գարնան, կանացի գեղեցկութեան եւ կնոջ նկատմամբ ուշադրութեան օր:

Թող գեղեցկութիւնը եւ յաջողութիւնը միշտ ուղեկցին կանանց: Հիանալի է Մարտ 8ի գաղափարը, երբ կանանց ծանրաբեռնուած աշխատանքները կը գնահատուին: Բայց աւելի եւս հիանալին են այն կանայք, որոնք տեսնելով զաւակներու կրթութիւնն ու ընտանեկան սրբութիւններու առաջնահերթութիւնը, իրենց ետը երկրորդական կը դասեն: Անոնք արժանի են ո՛չ միայն ծաղիկներու այլ դիտուելու որպէս օրինակելի տիպարներ:

Աղբիւր՝ Ասպարէզ

ՍՈՒՐԻԱ՝ ԶԱՐԴԻ ԵՒ ՄՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Շատեր կը հարցնեն, թէ ի՞նչ կը պատահի Սուրիոյ մէջ այս օրերուն:

Ամփոփեմ.

Համատարած ջարդ. Զոհը միշտ՝ ժողովուրդը:

Նախկին վարչակարգի մնացորդացը կը ջարդէ,

Նոր վարչակարգը կը ջարդէ,

Բանակը կը ջարդէ,

Զինեալ տարատեսակ խմբաւորումները կը ջարդեն,

Իշխանութիւնը կը ջարդէ,

Ընդդիմութիւնը կը ջարդէ:

Իսկ եթէ պիտի ընդլայնեմ, ապա ըսեմ, թէ նախկին իշխանութեան արժանաւորութիւնը, յամառութիւնը եւ աւելորդ ինքնավստահութիւնը ատենին բարեկարգումներ չձեռնարկելու, իսկ բարեկարգումներ պահանջողներուն հետ ալ հաշուեյարդար տեսնելու անմարդկային պահուածքն էր, որ այդ երկրին մէջ իրավիճակը հասցուց այստեղ: Թող, ո՛չ ոք ըսէ թէ Սուրիոյ մէջ աւելի քան տասնամեակ մը առաջ սկիզբ առածը արեւմտեան ուժերուն հերթական խաղն էր տարածաշրջանը ապակայունացնելու: Տուեալ երկրի մը իշխանութեան պարտականութիւնն է նմանօրինակ դաւեր բացայայտելն ու ըստ այնմ աշխատանք տանիլն ու խուսանաւելը: Հակառակ պարագային արդիւնքը սա է:



Իսկ եթէ աւելի խորանանք, ապա պետք է հասկնանք, որ «քաղաքակիրթ» թուրքիոյ ականջները պարզ կ'երեւին այս բոլորին կարելոր մէկ մասին ետին այսօր:

Մինչ այդ, ո՞ր է Հայաստանն եւ ո՞ր ենք մենք ի տես այս իրավիճակին: Հայաստանի բնակչութեան ոչ փոքրաթիւ մէկ հատուածին կը թուի, թէ

պատահածները մեզմէ մղոններով հեռու՝ այլ մոլորակի մը վրայ կատարուող բաներ են, եւ այդ երկրին մէջ պատահածները մեզի չեն վերաբերիր:

Կայ տգէտ եւ աշխարհագրութենէն անտեղեակ ստուար Հայ հասարակութիւն մը, որ չի գիտեր թէ Սուրիան հայկական աշխարհի անմիջապէս սահմանակից երկիր է, ուր կ'ապրէին ու կ'ապրին հայեր, որոնք այնտեղ յայտնուած են «շնորհիւ» ցեղասպան թուրքին ու այսօր դարձեալ ծանր զին կը վճարեն, թէ մարդկային եւ թէ տնտեսական կորուստներով:

Հայաստանի այսօրուան աւելի եւս տգէտ իշխանութիւններն ալ իրենց հերթին, անհետատես պահուածքով մը տակաւին «Խաղաղութեան խաչմերուկ մաչմերուկ» կը խաղան նոյն այն կողմին հետ, որուն հետ այսպէս կոչուած խաղաղութեան եւ սահմաններու բացումին յաջորդ օրն իսկ մեր երկիրը կրնայ վերածուիլ Հայաստանի Ջարդի եւ Սպանութեան Հանրապետութեան:

9/3/2025

ՄԵԻԱԿ ՅԱԿՈՒԲԵԱՆ

Գլխաւոր Խմբագիր

ԶԱՐԹՕՆՔ օրաթերթի:

ՏԵՄԱԿԷՏ

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆԱԽԱԳԻԾ

Բ.Մաս



Պատմութիւնը դէպքերու շղթայ մըն է եւ կը պատկանի գիտութեան ճիւղին: Հօր եւ այն ազգերը, որոնք իրենց պատմութենէն դաս քաղել գիտեն եւ նոյն սխալը անգամ մը եւս չեն գործեր: Իսկ թոյլ են անոնք, որոնք նոյն ծուղակին մէջ դարձեալ կ'իյնան: Այս յօդուածով պիտի շարունակենք ներկայացնել տարագիր ատեմտահայութեան ներուժը կեդրոնացնող համակարգի մը հաստատումին կարեւորութիւնը: Նաեւ պիտի սերտենք Արեւմտահայութեան Ազգային Գերագոյն Խորհուրդի հիմնադիր մարմինին պատրաստած ազգային հայեցակարգին (Road map) կէտերը: Կէտեր որոնք պէտք է հաստատուին ընտրուելիք կամ

նշանակուելիք Խորհուրդին կողմէ մեկնակէտը դառնալու համար ազգային որեւէ գործունէութեան:

Նախաբան

Հայութիւնը, որպէս ազգային ինքնութիւն, հազարամեակէ մը աւելի կը կարօտի իր հաւաքական ազգային եւ քաղաքական կամքն ու հայեացքը արտայայտող գաղափարախօսութեան մը:

Նման ազգային համապարփակ գաղափարախօսութեան մը բացակայութիւնը ունի իր տարրական եւ էական պատճառները, որոնց մասին կրնանք ընդլայնուած մօտեցումով հատորներ լեցնել ու տակաւին չյաջողինք մի քանի կէտերով ամփոփել՝ պատահած փորձանքներն ու ազգային քայքայման բուն տուեալներն ու հանգամանքները: Բայց նկատի ունենալով որ այսօր, մեր ազգը արդէն կանգնած է գոյատեւման լուրջ սպառնալիքներու առջեւ, մենք պարտաւոր ենք կանգ առնել եւ խոր վերլուծական քննարկումի ընդմեջէն, անգամի մը համար, փորձել մեր ազգի գոյատեւման վերաբերող խնդիրներուն հետ գործել պատասխանատու եւ լուրջ յանձնառութեամբ, մէկդի դնելով մեր մէջ ապրող եւ աճող հատուածային բոլոր տարբերութիւններն ու հակասութիւնները: Հետեւաբար, խիստ այժմեական եւ անյետաձգելի հրամայական է՝ ընդգծել այդ պատճառներուն առնուազն հիմնա-կանները, եւ անոնց համար գործնական լուծումներ որդեգրելն ու գործի դնելը:

* * *



Ազգային հայեցակարգ (Road Map)

Ըստ բնագիտութեան օրէնքին՝ իւրաքանչիւր ապրող էակ շարժական է եւ ենթակայ է զարգացումի: Նոյն օրէնքը կը գործէ ապրող էակներու հաւաքականութեան պարագային ալ, այսինքն ազգի պարագային: Իսկ շարժումի կամ զարգացումի հոլովոյթը կ'արտայայտուի՝ զանգուածի մը փոխադրումով Ա-էն դէպի Բ հանգրուան, որոշ ներուժի գործադրումով եւ որոշ ժամանակի ընթացքին: Ա-ը սկզբնակէտն է, իսկ Բ-ը նպատակակէտը: Մտածող էակները, մանաւանդ ընտրութիւն կատարելու կարողութիւն ունեցողները՝ ինչպէս է մարդ արարածը, կը գիտակցի իր ներկայի Ա դիրքը եւ յստակ պատկերացում եւ ծրագիր կ'ունենայ թէ ուր պիտի ըլլայ որոշ ժամանակահատուածէ մը ետք, այսինքն իր ձգտած Բ դիրքը, ապա կը հաշուէ թէ որ կարելի ճանապարհով պիտի անցնի եւ ինչ ներուժ պիտի տրամադրէ այդ ընթացքը իրականացնելու համար:

Եթէ Հայ ազգը այսօր՝ մէկ ամբողջական, եւ մանաւանդ ողջ ազգ մըն է, ապա ան ունի՝ հաւաքական նոյն գիտակցութիւնը իր ներկայ իրավիճակին մասին՝ այսինքն իր մեկնակէտ Ա-ի մասին: Ան ունի՝ հաւաքական հասկացողութիւն իր նպատակակէտին մասին՝ այսինքն Բ-ի մասին:

Մեր ներկայ իրավիճակը փաստացիօրէն ցոյց կու տայ որ մեր մօտ ստեղծուած են հարիւրաւոր Ա-եր եւ իրարու հետ կապ չունեցող բազմաթիւ Բ-եր: Ուրեմն ինչպէս իմանանք թէ ո՞րն է ճանապարհը Ա-էն Բ երթալու եւ, եւ ո՞ր Ա-էն դէպի ո՞ր Բ-ը:

Իրականութեան մէջ, մենք մէկ ազգ ենք, առնուազն կը պնդենք այդպիսին, բայց չենք գործեր որպէս մէկ ազգ: Եւ սա է մեր ազգի թշնամիներուն յաղթանակի իսկական եւ ամենաարդիւնաւէտ զենքն ու բանալին:

Մերտելու համար մեր ազգային հիմնահարցերուն մէջ տարբեր հոսանքներու գոյութիւնը եւ մեր տկարութեան պատճառ հանդիսացող կէտերը լաւ կ'ըլլայ որ սերտենք Հայաստանի աշխարհագրական դիրքը ու մեր առաջարկելիք լուծումները միասնական ազգային հայեցակարգ մը հաստատելու համար: Այս հայեցակարգի որդեգրումով մենք կրնանք լուծել շատ մը խնդիրներ որոնք պատճառ կը դառնան մեր տկարութեան:

Ստորեւ պիտի սկսինք ներկայացնել կէտերը այդ ազգային հայեցակարգին:

Ա. Համազգային գետնի վրայ

1. Հայ ազգը մէկ ամբողջականութիւն է, իր հողով, մարդով, պատմութեամբ, մշակոյթով եւ ձգտումներով: Ան իր ամբողջականութենէն դուրս չի կրնար գոյատեւել:
2. Հայ ազգի հայրենիքը Հայկական լեռնաշխարհն է, Մեծ եւ Փոքր Հայքերով: Հայութիւնը պարտաւոր է վերականգնելու, պաշտպանելու եւ զարգացնելու իր նախահայրերու լեռնաշխարհը, առանց որուն ան պիտի յաւերժ ենթարկուած մնայ պառակտման, քայքայման եւ վերջնական վերացման:
3. Ընդունելով եւ հաստատելով հայութեան բոլոր իրաւունքները որոնք արտայայտուած են Մերի խաղաղութեան դաշնագրի եւ Ուիլսոնեան իրաւարար վճիռի հիմքերով, անոնք հանգրուան մըն են մեր վերջնական հայրենի հողին վերատիրանալու ճանապարհին: Հայոց վերջնական հայրենիքի ամենէն ճշմարիտ, արդար եւ ընդունելի բնութագրումը կ'արտայայտէ՝ 26 Փետրուար 1919-ին, Փարիզի խաղաղութեան վեհաժողովին ներկայացուցած՝ Պողոս Նուպարեանի գլխաւորած



Հայկական պատուիրակութեան յուշագիրին մէջ ներառուած քարտեզը որ կ'ընդգրկէ ներկայի Հայաստանի Հանրապետութիւնը Արցախով, Արեւմտեան Հայաստանը եւ Կիլիկիան:

4. Հայ անհատը կը պատկանի Հայ ազգին, անկախ իր ներկայ բնակչութեան վայրէն կամ իր կրած քաղաքացիութեան կարգավիճակէն: Ան իրաւունք ունի կրելու հայկական մէկ քաղաքացիութիւն, որն է 19 Յունուար 1920-ին միջազգային ճանաչում ստացած Հայաստան -Միացեալ- Պետութեան քաղաքացիութիւնը, անկախ թէ այդ պետութեան որոշ տարածքներ ներկայ պահին ժամանակաւորապէս գրաւեալ տարածքներ են:
5. Հայկական մշակոյթը ամբողջական մէկ մշակոյթ է, կերտուած հազարամեակներու ընթացքին: Հայկական մշակոյթի հիմնաքարն է իր մայրենի լեզուն, իսկ անոր սիւներն են հայկական ասանդոյթները, արժեքային համակարգը, հոգեւոր եւ մտաւոր ժառանգութիւնները, ճարտարապետութիւնն ու արուեստը, իր գիտութիւնն ու աշխարհով մէկ տարածուած անոր մարդանպաստ պտուղները, եւ վերջապէս իր մարդկային առաքելութիւնը, որպէս մարդկային կեանքին հաւասարակշռութիւն բերող գործօն:
6. Հայ ազգը ունի հաւաքական մէկ ձգտում՝ Վերականգնել իր հայրենիքի հողային ամբողջականութիւնը, զայն պաշտպանել եւ զարգացնել՝ աչքին առջեւ ունենալով մէկ նպատակ՝ դառնալ միջազգային ընտանիքի աշխոյժ եւ կառուցողական ներդրումներով օժտուած անփոխարինելի անդամ մը:
7. Հայոց եկեղեցին ազգային կառոյց մըն է, որ մեր պատմութեան ընթացքին ունեցած է առանցքային դերակատարում՝ պահպանելով մեր ազգային ամբողջականութիւնը, պատմական այն պահերուն, երբ մեր ամբողջականութեան այլ հիմքերը խոցուած կամ անգործ էին: Ան պէտք է վերամիացուի եւ ժամանակակից բարեփոխումներու ենթարկուի:
8. Հայ ազգի հայրենիքի հողային տարածքը այսօր ժամանակաւորապէս բաժնուած է իրաւական երեք տարբեր կարգավիճակներ ունեցող բաժիններու. Արեւելեան Հայաստանի հանրապետութեան տարածքները ազատ եւ ճանչցուած են, Արցախի տարածքը մասամբ ազատ է բայց իրաւական ճանաչում չէ ստացած, որպէս հայկական տարածք, իսկ վերջինը Միացեալ Հայաստան Պետութեան մնացած տարածքներն են՝ յատկապէս Արեւմտեան Հայաստանը, Նախիջեւանը, Ջաւախքը եւ այլ տարածքներ, որոնք ներկայ պահին գրաւեալ են բայց կը վայելեն միջազգային ճանաչում 19 Յունուար 1920-էն ի վեր:
9. Արեւելեան Հայաստանի Հանրապետութեան անկախ եւ ՄԱԿ-ի անդամ ըլլալու հանգամանքը՝ ողջ հայ ազգին հպարտութիւն տուող քայլ մըն է՝ մեր ազգի ամբողջական անկախութեան եւ Հայկական լեռնաշխարհի հողային ամբողջականութիւնը իրականացնելու ճանապարհին վրայ: Արեւելահայաստանի իրաւական այս իւրայատկութիւնը սակայն երբեք չի նշանակեր որ ան իրաւական, քաղաքական եւ նոյնիսկ բարոյական որեւէ լիազօրութիւն կամ իրաւունք ունի ներկայացնելու ողջ հայ ազգի կամքն ու ձգտումները, կամ որոշելու հայկական այլ հատուածի մը հողային եւ իրաւաքաղաքական այլ իրաւունքներու ձեւակազմը:



10. Հայկական բոլոր գրաւեալ տարածքներու ազատագրումը իւրաքանչիւր հայու պարտաւորութիւնն ու պատասխանատուութիւնն է, իւրաքանչիւրը իր կարողութեան եւ իրաւական սահմաններուն մէջ:
11. Մինչեւ հայ ազգի բոլոր բաղադրիչներու հիմնախնդիրներուն արդար եւ վերջնական լուծումներու հասնիլը, մանաւանդ մինչեւ գրաւեալ հողերու լրիւ ազատագրումը, որեւէ պատրուակի տակ, հայկական որեւէ կողմի հաշտութիւնը հայկական հող գրաւող որեւէ կողմի մը հետ՝ համարժէք է ազգային դաւաճանութեան եւ կը խորտակէ մեր ազգի ամբողջականութիւնը:
12. Իրաւականօրէն տարբեր կարգավիճակի Հայկական երեք բաղադրիչներու խնդիրներու լուծման միակ ճշմարիտ ճանապարհը կ'ընթանայ միասնականութեան ուղիով: Այդ ուղին կը ծրագրուի միասնական համաձայնութեամբ եւ համապատասխան դերաբաշխութեամբ: Այս գործընթացը ունի սրբազան եւ անխախտելի երեք պայմաններ:

Խնդիրներու լուծումներ գտնել.

- ա. Ոչ մէկը միւսին հաշուին,
- բ. Ոչ անջատ միւս խնդիրներէն,
- գ. Առանց առաջնահերթութիւններու:

13. Հայ ազգի վերջնական նպատակն է՝ ապրիլ վերամիացուած հայոց ամբողջական հողին վրայ: Հետեւաբար, սոյն ազգային հայեցակարգը կրնայ հիմք հանդիսանալ համազգային համապարփակ հայեցակարգի մը մշակումին:
14. Գործնական գետնի վրայ, թէ Արեւմտահայութեան եւ թէ Արեւելահայութեան որդեգրած բոլոր քաղաքականութիւնները փաստօրէն ձախող դուրս եկան. թէ Արեւելահայաստանի պետականութեան լիարժէք կայացման, թէ Արցախի հողի պաշտպանման եւ իրաւական կարգավիճակի ձեռք բերման, եւ մանաւանդ, Արեւմտահայաստանի հողային պահանջատիրութեան հարցերով: Հետեւաբար, անոնք ենթակայ են արմատական վերատեսութեան: Այսքան ձախողութիւններէ յետոյ նոյն ոճով մեր ազգային հարցերը վարելը անարտօնելի եւ խստօրէն դատապարտելի է:
15. Հայ ազգը ունի մէկ հիմնախնդիր. 'Գոյատեւել եւ բարգաւաճիլ', մնացած բոլոր հատուածային եւ մասնակի խնդիրները կը նկատուին, որպէս ենթախնդիրներ: Հետեւաբար բոլոր ենթախնդիրներու լուծումները պէտք է տեղաւորուին ազգային համապարփակ հիմնախնդրի լուծումին մէջ:
16. Մինչեւ Միասնական ազատ եւ անկախ Հայաստան Պետութեան իրականացումը, Արեւմտահայութիւնը պարտաւոր է պաշտպանել իր ինքնութիւնը որպէս Արեւմտահայ, ըլլայ ան տարագրեալ կամ գրաւեալ հողերուն կառչած: Ան իր ինքնութեան պահպանումի նպատակով պարտաւոր է դիմել միջազգային իրաւական բոլոր հնարաւորութիւններուն: Պարտաւոր է նաեւ ունենալ իր ինքնուրոյն հիմք, դրօշն ու կերպարը, մէկ կողմէն՝ Արեւմտահայ սերունդներուն գիտակցութեան մէջ ողջ պահելու համար իր ինքնութիւնն ու անոր թելադրած պատասխանատուութիւնը, իսկ միւս կողմէ՝ ալ, իրաւաքաղաքական խառնաշփոթութեան չմատնելու համար զանոնք:
17. Արեւելեան Հայաստանի հանրապետութիւնը, ակամայ ժխտական շատ մեծ դեր ունեցաւ Արեւմտահայութեան մէջ՝ նման խառնաշփոթութիւն տարածելու հարցով:



Նախ ինքզինք անուանելով 'Հայաստանի Հանրապետութիւն' փոխանակ 'Արեւելեան Հայաստանի Հանրապետութիւն' կոչուելու, ապա ստեղծելով 'Սփիւռքի նախարարութիւն' մը, որ փոխանակ զբաղելու ինքնակամ կերպով Արեւելահայաստանէն արտագաղթած իր քաղաքացիներու խնդիրներով, ան աւելի կեդրոնացաւ տարագիր Արեւմտահայութեան համայնքներուն վրայ, օգտուելով՝ Արեւելահայաստանին նկատմամբ անոնց տածած սիրոյ ու յարգանքի զգացումներէն: Այս ազգակործան խառնաշփոթութեան վերջ պետք է տալ, որու համար Արեւելահայաստանը շատ բան ունի ընելիք:

Անշուշտ այս կէտերուն շուրջ քննարկում տեղի պիտի ունենայ եւ հաստատուելիք հայեցակարգը պիտի դառնայ աղբիւրը Ազգային Խորհուրդի աշխատանքին: Հայեցակարգի պատրաստութեան մէջ մեծ դեր ունեցան մեր պատմական դէպքերը, թոյլ տրուած սխալները եւ Հայաստանի Հանրապետութիւն-Տարագիր Արեւմտահայութիւն յարաբերութեան մէջ կարգ մը թոյլ տրուած սխալներ, որոնց ուղղումով մենք պիտի յառաջանանք: Արցախ տակաւին գրաւուած չէր այս հայեցակարգի պատրաստութեան ժամանակ: Մեր ազգը մէկ է, միայն քաղաքական կարգավիճակն է որ մեզ կը բաժնէ անկախի, գրաւեալ հողի բնակիչի եւ տարագիրի միջեւ:

Ներկայիս ժամանակն է որ ըլլանք աչալուրջ ու չվարենք շրջանի մեր դրացիները նեղացնող ու ապակայունացում բերող քաղաքականութիւն: Աշխարհ ականատես կը դառնայ մեծ բախումի մը տնտեսական պատճառներով: Մենք չդառնանք գործիք օտարին ձեռքը, ալ մնանք կայունացում ու հաւասարակշռութիւն պահող շրջանային գործօն, վարելով հայակեդրոն քաղաքականութիւն, որու հիմն է մեր իրաւունքի պաշտպանութիւնը յենելով ազգային շահի վրայ հիմնուած քաղաքականութեան վրայ: Ազգային հայեցակարգի մը հաստատումը դրական գործօն է ու կը միացնէ ժողովուրդը յստակ ծրագիրի մը շուրջ, որու հիմն է ազգայինը եւ ազգին ծառայութիւնը, նկատի ունենալով շրջանային գործօններ:

Վիզէն Թոսունեան

Աղբիւրներ՝ 1.Արեւմտահայութեան Ազգային Գերագոյն Խորհուրդի հիմնադիր մարմինի Ազգային Հայեցակարգի նախագիծ

2.Արեւմտեան Հայաստանի Ռազամավարական Հետազօտութեանց Կեդրոն, Երեւան

ՊԱՏՈՒՀԱՍՈՒԹԻՒՆԵՐ՝ ՆԵՐՔԻՆ ԲՈՎԵՐԸՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ՀՈՎԵՐԸՆ (ՌՈՒԲԸՆ ՎԱՐԴԱՆԵԱՆՆԵՐԸ ՎԿԱՅԱԿՈՉԵԼՈՎ)

Պարոյր Յ. Աղպաշեան



Ցաւալի, տժգոյն ու տխուր օրեր կ'ապրի հայութիւնը, ի տես այն անկումներուն եւ վայրէջքներուն, որոնք համարեա ամենօրեայ դրութեամբ եւ յաջորդականութեամբ, կը յայտնուին հայկական հորիզոններուն վրայ:

Ոչ միայն զարմանալի, այլեւ գուժելի են այդ գահավիժումները, այնքան ատեն, որ անոնք կը շարունակուին ու կը բազմանան, առանց դոյզն գապուածութեան ու զգաստութեան,

ընդհակառակը, միշտ վերանորոգուելով ու վերարտադրուելով, ամենէն վայրագ, բուռն ու սուարդի հետեւանքներով:

Ուրախալի ու հպարտանալի իրագործումներով սոգորուած եւ արտայայտուած հայութեան պանծանքներէն, որպէս պետականութիւն ու հաւաքականութիւն, համախմբուածութիւն եւ ամբողջութիւն, արդեօք ի՞նչ մնացած է, որ կ'արդարացնէ անոնց գոյութիւնը:

Ո՞ր պէտք է փնտոել «շան գլուխ»ը կամ ինչո՞վ պէտք է բացատրել խաւարամտութիւնը եւ կամ՝ ինչո՞ւ պէտք է խրուիլ անորոշութեան մէջ ու վերածուիլ... «կաւէ արձաններու» (Յակոբ Օշական):

Ի՞նչ բանն է, որ կը մղէ (ու մղեց) հայութեան յայտնուելու խելակորոյս թաւալքի մը մէջ, ուր, շատ յաճախ, ամէն շարժում ու հոլովոյթ կը վերածուի անիմաստ գունդի, անտեղի մարմինի կամ անյարիր ճակատագիրի:

Վերջին հաշուով, հարց է թէ՞ ոչ, հայութիւնը իր երագած անկախութեամբ ու պետութեամբ, իր տիրացած ազատութեամբ ու գերիշխանութեամբ, ինչո՞ւ կ'ապրի անճրկում մը, հիասթափում մը, վարանում մը, երբ կը հետեւի հայրենիքին մէջ բազմացուող անհարթութիւններուն եւ անկայունութիւններուն, մինչ Սփիւռքը կը տատանի շուարումի, շփոթումի եւ այլայլումի յորձանուտներուն մէջ:

Անշուշտ, բաղդատութեան եզրերը չեն կրնար նոյնանալ ու համեմատուիլ, երբ կը խօսուի հայրենի իրականութեան մասին, կամ կը յիշատակուի Սփիւռքի գոյութեան կարգը, որովհետեւ, ոչ մէկը, ոչ ալ միւսը, կ'ամբողջացնեն զիրար, բացի հոգեկան, արմատական ու պատմական աղբիւրներու կամրջումներէն, որոնք նաեւ հանդիսացան անոնց կենդանութեան երակներուն ապրեցնող լարերը:

Վստահաբար, ասոնք էին այն խարխիսները, որոնց հիմամբ, Հայաստանը ու Սփիւռքը (իմա՝ Արեւելահայութիւնը եւ Արեւմտահայութիւնը) ապրեցան մերձեցումի ու գօտեպնդումի նշանակելի ժամանակաշրջաններ, որոնք, եթէ նոյնիսկ անմիջական եւ յարատեւական չէին, բայց, անպայմանօրէն, ներքին առընչութիւններով եւ ազդեցութիւններով, պարտադրող եւ արդիւնաբերող գործօններ էին: Պատմութիւնը՝ վկայ՝:

Այդուհանդերձ, համաշխարհային ու միջազգային, շրջանային ու տարածքային պայմանները բարդ ու տարբեր ուրուագիծերու նշաններ ցոյց տուին, իրենց քաղաքական, աշխարհագրական, սահմանագծական, հակադրական ու մրցակցական տուեալներով, յայնժամ, ամէն ինչ նոր տարագումներով ու հիսուածքներով սկսաւ ձեւաւորուիլ, երբեմն անակնկալ դրուածքներով, երբեմն՝ դիւանագիտական, երբեմն՝ պատերազմական, երբեմն ալ՝ դաւադրական:



Պատահական չէր, որ Հայաստանը եւս, ուղղակիօրէն թէ անուղղակիօրէն, ինկաւ այդ առանցքներուն մէջ, սկիզբը, ճիշդ է, առանց արհինահեղութեան ու մարտավարութեան, սակայն, յետագայ ժամանակներուն, երբ անկախութիւնը իր կնիքը դրած էր, հետզհետէ, սկսան պարզուիլ այնպիսի մտահոգիչ իրականութիւններ, որոնք երբեք չէին կրնար մխիթարական ըլլալ, որովհետեւ, նոր պայմանները եւ եղելոյթները չէին արտօներ նման «հանգստացուցիչ» իրավիճակներու բացայայտման:

Հոս, կարելի է վերլուծել Հայաստանի Ա. Հանրապետութեան անկախութեան շրջանը (1918-1920), որ հակառակ իր գոյութեան, չկրցաւ (ու չէր ալ կրնար) յարատեւել, ի տես երկրին բազմակուտակ անելներուն, կարիքներուն ու տագնապներուն, որոնք ոչ միայն անկարելի կը դարձնէին իր գոյակերտութիւնն ու դերակատարութիւնը, այլեւ՝ խորապէս կը ցնցէին անոր անվտանգութեան եւ ապահովութեան երաշխիքները, ինչ որ, այլընտրանք չէր ձգեր բացի թողլքելու զայն, կամայ թէ ակամայօրէն, սպասելով նոր գալուստի մը աւետիսին, այն յոյսով եւ անկնկալութեամբ, որ այդ բաղձալի օրը պիտի գայ, որուն համար, մերթ Հայաստանը, մերթ Սփիւռքը, միշտ մնացին սպասողական վիճակի մը մէջ:

Այդ գալուստը եւ օրը, ահաւասիկ, ԱՅՍՕՐն է, բայց, ի՛նչ ծնունդով եւ երկունքով, ի՛նչ երթուղիով ու գոյերթով, ասոնք էին որ կը պահանջուէին առանց յուսահատութեան ու թերահաւատութեան, անոնց կառչելու վճռականութեամբ ու հաւատարմագրութեամբ:

Սակայն, երազը եւ իրականութիւնը ո՞րքանով զիրար կը լրացնեն կամ կը գոհացնեն, երբ չոր ու դառն ճշմարտութիւնները իրարու կը բախին, տեղի տալով աղէտներու, պտոթկումներու, բռնկումներու, իրենց ամենէն դաժան եւ անորոշ հետքերով:

Գ. Հանրապետութիւնը, առանց զգացական ըլլալու կամ ձեւացնելու, իր ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՀՌԶԱԿՈՒՄԷՆ ԶԱՏ, Ո՞Վ ԿՐՆԱՅ չհամաձայնիլ, որ ան՝ հոգեծաւալ բերկրութենէն եւ սրտաբուխ յոյզերէն բացի, չէր կրնար լիովի եւ ԱՄԲՈՂԶԱԿԱՆ բաւարարութիւն տալ, հետեւաբար, ուրիշ ի՛նչ տուաւ հայութեան:

Երեք ԳՈՐԾՈՂ նախագահներ, որոնցմէ երկուքը՝ դարաբաղցի, կրցա՞ն դառնալ նախագահութեան արժանատրներ, ի վիճակի եղա՞ն Հայաստանը եւ Արցախը պահելու անառիկ, ո՞րքանով արդարացուցիւ իրենց վրայ դրուած վստահութեան կոչումները, ո՞ր յաջողեցան եւ ինչո՞ւ այլափոխուեցան:

Ո՞վ պէտք է պատասխանէ այս եւ նման հազարաւոր հարցումներուն, մանաւանդ երբ՝ նախորդ նախագահներուն եկաւ «յաջորդելու» վարչապետացու մը, որ մեծ «ուռա»ներով դիմաւորուեցաւ եւ ընդունուեցաւ, բայց, օրինակները ցոյց տուին, որ՝ մեղմ ըսած, անհրապոյր նախագահները, շատ բաներ ըրին, բայց, շատ բաներ ալ ստուերեցին ճզմեցին, ապականեցին ու լլկեցին, որոնց վկայութիւնն ու հաստատումը մենք չէ որ կու տանք, քանի ստոնք կան ու կը հնչեն ամէնուրեք, ահագանգային դորդիւններով ու թնդիւններով:

Մենք պիտի չուզենք մխրճուիլ կամ խառնուիլ այն խառնաշփոթին մէջ, որ կը պատէ հայութիւնը, իր ներքին թէ արտաքին ազդակներով, բայց, միթէ՞ կարելի է խուլ «թմբուկ»ներով, լուռ կամ անխօս մնալ, երբ հայրենիքը կը պատուհասի, տեղ մը արտաքին բովերէն, բայց, տեղ մըն ալ, ներքին... հովերէն:

Հաւատալու կամ չհաւատալու համար այս մագլցումներուն, ներհայաստանեան բեւեռներուն իսկ վկայութեամբ, արդեօք ո՞րքանով ընդունելի ու հանդուրժելի է, որ Հայաստանի իշխանութիւնները, մէկ կողմէն, իսկ ընդդիմախօսները՝ միւս կողմէն, տակաւին կը համարձակին ու կը յաւակնին բարբառել հայրենապահպանումի ու հայաստանակերտումի լոգունգներով:

Ինչպէ՞ս կ'ըլլայ, որ՝ ոմանք տակաւին կը փորձեն հայրենիքը գործածել որպէս վահան, իրենց շիլ ու սին հաշիւները գրաւի դնելով, ա՛յն հայրենիքի հաշույն, որ եղած է, առնուազն, յետ եղեռնեան անդով ամբոցներէն եւ ամրակուռ բերդերէն:



Ինչո՞ւ այս մուտքը եւ ակնարկը, պիտի մտածուի ոմանց կողմէ:

Իրաւունք կայ, որովհետեւ, հայութեան հոգերը, մտատանջութիւնները, պարտաւորութիւնները, յանձնառութիւնները, պահանջատիրութիւնները այնքան այլազան ու խայտաբղետ են, որոնց կողքէն կարելի չէ անցնիլ հարեւանցիօրէն եւ յատկապէս՝ յապաղումներով:

Իսկ այդ խառնիճադանճին մէջ, կը կարծենք ու համոզուած ենք, որ ամենէն ԷԱԿԱՆԸ, ՃԱԿԱՍՏԱԳՐԱԿԱՆԸ ու ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ՝ Պաքուի մէջ արգելափակուած, պատանդուած, զերեվարուած հայ պատասխանատուներն եւ աւագանիներն են, իւրաքանչիւրը՝ իր դիրքով, պատասխանատուութեամբ, առաջնորդութեամբ ու ղեկավարութեամբ:

Անշուշտ, մենք կ'անգիտանանք,՝ որ անոնցմէ ոմանք ի՞նչ յանցագործութեամբ, պատժելիութեամբ, ամբաստանութեամբ ու քրէականութեամբ Պաքու տարուած են (եւ ինչպէ՞ս, ի՞նչ պարագաներու տակ), սակայն, յստակօրէն կարելի է հաստատել, որ անոնք շինծու հակամարտութեանց, կեղծ դրածոյութեանց եւ անպարկեշտ բռնաբարութեանց կապանքակիրներու զոհեր են:

Այս ֆոնին վրայ դիտելով նման հակամարդկային, ստրկատիրական ու ստորնացուցական վերաբերմունք ու կողմնորոշում հայ պետական գործիչներու նկատմամբ, ոչ միայն աններելի եւ անընդունելի են, այլեւ՝ նոյնքան դատապարտելի ու քննադատելի, որ ոչինչով կ'արդարացնէ նման վերաբերմունք մը, համայն աշխարհին առջեւ, որ ինքզինք կը նկատէ արդարաբաշխ մը, արդարադատութեան բեղուն ջատագովութեամբ (՝):

Շուրջ երկու տարի եղաւ, որ ազերի վոհմակներ, իրենց օճախներէն պոկելով ու քարշ տալով Պաքուի մէջ պատանդ վերցուցին ու տակաւին կը պահեն Արցախի պետական-զինուորական աւագանիէն ութ ղեկավարներ, իբր անոնց նկատմամբ կան դաւաճանական-քրէական ամբաստանութիւններ, հետեւաբար պետք է դատուին եւ արժանանան համապատասխան դատավճիռներու:

Եթէ նոյնիսկ անոնցմէ ոմանք կը գտնուին նման դիտաւորութիւններու տակ, ո՞վ պիտի դատէ ազերի յելուզակները եւ ահաբեկիչները, ընդ հովանեաւ թիւ մէկ գիշատիչին, յանձինն Ատրպէյճանի (յ)նախագահին, որ ոչ միայն անոնց նկատմամբ մեծ արինարբու մըն է, այլ նաեւ Արցախը անիրաւօրէն զաւթելով ու շուրջ 120 հազար Արցախցի բռնահանելով:

Սակայն, այս պարագային ամենէն յուզիչը ու փշաքաղողը, ՌՈՒԲԷՆ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ պարագան է, որ ազգային-պետական մեծ հեղինակութիւն մըն է, պատկառելի ձեռներէց մը, յաջողած գործարար մը եւ անուանի բարերար մը, զինք շինծու պատրուակներով առեւանգելով եւ այժմ ալ անոր հետ դատաստանական յերիւրածոյ սաղրանքներ կազմակերպելով, հոգեպէս, բարոյապէս ու ֆիզիքապէս հաշուեյարդար տեսնելով անոր հետ:

Յիշեցնենք որ՝ Վարդանեան ռուսական քաղաքացիութիւն ուներ, Ռուսիոյ մէջ արժանի յարգարժանութիւն կը վայելէր, ինչպէս նաեւ՝ Ամերիկայի եւ Եւրոպայի մէջ, սակայն, հրաժարելով այդ բարիքներէն եւ առաւելութիւններէն, վերադարձաւ Արցախ, իր ժողովուրդին հետ ըլլալ, դիմագրաւելու արտաքին մարտահրաւերները, յանուն արդարութեան, հայրենասիրութեան, հողապահպանութեան եւ ժողովրդասիրութեան:

Ի դէմս այս խեղկատակութիւններուն, ապօրինութիւններուն, ծաղրածութիւններուն ու «վանտալիզմ»ին, ի՞նչ ըրաւ հայութիւնը, իր պետականութեամբ, աշխարհակալութեամբ ու հանդիսատեսութեամբ, երբ Վարդանեան էր նաեւ աննման բարեգործ մը, աշխարհի ամենէն մեծ եւ երկար ճոպանուղին սարքելով Հայաստանի մէջ, իսկ իր բարերարութիւնները, մարդասիրական հիմնադրամներու եւ ազգային կառոյցներու հաստատումով, բացառիկ եւ իւրայատուկ նշանակութիւն մը կը կազմեն, համաշխարհային սակարանին մէջ:



Վերջերս, «ուշացած բայց ոչ-ուշ» նախաձեռնութիւններ կը լսուին, յանուն պատանդներուն ազատագրման եւ ի մասնաւորի Վարդանեանը փրկելու ազերիական թունաւոր ճիրաններէն:

Սակայն, անտանելին այն է, որ այդ փորձերը ինչպէ՞ս կրնան նպաստել Վարդանեանի նման մեծութեան մը, որ մինակը կը պայքարի իր դահիճներուն դէմ:

Ո՞ր է հայութեան վարկը, արժանապատուութիւնը, փրկելու զինք, գործնապէս զօրակցելու անոր անմեղութեան հռչակումին, ոչ թէ միայն անհատական ու սոսկական միջամութիւններով, դիմումնագիրներով եւ յայտարարութիւններով, այլ՝ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ, ՀԱՄԱՀԱԻԱՔԱԿԱՆ եւ ՀԱՄԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ մասնակցութիւններով, ուր հայրենի պետութիւնը գրաւէ առաջնակարգ դիրք իր ժողովուրդով ու Մփիւռքի ողջ հայութեամբ:

Եթէ այս ալ պիտի զլացուի ու տակաւին պիտի շարունակուին ներքին գզուրոտոցներն ու զժողովուրդները, անհամաձայնութիւններն ու անմիաբանութիւնները, ո՞վ տէր պիտի դառնայ ժողովուրդին անաչառ իրաւունքներու պաշտպանութեան եւ անոր ինքնիշխան արժանապատուութեան փրկութեան:

Վերջերս, տակաւին ականջալուր եղանք կարգ մը հայրենական խժալուր սպրդանքներու, որոնք Վարդանեանին դէմ վարկաբեկող եւ անուանարկելի «դրուագ»ներ ու «հեքիաթ»ներ սկսած են տարածել, ստայօդ եւ առասպելախառն ակնարկութիւններով, փորձերով անշքացնել ու նուաստացնել անոր անունն ու կոչումը:

Ահաւասիկ անհաշտելի բռնագբօսիկութիւն մը, որ կը մրոտէ ու կը խեղաթիւրէ ամէն սրբութիւն ու նուիրականութիւն, որ առընչուած է հայ ժողովուրդի գերբնականութեան եւ արժանահաւատութեան հետ, այդպիսիներ ըլլալով վնասակար ցեցեր ու բորենիներ, շատ աւելի վատ քան ազերի-թուրքերը:

Պէտք է, արագօրէն ու հապճեպօրէն շարժիլ, լուրջ զգաստութեամբ, անշեղ գիտակցութեամբ ու պայծառ թափանցիկութեամբ, դուրս գալու մթամպած ոլորապտոյտներէն ու մաշեցնող որոգայթներէն, առաջին հերթին, Վարդանեանին թղթածրարին պաշտպան կանգնելով:

Այլապէս ալ, այս եւ այլ բազում հիմնախնդիրներու անլուծելիութիւնները, իսկական քառսներու դռներ եւս պիտի բանան:

(Պէյրութ)

«Պրպտելու ու Կշռելու Հետքերով» Շարքէն:

13/3/2025



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓԻՒՌՔ ՊԷՏՔ Է ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԻ



Վերջին տարիներուն ակնյայտ դարձած է որ սփիւռքը կը կորսնցնէ իր փայլքը, արդիւնաւէտութիւնը: Առանց հօր, միասնական եւ նպատակասլաց սփիւռքի, Հայաստանը եւ ամբողջ հայութիւնը անորոշ ապագայի առջեւ կը կանգնի:

Գլխաւոր Հարցը՝ Ներքին Քաղաքականութիւն եւ Բաժանում

Հայկական սփիւռքի կազմակերպութիւններու ամէնամեծ խոչընդոտներէն մէկը ապիկար եւ անարդիւնաւէտ ղեկավարութիւնն է: Ինչո՞ւ: Որովհետեւ շատ յաճախ այս կազմակերպութիւններու ղեկավարները արելի շատ մտահոգ են ներքին քաղաքականութիւնով, իշխանութեան եւ աթոռի համար պայքարով եւ երբեմն թշնամութեան հասնող մրցակցութեամբ, քան թէ իրենց հիմնական առաքելութեամբ՝ հայ ժողովուրդին ծառայելով եւ ազգը հզօրացնելով:

Փոխանակ համագործակցելու, հայկական բազմաթիւ հաստատութիւններ առանձին կը գործեն՝ չուզելով համախմբել իրենց միջոցները, գիտելիքը կամ ազդեցութիւնը: Անձնական ամբարտաւանութիւնը եւ քաղաքական հակամարտութիւնները արհեստական պառակտումներ ստեղծած են, որոնք մեզ թուլացուցած են այն ժամանակ, երբ միասնութիւնը ամէնաանհրաժեշտն է:

Հայաստանը լուրջ մարտահրաւերներու առջեւ կը գտնուի՝ անվտանգութեան սպառնալիք, տնտեսական դժուարութիւններ, արտագաղթ եւ մշակութային կորուստ: Սակայն, հոն ալ, այն կազմակերպութիւնները, եկեղեցին, կառավարութիւնը, որոնք պէտք է զօրավիզ կանգնին եւ լուծումներ գտնեն, շատ յաճախ կը զբաղուին բիրոկրատական անարդիւնաւէտութեամբ, հնացած մտածելակերպով եւ ներքին հակամարտութիւններով, որոնք կը խոչընդոտեն բուն գործը:

Ի՞նչ Պէտք է Ընել

Հայկական Սփիւռքը վերականգնելու համար անհրաժեշտ է արմատական փոփոխութիւն: Ահա այն քայլերը, որոնք պէտք է առնուին.

1. Միասնութիւնը Պէտք է Դնել Առաջնահերթութեան Վրայ

Սփիւռքը պէտք է գիտակցի որ ներքին բաժանումները միայն մէկ նպատակի կը ծառայեն՝ մեր հաւաքական ուժը թուլացնել: Անկախ անկէ թէ ուր կը գործենք, այդ ըլլայ մշակութային, քաղաքական կամ մարդասիրական բնագաւառի մէջ, հայկական



կազմակերպութիւնները պէտք է համագործակցին, ոչ թէ մրցին: Պէտք է սորվին Պետականութիւնը զատել Իշխանութիւնէն: Մեզի պէտք է մէկ միասնական տեսլական՝ Հայաստանի գոյատեւումն ու բարգաւաճումը առաջնահերթ համարելով, անձնական եւ քաղաքական շահերէն վեր:

2. Ռազմավարական Ղեկավարութիւն եւ Պատասխանատուութիւն

Սփիւռքի կազմակերպութիւններու ղեկավարները պէտք չէ, գրեթէ ցմահ, ղեկավարի պաշտօններուն վրայ մնան: Ընթացիկ ղեկավարութեան մօտեցումը, ուր նոյն մարդիկ տասնամեակներ շարունակ նոյն դիրքերը կը գրաւեն, պէտք է փոխարինուին թարմ, ռազմավարական եւ ապագայամետ մտածողութեամբ: Նոր ղեկավարները պէտք է ընտրուին ըստ իրենց կարողութիւններու, տեսլականի եւ արդիւնաւէտութեան, ոչ թէ ըստ անձնական կապերու կամ արդէն ժամանակավրէպ դարձած անիմաստ եւ անտեղի բաժակաճառերու եւ կեղծիքի:

3. Ներդրում Հայաստանի Ապագային Մէջ

Սփիւռքը պէտք է կեդրոնանայ իրական, երկարաժամկետ ներդրումներու վրայ Հայաստանի մէջ՝ կրթութեան, արհեստագիտութեան, տնտեսութեան զարգացման եւ ազգային անվտանգութեան ոլորտներուն մէջ: Կարճաժամկետ բարեգործական ծրագիրները եւ խորհրդանշական նախաձեռնութիւնները բաւարար չեն: Մեզ պէտք են կայուն ծրագիրներ, որոնք կը ստեղծեն նոր աշխատատեղեր, կը զօրացնեն կրթութիւնը եւ կը զարգացնեն Հայաստանի ենթակառուցուածքները: Այսպիսով, Սփիւռքահայութեան գոյութեան իմաստ տալով:

4. Ժամանակակից Մօտեցում Մշակոյթի Պահպանման Համար

Լեզուն եւ մշակոյթը վտանգուած են, յատկապէս Արեւմտահայերէնը: Պահպանման մասին միայն խօսիլը բաւարար չէ: Ղեկավարութիւնը պէտք է միասնական եւ լրջօրէն պատրաստուած ծրագիրով ստեղծէ ժամանակակից միջոցներ՝ լեզուի ուսուցումը կենդանի պահելու համար: Օրինակ՝ առցանց դպրոցներ, mobile app-եր, սոցիալական ցանցերու բովանդակութիւն, սփիւռքահայ Արեւմտեան Հայերէն գրողներու քաջալերանք, եւ interactive ուսումնական հարթակներ պէտք է առաջնահերթութիւն դառնան՝ ապահովելու համար, որ հայ ինքնութիւնը յաջորդ սերունդներուն համար մնայ կենդանի:

5. Քաղաքական Նեցուկ Առանց Նախապայմանի

Հայկական Սփիւռքը ազդեցութիւն ունի բազմաթիւ երկիրներու մէջ: Փոխանակ բզկտուած ջանքեր գործադրելու, Սփիւռքը պէտք է ունենայ միասնական, արհեստավարժ lobbying-ի խումբեր, որոնք կ'աշխատին Հայաստանի շահերուն պաշտպանութեան վրայ միջազգային քաղաքականութեան մէջ: Սփիւռքը պէտք է առաջ մղէ այնպիսի քաղաքականութիւն, որ զօրավիճ կ'ըլլայ Հայաստանի ինքնիշխանութեան եւ անվտանգութեան, միաժամանակ հակազդելով հայութեան դէմ ուղղուած ապատեղեկատուութեան արշաւներուն: Նորէն՝ պէտք է սորվիլ զանազանել պետականութիւնը իշխանութենէն:

Գործելու Ժամանակն է

Եթէ Հայկական Սփիւռքը չվերակազմակերպուի, չվերանայի իր ռազմավարութիւնը եւ չկեդրոնանայ ազգային կարեւորագոյն հարցերուն վրայ, ան կը դառնայ անկարեւոր: Հայաստանը, Սփիւռքը, եւ Հայը, չեն կրնար գոյատեւել թոյլ Սփիւռքով: Աշխարհը կը փոխուի արագ կերպով, եւ մենք պէտք է յարմարինք, զարգացնենք 21-րդ դարու մտածելակերպ, որպէսզի դիմագրաւենք դարուս մարտահրաւերները:



Այս գրութիւնը կոչ մըն է գործնական քայլերու դիմելու՝ ոչ միայն ղեկավարներուն, այլև ամէն մէկ հայուն Սփիւռքի մէջ: Զօրակցի՛ր այն նախաձեռնութիւններուն, որոնք իսկապէս կը նպաստեն Հայաստանի եւ Սփիւռքի զարգացման: Հաշիւ պահանջէ՛: Մասնակցի՛ր արդիւնաւէտ ջանքերուն: Հայաստանի եւ ամբողջ հայութեան ապագան կախուած է մեր այսօրուայ քայլերէն:

Ժամանակն է, որ Հայկական Սփիւռքը կրկին ոտքի կանգնի՝ ոչ թէ որպէս առանձին խմբաւորումներ, այլ որպէս մէկ հզօր ուժ:

Յակոբ Յակոբեան

Ազգ 21

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՍԻՐԷ՛ ԱՆՇԱՀԱԽՆԴՐՈՒԹԵԱՄԲ

Լիւսի Տօթմէճեան, Երևան, 03 մարտ 2025

ԳԵՂԱՐԴ

**«Ինչքան էլ սո՛ւր սիրտս խոցեն արիւնաքամ վերքերը մեր,
Էլի՛ ես որք ու արնավառ իմ Հայաստան եա՛րն եմ սիրում»:**
Չարենց



Հայաստանի թէ Սփիւռքի մէջ ապրող իւրաքանչիւր հայ իր կեանքին մէջ անպայման ստրված կ'ըլլայ Եղիշէ Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծութիւնը: Այս քերթուածին մէջ շատ դիպուկ է վերոյիշեալ երկտողը, ուր կարմիր պոէտը իր Հայաստան եարը կը սիրէ հակառակ բոլոր արիւնաքամ վերքերուն:

Իսկ մենք որքանո՞վ կը սիրենք արդէն քանիերորդ անգամ արիւնաքամ եղած մեր հայրենիքը: Ի՞նչ են չափանիշերը Հայաստանը սիրելու: Ի՞նչ պէտք է ընէ կամ չընէ իր հայրենիքը սիրող անձը:

Հայրենիքը սիրողը չի կրնար գնայուն պետական պաշտօնեաները գերադասել մնայուն երկիր-պետութենէն:

Հայրենիքը սիրողը չի կրնար երկիր-պետութենէն ստացած անձնական շահերն ու օգուտները առաջնային համարել քան անսակարկելի եւ անզիջելի արժէքները՝ պետութեան անկախութիւնը եւ ինքնիշխանութիւնը:



Հայրենիքը սիրողը կ'ընէ իր կարողութեան եւ հնարաւորութեան սահմաններուն մէջ ամէն ինչ՝ անոր օգնելու համար, անկախ թէ ով է երկրին ղեկավարը, որովհետեւ շահողը երկիր-պետութիւնն է եւ ոչ թէ քանի մը տարուան համար անոր ղեկը ստանձնած պետական պաշտօնեան:

Հայրենիքը սիրողը կը ցանկայ տեսնել անոր դոյզն իսկ յաջողութիւնը եւ կ'ուրախանայ այդ յաջողութիւններով, մանաւանդ երբ անոր գովքը կատարուի օտարներու կողմէ: Բայցեւայնպէս հայրենիքը սիրողը շինիչ քննադատութիւն կը կատարէ սխալ կամ յոռի երեւոյթներուն դէմ: Շինիչ կը համարուի ա՛յն քննադատութիւնը, երբ քննադատողը վատին՝ վատ, լաւին՝ լաւ ըսել գիտէ, եւ ոչ թէ ամբողջ ներուժը կը դնէ խոշորացոյցով դիտելու անոր բացասական ղեկքերը եւ երեւոյթները, անտեսելով դրական իրադարձութիւններն ու յառաջդիմութիւնները: Այլապէս կատարածը պարզապէս կը գնահատուի որպէս ապակառուցողականութիւն եւ խանգարչութիւն:

Թերեւս այս մտածումներուս տեղ տուողը եղաւ հետեւեալ դրուագը. կարդացի հայ քաղաքական փորձագէտներէն մէկուն *Ֆէյսպուք*եան գրառումը, որ կը վերաբերէր վերջերս կայացած Միւնիխի Անվտանգութեան համաժողովի ընթացքին պատահած ղեկքի մը: Նիստերէն մէկուն բանախօսներէն մէկը եղած է ԱՄՆ-ի Ծերակոյտի յանձնաժողովի անդամ՝ Դեմոկրատական կուսակցութենէն, միւսը՝ մէկ այլ յանձնաժողովի նախագահ՝ Հանրապետական կուսակցութենէն: Երբ նիստը վարողը դեմոկրատին հարց ուղղած է ԱՄՆ-ի նախագահ Թրամփի խիստ վիճարկելի մէկ դիրքորոշման վերաբերեալ, ան խուսափած է Միւնիխի մէջ հակադարձել նախագահին: ԱՄՆ-ի մէջ ան անշուշտ պիտի հակադարձէր, ան ալ՝ հաւանաբար խստագոյնս, բայց ուրիշ պետութեան մէջ, իր երկրի ընտրուած նախագահը ան չէ ցեխարձակած:

Նոյնը ըսել Հայաստանի մասին՝ հնարաւոր չէ:

Վերջին տարիներուն, Հայաստանի Ազգային ժողովի պատգամաւորներ եւրոպական կառոյցներու նիստերուն բազմիցս բողոքեցին Հայաստանի իշխանութիւններէն եւ երկրին մէջ տիրող «հակաժողովրդավարութենէն»: Դժգոհանքի խօսքերուն համար այդ հարթակները ո՛չ յարմար տեղ էին, ո՛չ ալ ժամանակը՝ յարմար: Հայաստանի խորհրդարանին մէջ տեղի ունեցող երկկողմանի «կապիկութիւնները» բաւարար չեն կարծէք, անհրաժեշտ է վատաբանել ու խայտառակուիլ նաեւ օտար կառոյցներու նիստերու ընթացքի՞ն ալ...

Քանի՛ անգամ Հայաստանի ղեկավարութեան բարձրագոյն ներկայացուցիչին՝ օտար երկիր կատարած այցելութեան ընթացքին անոր ներկայութեան դէմ ընդվզողներ եղան: Ուղղուեցան կոչեր՝ ընդհանրապէս պոյքթելու անոր այցելութիւնը, նուաստացուցիչ ածականներ հնչեցին կամ գրուեցան այդ կոչերուն չհետեւող անձերու հասցէին: Կամ, օրինակ, օտար երկրի մէջ ձեռնարկի մը ներկայ ըլլալու եկած ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպանին մուտքը փորձեցին արգիլել: Բողոքները Հայաստանի մէջ թող ըլլան, անոնք ոչ արգիլուած են, ոչ ալ ճնշումներու ենթակայ, բայց օտար երկրի մէջ եւ օտարներուն դիմա՞ց: Մեր նախնիները իզուր չեն ըսած՝ «Մեր աղտոտ լաթերը օտարին դիմաց մի՛ փռէք»: Ի վերջոյ, քաղաքականութեան մէջ հաշուի կ'առնուի օրինական ձեւով ընտրուած ղեկավար

ըլլալու փաստը, մնացածը՝ քաղաքական արարքներ են լոկ:Կայ աւելի անհեթեթ երեւոյթը. ի՞նչ ըսել այն հայերուն, որոնք կը նեղանան հայրենադարձող կամ պարզապէս Հայաստան այցելող իրենց ազգակիցներէն, որովհետեւ անոնք իբր թէ կու գան «Նիկոլին Հայաստանը»: Ժողովուրդ, ՀՀ-ը ե՞րբ «Նիկոլին (Լեւոնին, Թորոսին, Մարկոսին, Կիրակոսին...) Հայաստանը» եղաւ, սա ե՞րբ ընդհանրապէս ինչ-որ մէկու մը պատկանեցաւ, սա մե՞ր, բոլորի՞նք Հայաստանն է, հայ ազգին բնօրրանն է, մեր լուսաւոր միակ ապագան: Բոլոր իշխանաւորներն ալ ուշ կամ կանուխ կը լքեն իրենց դիրքը եւ կ'արժանանան համապատասխան գնահատանքի:

Պետական այրերը երբեք կարելի չէ հաւասարեցնել նոյնինքն պետութեան հետ: Կարելի է ընդդիմադիր ըլլալ, ընդդիմախօս ըլլալ, քննադատել, բողոքել, դէմ ըլլալ իշխանութիւններուն, բայց Հայաստանի Հանրապետութեան ու պետականութեան դէմ խօսիլն ու գործելն ԱՆ-ԸՆ-ԴՈՒ-ՆԵԼԻ է:

Մեր Հայաստան-եարը սիրենք անշահասիրութեամբ եւ մեր ամբողջ ներուժը ուղղենք մեր պետութիւնն ու պետականութիւնը պահպանելու եւ ամրապնդելու եւ նպաստելու անոր յառաջիակացքին: Մեզմէ իւրաքանչիւրը պէտք է հասկնայ, որ սա նաեւ ի՞ր պետութիւնն է, ուստի զայն պէտք է դասէ ամէն բանէ վեր ու չընդունի որեւէ պատճառով զայն դնել զոհաբերութեան սեղանին:

ԹՐԱՍՓԸ, ԻՐ «ԹՐԷՅՆ»ՈՎ ԿԸ ՍՈՒՐԱՅ

ԱՌԱՆՑ ՀԱՇՈՒԱՐԿԵԼՈՒ ԱԶ ՈՒ ՁԱԽ

Պարոյր Յ. Աղպաշեան



Աշխարհի մեծամասնութիւնը անհամբեր էր հետեւելու Տոնալտ Թրամփի նախագահական ընտրութեան, անկէ ակնկալելով նորութիւններ, բարեկարգումներ, շէնութիւններ ու նուաճումներ, նաեւ՝ խաղաղասիրական, քաղաքական, արդիւնաբերական ու միջպետական մեծղի գործարքներ, յառաջդիմութիւններ եւ յարաբերութիւններ:

Անշուշտ, ամերիկացիներուն համար, արդար պահանջքներ են, իրենց կեանքը տեսնելու

բարելաւուած, կենցաղը՝ գոհացուցիչ, ապրուստը՝ բարեբեր եւ ընդհանրապէս ժամանակները՝ ձեռնտու, բարօք, ընդունելի ու տանելի յարմարութիւններով ու պատշաճութիւններով գոյատեւելու:

Ամերիկացիները կը յուսկնին իրենք գիրենք նկատելու բարձրագոյն կարգի հասարակութիւն ու բացառիկ շնորհներով օժտուած հաւաքականութիւններ, քանի կը պատկանին հզօր պետութեան մը քաղաքացիութեան ու կը կարծեն, թէ իրենք առանձնաշնորհեալ են, իրենց առաւելութիւններով, բարեմասնութիւններով եւ յատկանշութիւններով:



Թերեւս ասոնք են պատճառները, որ Ամերիկան աշխարհի հետ կը խօսի մեծամտութեամբ, կը յաւակնի ըլլալ ինքնայատկութիւն, կը ժպրհի ըլլալ գերապետականութեան անփոխարինելի ամբողջութիւն մը:

Թրամփին երկրորդ անգամ ըլլալով Սպիտակ Տուն մուտք գործելը, առաջին շրջանին, համեմատաբար, եղաւ համակերպելի, նախ ընտելանալու իր ժողովուրդին, ապա՝ շօշափելու անոր բազկերակը, հուսկ՝ ըստ այնմ վերաբերուելու անոր հետ:

Սակայն, երկրորդ ընտրութեան, որ արդէն սկսած է գործողութիւն, բազմաթիւ ծրագիրներ, օրինագիծեր, թղթածրարներ ու փաթեթներ կան, որոնք կը կարօտին համապատասխան տնօրինումներու ու լուծումներու ոչ միայն ներամերիկեան սահմաններէն ներս, այլեւ՝ արտամերիկեան:

Նախագահ Թրամփ աճապարանքի մէջ է, կարծես թէ հետամուտ է իր երկիրը փրկելու ու ինչայելու հաւանական ցնցումներէ եւ, ապա, առաջին հերթին իր ներքին հակառակորդները հաշուեյարդարի ենթարկելու, մանաւանդ անոնք, որոնք իր դէմ պայքարեցան ու դատական հարցեր յարուցանեցին, մինչեւ դատարանի դռները հասցնելով զինք:

Երկրորդ՝ նախագահ Թրամփ, մինչեւ իր նախագահ ընտրուիլը, աջ ու ահեակ խոստումներ բաշխեց, օգնութեան կարիք ունեցող երկիրներուն նեցուկ կանգնելու, առանց ճշդելու ինչպէ՞ս եւ ե՞րբ, այդ մասը մշուշի մէջ պահելով, նաեւ որոշ բարեացակամ վերաբերում ցուցաբերելով որոշ երկիրներու նկատմամբ, որոնք իրմէ աջակցութիւններ կ'ակնկալէին:

Այսօր, ան բազմած է նախագահական աթոռին վրայ, շրջապատուած՝ իր երբեմնի ու նորովի զինակիցներով ու գործակիցներով, անխնայ «հիաթերիա»ով վարուելով բոլոր անոնց հանդէպ, որոնց ԲԱՆ ՄԸ պիտի պարտադրէ կամ ՃՆՇՈՒՄ մը պիտի բանեցնէ:

Պարզ է, թէ շատերուն մօտ կայ նկատելի յուսախաբութիւն ու հիասթափութիւն, ի տես անոր շուտիկութիւններուն ու խաղքութիւններուն, աճապարարութիւններուն ու լարախաղացութիւններուն, տեղ մը փորձելով փափկանկատ ըլլալ, ուրիշ տեղ մը՝ խստաբարոյ:

Արդեօք այս դարձարձիկ քաղաքականութեամբ, ան պիտի կարենա՞յ սիրաշահիլ բոլոր անոնց, որոնք իր մէջ տեսած էին վստահելի (՞) փրկարար մը կամ դէմ յանդիման գտնուէին իսկական անկեղծ (՞) դեկավարի մը:

Արդէն իր դէմքին նայողը եւ անոր դիմագիծը նշմարողը, հեռուէն թէ մօտէն, աջէն թէ ձախէն, որքան ուշադիր ըլլայ, կը տեսնէ անոր մերթ անբնական ժպիտները, ու շարժումները, մերթ ալ՝ դերասանավարի պահուածքը ու կոպիտ արտայայտութիւնները, այն տպաւորութիւնը փորձելով ստանալ թէ ան սկզբունքի մարդ է, իր դրական թէ ժխտական բնաւորութիւններով:

Ինքնին սուր եւ անմիջական հարց է, որ զինք առաջադրող կուսակցութիւնը (կամ կողմը), երբ ականատես եղաւ այս նախագահին առաջին պաշտօնավարութեան, մեղմ ըսած, տարօրինակութիւններուն, իրենց անկայուն, անմշակ եւ անհարազատ շարժումներուն ու գործելակերպերուն, պահ մը չմտածեցի՞ն, որ ան երկրորդ անգամի մը համար «գահ» բարձրանալով, կրնայ նոյն արժեչափերով գործել, թէերեւս, ալ՝ աւելի շեշտելի վերիվայրումներով:

Կայ աւելի վտանգաւորը, երբ իր հետեւորդները եւ զօրակիցները խուժեցին Օերակոյտի կեդրոնատեղիին վրայ (ըստ իրեն, առանց իր գիտակցութեան ու հաւանութեան), ինչ որ Ամերիկայի նախագահական ու քաղաքական պատմութեան մէջ, յոյժ աննախընթաց էր: Այս (ան)չափանշութիւնը ո՞ր կարելի է գետեղել:

Ապա, ինչպէ՞ս կարելի է բացատրել, որ, օրին, Թրամփի դէմ, մեկէ աւելի դատավճիռներ արձակուեցան, աններելի գտնելով նման դատապարտելի արշաւավիժում մը:

Այդուհանդերձ, Թրամփ յամառօրէն եւ անարգելօրէն, շարունակեց իր «թիրախ»ը՝ դէպի Սպիտակ տան աթոռը, քաջ գիտնալով..., հոն հասնելու պարագային, համաձայն



ամերիկեան օրինագիրքին, նախագահ մը զերծ կը մնայ իր դէմ բարձրացուած որեւէ ամբաստանագիրէ, իսկ ինք համոզուած ըլլալով իր բացարձակ անմեղութեան եւ յաղթանակին, հասաւ իր նպատակին, որովհետեւ՝ գիտցաւ շահագործել, ամերիկեան դրութեամբ նման ընտրութեան մը յորձանուտին մէջ սուզուիլ ու խուսանալ, ոչ-քաջալերելի, բայց, ակնյայտօրէն դիրաբեկելի ԻՆՔՆԱՆՈՒԱՃՈՒՄ մը արձանագրել, ապա, արար-աշխարհին ցոյց տալ, ամերիկեան սահմանադրութեան «ճկունութիւն»ը, ընդհուպ՝ շնորհիւ իր անձնական ուժականութեան, հեղինակութեան, ժողովրդականութեան, հարստութեան եւ անարգելիութեան, զորս շահած էր, հասկնալի եւ անհասկնալի ճանապարհներով, որոնց մէջ իր անսահմանելի եւ անչափելի ԴՐԱՄԱԳԼՈՒԽը մեծ դեր ունեցած էր:

Բնական է, երբ կը խօսուի ամերիկեան նախագահական ընտրութեանց եւ անոնց թեկնածու նախագահներուն մասին, եթէ չհաշուենք անոնցմէ ոմանց «թոյլ ու խարխափում» IQ-ները, մեծ մասը նշանակելի եւ յիշատակելի պատմական անձնաւորութիւններ հանդիսացած էին, սակայն, սպաննուեցան (Աբրահամ Լինքոլն, Ճեյմս Տարֆիլտ, Ճոն Քենետի, Ուիլիըմ Մաքինլէյ), մինչ միւսներէն քիչեր, համեմատաբար, ընդունելի եւ յարգելի նախագահներ ճանչցուեցան, ինչպէս նախագահ Ռոնալտ Ռիկըն, որ, ի դէպ, իր նախագահական ելոյթին մէջ, Հայոց Ցեղասպանութիւնը յիշեց՝ 27 Ապրիլ 1981ին:

Այս թուումները, պարզապէս ցոյց տալու եւ արձանագրելու, որ Թրամփը, եթէ նախագահական առաւելութիւններ ու նկարագրագիծեր, ունակութիւններ ու շնորհալիութիւններ ունի, զանոնք արժեւորելու համար, միակ ընտրանքը պիտի ըլլայ անաչառ, արդարադատ եւ անկողմնակալ ուղիներուն սեփականացումը եւ որդեգրումը:

Սակայն, եթէ այսօրուան կողմնացոյցով ու կամ ցուցանիշով շարժինք ու տեսնենք թէ՛ Թրամփը ո՞ր հորիզոնականին վրայ կը գտնուի, ո՞ր կ'առաջնորդուի իր աշխարհաքաղաքական տիեզերանաւով եւ ինչպէ՞ս կը վերաբերի ժողովուրդներու ճակատագիրին, պետութիւններու գոյավիճակին ու մարդկութեան արժանապատուութեան հետ, մեր առջեւ կը ցցուին բազմաթիւ հարցադրումներ ու հարցականներ:

Այս պարագաներուն, ցարդ իր ելոյթներուն, որոշումներուն, հեռանկարներուն եւ յայտարարութիւններուն մէջ, տակաւին կարելի չեղաւ վարկանիշ բնորոշող եւ աւետող որեւէ նախաձեռնութեան հանդիպիլ:

Եթէ պիտի առարկուի, որ անիկա տակաւին նոր մեկնարկած է իր քառամեայ նախագահական ճանապարհորդութեան, ապա, ինչպէ՞ս կ'ըլլայ, որ շուրջ մէկ ամսուան ժամանակամիջոցի մը ընթացքին, ան բազմաշերտ ու լեռնակուտակ օրակարգերու շարաններով հանդէս կու գայ եւ, ի յառաջագունէ, ամէն տազնապի, խոտվքի, ճգնաժամի եւ առհասարակ միջոցառումի առիթով, արդէն իր դիրքորոշումը ճշդած կ'ըլլայ, իր կողմէ ընդունուած ու վաւերացուած բանաձեւեր հրապարակելով, աշխարհին ցուցադրելով իր ստորագրութեամբ ծանուցուող իրերայաջորդ թղթապանակներ:

Մեր կարծիքով, ասոնք անլրջութեան ու կարճատեսութեան, տափակութեան ու սոփեստութեան զաւեշտալի նմոյշներ են, մինչ ինք, մեծ գոհունակութեամբ կը ծափէ ի նպաստ իր... գիտերուն:

Ահաւասիկ, «ձայն մը հնչեց» հեռաւոր Ամերիկայէն, երբ Թրամփ, պետական-ժողովրդային գործ ու հոգ թողլքած, ՋՈՒՏ արաբական-պաղեստինեան հող՝ Կազան, կ'ուզէ յանձնել Իսրայէլի նման ԵԿՈՒՈՐ պետութեան մը եւ, ի՞նչ, թելադրելի գտնելով, որ պաղեստինցիները, տեղափոխուին... Եգիպտոս, Մէլուտական Արաբիա կամ այլուր:

(Եթէ հաւատանք լրատու աղբիւրներու (եւ ինչո՞ւ չհաւատանք), Կազայի ընդերքը ամբողջովին նաֆթ է, շուրջ 500 պիլիոն արժողութեամբ, որուն վրայ այք ունի Թրամփ, իսկ



Նաթանիահուն՝ Լիբանանի ծովեզերեայ ջուրերուն տակ գտնուող նաֆթը կը կարծէ իր սեփական (՝) իրաւունքն է:

Ո՛վ դարք, ո՛վ բարք):

Խնդրեմ, ինքզինք եւ Ամերիկան դէպի «Ոսկեդար» առաջնորդող նախագահ մը, որ այդ ժողովուրդին իրեն նմաններու բերած աղէտները, սպանդները, աւերները կարծես բաւարար չէին, զանոնք կ'ուզէ պոկել իրենց արմատներէն ու փոխադրել «մոխրադար» (կարծես ստիկա ալ ընդունող կա յ):

Մի՛ւս անտրամաբանական ու հապճեպային պոռոտախօսութիւնը. Քանատան գրաւել (որպէս 51րդ նահանգ), ապա, Մեքսիքան մեկուսացնել, իսկ Չինաստանն ալ՝ ծունկի բերել:

Անհերթէք բոնցքամարտութիւն թէ՛ անիմաստ մենամարտութիւն, նախագահի մը կողմէ, որ թառած է իր ճիւղին վրայ եւ կ'ուզէ զայն անձիտել, որ ի՛նչ, որո՛ւն վրայ իշխէ եւ ի՛նչ ապացուցէ:

Տակաւին պէ՛տք է խօսիլ բազմատասնեակ հազարաւոր ներգաղթողներու մասին, յատկապէս երրորդ աշխարհէն, Միջին Արեւելքէն, Արեւելեան Եւրոպայէն եւ յարակից այլ վայրերէ, որոնց տունդարձի կամ վերադարձի հրամաններ արձակած է (ընդ որուն՝ նաեւ հայաստանցիներէ), նկատի ունենալով որ անոնք մուտքի ու կեցութեան պաշտօնական արտօնագիրներ չունին, կամ ալ հերթագրուած են:

Ի միջի այլոց, կ'արժէ յիշել, որ Պրն. Թրամփի մայրը եղած է ներգաղթող, որուն երիտասարդութեան նկարը, մօր հետ, զետեղուած է դիմատետրին մէջ, հետեւաբար, ստիկա արդեօք բան մը կ'ըսէ իրեն, թէ՛ պէտք է հարցնել... բնիկ «կարմիր հնդիկ»ներուն:

Պրն. Թրամփը, իր բազմագրոյցներուն եւ ասեկոսէներուն մէջ, նաեւ խօսած է Հայաստան-Ատրպէյճան փոխյարաբերութեան եւ Լիբանանի կացութեան մասին, այդ ուղղութեամբ, առանց ճշդելու, սակայն, օգտակար դառնալու պատրաստակամութեան մասին:

Չենք գիտեր (բայց, ո՛վ ըսաւ որ չենք գիտեր), թէ ան ինչպէ՛ս կը պատկերացնէ այս «թնճուկային» երկիրներուն ԱՐԴԱՐ լուծումներ գտնել, երբ իր արտօնութիւնը պէտք է առնէ... Իսրայէլէն, թէկուզէւ Ատրպէյճանէն (Թուրքիայէն):

Աւելի հրատապը եւ հրամայականը. Պրն. Թրամփ, Դուք որ աջ ու ձախ կը փչէք, պահ մը կրնա՞ք սթափիլ ու Ատրպէյճանին պարտադրել, իր մօտ, ԱՊՕՐԻՆԱԲԱՐ պահ դրուած հայ «գերի»ները ընդհուպ ազատ արձակել, թէ ոչ եղածը, Ձեր կողմէ պարզ ու դժիսեմ հերթական «պըլըֆ» մըն է:

Պրն. Թրամփը, մանաւանդ այս հանգրուանին երբեք ՉՄՈՌՆԱՅ, որ Ամերիկայի մէջ կայ հսկայ աւանդով մեծաթիւ ամերիկահայութիւն մը, իր գործունեայ աշխատասիրութեամբ եւ յաջող արդիւնաբերութեամբ, որուն նկատմամբ կարելի չէ անտարբերութեամբ ու մանրադիտականութեամբ անցնիլ, հետեւաբար, անհրաժեշտ ուշադրութեամբ ու բժախնդրութեամբ անոր հետ վերաբերուիլը, կը մնայ հրամայականութիւնն մը, հո՛ն՝ ուր պահանջքը կամ կարիքը կ'ենթադրէ:

Ի վերջոյ, երբ Թրամփը կը տեսնենք ու կը դիտենք, կը նկարագրենք ու կը բնութագրենք, որքան ալ ոմանց համար փայփայելի ու գրաւելի, խոստմնալի ու համակրելի, իր տեսակաւոր պոռթկումները, խայտաբղէտ ուրուագիծերը եւ ինքնադրոշմ կարգաւորումներ, բան մը կը յուշէ՛ն, որ ԿՐԿՆՈՒՌՆԱԿ նախագահ մը, ո՛րքանով իր երկրին, մարդկութեան եւ դաշնակիցներուն կրնայ օգտակար դառնալ, երբ իր հոչակագիրներու, յայտագիրներու եւ որոշումներու ՍՏՈՐԱԳՐԱՄՈՒԹԵԱՄԲ, ՍՏՈՐԱԳՐԱՄԻՐՈՒԹԵԱՄԲ եւ ՍՏՈՐԱԳՐԱՄԷՏՈՒԹԵԱՄԲ... կը հիանայ, կ'ապրի ու կը փորձէ ապրեցնել, նաեւ երբեմն՝ մոլորեցնել:

(Պէյրութ)

Պրպտելու ու Կշռելու Հելքով Շարքէն:-----24/2/2025



ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՓՈՒՆՋ ՍԸ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ

ԵՐԳԻՍ

Քեզ հիւսեցի ես թե՛ լ ան թե՛ լ
Առաւօտեան մաքուր ցօղէն,
Երկնակապոյտ ժպիտներէն,
Տերեւներու թրթիռներէն...

Քու տողերուդ շաղախեցի
Համբոյրները շողին, սիւքին,
Գոլը սրտիս գորովագին,
Հէքը հոգւոյս տառապագին...

Ճաճանչ մը լոյս ցաթեց վրան
Հոգւոյս հաւատքէն մշտարծարծ,
Այգաբացէն լուսածորան,
Գիշերներէն աստղածորան...

Ու թե՛ վե՛րք կար սրտիս մէջ վառ,
Ընծայեցի սիրո՛յ խորան...
Ու թե՛ ցա՛ւ կար խոր թաքնուած,
Անոր տուի բո՛յժ, բալասա՛ն...

Տառապանքս սոսկ զիս այրեց,
Տողերուդ մէջ դարձաւ լոկ երգ,
Կըրակա՛ ներս, ճըրագս դուրս
Դարձաւ միայն սիրոյ մրմունջ,
Երախտիքի խօսք բերկրալի,
Աղօթք մը ի խորոց սրտի
Մարդ էակին ու տիեզերքին,
Անոնցմէ վեր՝ Արարիչին:

21/1/2020

.....

ԿԵԱՆՔ

Լոյսի, սիրոյ բաժակէդ
Ես ըմպեցի անյագո՛ւ ւրդ,
Թե՛րթ-թե՛րթ բացի հոգիս վէս
Ընծաներուդ սիրալո՛յս...

Ներէ, սակայն, անգին կեա՛նք,
Թէ երբեմն կոյր եղայ
Գեղածիծաղ գոյներուդ



Շոայլաբար շնորհուած,
Եւ ամպերը թախիծի
Գորշացուցին գոյնդ բիլ...

Ներէ եթէ խուլ եղայ
Մեղեդիիդ թրթռուն
Եւ լսեցի լոկ հառաչն
Հոգիի մը տանջակոծ,
Որ կը հեծէր ցաւագին
Տառապանքէն սարսռալից...

Լոյսդ էր շատ, թէ՞ մութդ,
Ո՞վ կրնայ զայն հաշուարկել,
Բայց երգեցի միշտ լոյսդ
Ամպ-թախիծէդ գերիվեր...

Խաւարը լոկ կարօտն էր
Ճաճանչներուդ արփագեդ,
Թախիծը սոսկ տենչանքն էր
Երջանկութեան լոյսին սեգ...
5/2/2022

.....

ՊԱՏԿԵՐԴ

Քարաստանիդ մէջ քնքուշ հոգի է,
Ապառաժներուդ՝ մամուռի լաց է,
Լեռնաշխարհիդ մէջ ոգեղէն սլացք է
Եւ Նարեկաբոյր լուսեղէն վանք է:

Մի բուռ հողիդ մէջ սիրտ մը կը տրոփէ
Եւ մաքուր խիղճ մը կը ցոլայ բիրտեդ,
Կարծես չարութիւն չես տեսեր երբեք
Եւ այդպէս բարի, ազնիւ մնացեր:

Քու տառապանքէդ ես լոյսեր քամեր,
Շիթ-շիթ արցունքէդ ինքնամաքրուեր
Ու կանգներ ես վեհ Արարատիդ պէս,
Աչքերուդ դիմաց լուսէ երազներ:

Այս պատկերդ է որ հետս եմ տարեր,
Հոգիս շաղախեր, սիրտս սնուցեր,
Անյազ կարօտով քեզ եմ որոներ
Լայն աշխարհի պիղծ ճամբաներուն մէջ:
16/2/2024

.....

ՔԱՆԻ ՍԸ ԲԱՌ



Մոռացութեան լուռ ավերէն
Քանի մը բառ ազատեցի,
Անոնց վրայ շունչ փչեցի
Եւ կեանք առին յանկարծօրէն...

Ժամանակի խոր անդունդէն
Թրթիռ մը լոյս բերի գիրիս,
Շողշողաց ան նշոյլով գէթ,
Խաւարին դէմ մոմ մը վտիտ...

Անէութեան խուլ վիհերէն
Շեշտեր բերի տուի բառիս,
Ան գրնգաց ու ղողանջեց
Զերթ մանկան ճիչ կենսափթիթ...

Գուրգուրացի բառիս վրայ,
Որ պսպղար մեկնումէս ետք,
Զերթ աստղալոյսն որ կը շողայ,
Երբ աստղն ի նքն է անէացեր...
18/10/2019

.....

ՊՈԷԶԻԱՅԻՄ

Ամէն տողիդ մէջ ցաւ մը կայ,
Տառապանքի հիւլէ մը կայ,
Կաթիլ մ'արցունք որ պսպղայ,
Շի'թ-շի'թ արեւ դեռ կը տենչայ,
Զերթ բալասան ու սպեղանի,
Իր վերքերուն դարման բուժիչ...

Ամէն տողիդ սիրոյ կայծ կայ
Որ հրավառի ու բոցկլտայ,
Միրոյ ճաճանչ բաշխէ առատ
Ու բաշխելով ան կը շատնայ,
Բաժակը բորբ ան կ'երկարէ
Բոլորին ալ անխտրօրէն...

Ամէն տողիդ երազ մը վառ
Կը ճառագէ միշտ շողափայլ,
Եւ կը դիպէ սիրտը, հոգին
Որ ան մոռնայ ցաւեր ու վիշտ,
Դեռ կը կառչի կեանքի լոյսին,
Դեռ հաւատայ մարդ էակին...
3/3/2023

.....

ՀԱՅ ՈԳԻԻՆ



Դուն հա՛յ ոգի, անապառ ես,
Չկայ սահման քու ժայթքումի՛ն,
Քու սլացքին, խոյացումին,
Քու թռիչքին սաւառնաթել...

Դուն ես աղբի՛ւրն մեր ներշնչման,
Դժուար պահին՝ տոկունութեան,
Դիմադրութեան հրայրքին անմար,
Որ հրավառի բոցի նման...

Մեր լեռներուն ոգի՛ն ես դուն
Քարայրներուն մէջ թաքնուած,
Որ յայտնուի անակնկալ
Թէ թշնամին մտնէ մեր տուն...


Հայ զինուորին մէջ կը տրոփես
Ձերթ արեան կանչ, պայքարի հեւք,
Ազատութեան բոց հրեղէն,
Ցեղին հրայրքը լուսեղէն...

Հայ մօր է՛րզն ես իր մարտիկին,
Որ պաշտպանէ սուրբ հողն անգին,
Թէկուզ ահեղ մարտին իյնայ՝
Հող հայրենին կրծքով գրկած...

Դուն հա՛յ ոգի, կ'ապրիս մեր մէջ,
Հոսքդ կու գայ բիր դարերէն,
Կ'երթայ դէպի նոր-նոր դարեր
Վարարումով մը հրաշագեղ:
15/3/2023

ԻՆՉՈ՞Ւ ՍԽԱԼ ԿՐ ԳՐԵՆՔ...

Յակոբ Չոլաքեան



Եկէք նայինք, թէ ի՛նչ են մեր գաղութին մէջ
ամենէն լայն տարածում ունեցող գրաւոր
խօսքի տեսակները, թէ ի՛նչ կը կարդանք մենք
գրեթէ ամէն օր, կը կարդանք ամենէն աւելի ու
երբեմն միայն այլ բնոյթի բաներ կարդալու
առիթ կ'ունենանք...

Մեր ակումբներու, դպրոցներու եւ
եկեղեցիներու, մեր հանրային ամէն տեսակ

հաստատութիւններու պատերէն կախուած յայտարարութիւնները, կոչերը, ազդերը,
ծանուցումները...

Մեզի դրկուած դասախօսական, երաժշտական, թատերական եւ զանազան-զարմանազան
ձեռնարկներու, միջոցառումներու ծանուցումը ընող թերթիկներն ու տոմսերը...



Հանդիսականներուն ձրիաբար տրամադրուող յայտագիրի գեղատիպ եւ ոչ նիհար գրքոյկները, ուր տեղ կը գտնեն անուանացանկեր, կազմակերպող միութեան, մասնաճիւղի, բեմադրիչի, խմբավարի, պարուսոյցի խօսքեր, հայերէն ու հայաստան գովազդներ...

Կը նայիս ոմանց վրայ. ամէն ինչ ակնահաճոյ. կոկիկ ձեւաւորում, ընտիր լեզու, անսխալ ուղղագրութիւն: Մէկ խօսքով՝ խնամք կը տեսնես, ու խնամքը քեզ կը պարտաւորեցնէ, որ մտածես այդ ձեռնարկին մասին, ուր հաւանաբար գտնես մեծ եռանդ, քրտնաջան աշխատանք ու յաջող իրագործում:

Ու յարգանքով կը մտածես, որ սփիւռքի մէջ մեր հանրութեան կատարուած ամէն դիմում, հրամցուած ամէն ելոյթ դպրոց մըն է ինքնուրոյն, երգչախումբը՝ դպրոց, թատրոնը՝ դպրոց, ակումբը՝ դպրոց, եկեղեցին՝ դպրոց, սա թերթիկները՝ դպրոց: Ամէն բանի մէջ թէ՛ աշակերտ ենք, թէ՛ ուսուցիչ, կը մտածենք եւ մտածելու կը մղենք մեր հանրութիւնը, կը յուզուինք ու կը յուզենք զայն, անտարբեր չենք եւ անտարբեր չենք ուզեր ձգել, մեր ազգային բոլոր արժէքներուն գիտակից ու հոգածու ենք, գիտակից ու հոգածու կ'ուզենք դարձնել: Մենք, բո՛լորս, օրինակելի խնամք ու բժախնդրութիւն կը ցուցաբերենք մեր պարտականութեան մէջ, որովհետեւ կը գիտակցինք:

Թէ մեզի վիճակուած գործին պատասխանատուութիւնը աւելի ծանր է, քան գործը՝ ի՛նքը:

Թէ կը հաւատանք մեր կատարած գործին կարելորութեան:

Թէ կը յարգենք մեր հանրութիւնը:

Բայց միշտ չէ եւ ամէն տեղ չէ, որ այդպէս ենք:

Միշտ չէ եւ ամէն տեղ չէ, որ մաքուր է հանրութեան հրամցուած մեր խօսքը: Բոլորը գիտեն այդ մասին, ու չեմ գիտեր, թէ ինչո՞ւ մարդիկ ներողամիտ կը նային գրաճանաչութեան տարրական կանոններուն դէմ իրենց իսկ կատարած վխտացող մեղանչումներուն վրայ, լեզուական խաթարումներուն եւ վերջապէս անխնամ այդ հրաւերներուն: Եւ ասիկա՝ ի հեճուկս մամուլի մէջ, բեմերէն ու, շատ հաւանաբար, նաեւ ժողովական կեանքին մէջ եղած նկատողութիւններուն: Հայերէն բառերը այնքան յաճախադէպ կերպով այլանդակ ձեւափոխութիւններու կ'ենթարկուին հոն, անօրինակ կերպով ի գիր կ'արձանանան, միով բանի կը սխալագրուին, կը սխալագրուին, կը սխալագրուին...

Ու կը մտածես, թէ ինչո՞ւ համար մեր հանրութեան ամէնէն լայն զանգուածներուն դիմում ընող այս նիւթերը ուղղագրական ու լեզուական տեսակէտէ ա՛յսքան խոցելի են, անփոյթ ու անխնամ...

Ըսե՛լ, որ վերոնշեալ հրատարակութիւններէն իւրաքանչիւրը շատ անգամ շատ աւելի մեծ տպաքանակ ունի քան մեր լաւագոյն գիրքերը, աւելի ընթերցող (աչք նետող)՝ քան անոնք...

Եւ հետեւա՞նքը...

Որ մենք պարզապէս կը քաջալերենք սխալագրութիւնը:

Իսկ ո՞վ է, ի՛նչն է մեղաւորը, որ այս մուրը կը քսէ մեր եռանդին եւ աշխատանքին. անգիտութիւնը, որ բացառուած է այսքան տարրական պարագաներու մէջ, վրիպո՞ւմը, որ դարձեալ բացառուած պէտք է ըլլայ այսքան խտութեամբ, ի՛նչն է, որ մեզ չի մղեր խստապահանջ ըլլալու մեզի հանդէպ, մենք մեզ քննութեան ենթարկելու, չի թելադրեր բառարան բանալ, ստուգում կատարել, թիւրն ու թերին իմանալ...

Այո՛, վստահաբար կայ բան մը, որ մեծագոյն ուսուցիչն է աշակերտին թէ ուսուցիչին, շարքային միութենականին թէ պատասխանատուին, գրողին թէ սրբագրողին...

Պատասխանատուութի՛ւնը գրաւոր խօսքի նկատմամբ:

Հաւա՛տքը մեր առօրեայ գործունէութեան վրայ:

Յարգա՛նքը մեր հանրութեան հանդէպ:

<http://www.kantsasar.com/news/54267-2/>

ՆՈՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՄ ՄԻՒՆԱԿԸ

« ՇԷՆ ՄՆԱՔ, ՊԱՅԾԱՌ ՄՆԱՔ...»



Այն օրերուն, քոյրս, եղբայրս եւ ես, ամեն Կիրակի առաւօտ մեր տունէն քալելով Գահիրէի Պէյն էլ Սուրէյն թաղի Սուրբ Աստուածածին եկեղեցին կ'երթայինք:

Հեռու չէր եկեղեցին : Բայց ճամբան շարա'ա էլ Կէշի մուտքէն քիչ մը անդին, կը շեղէինք մեր ուղղութիւնէն, կը մտնէինք դասընկերօջս՝ Աստիկ Սիրունեանի բնակած տան ետեւի փողոցը, եւ հոն,

կապոյտ փեղկերով շաքարավաճառի խանութ մը արհաւու կը գնէինք :

Ներսը ընդարձակ չէր, բայց ապրանքներ շատ կային, եւ փայտէ դարակներու վրայ, ամեն տեսակ գունաւոր շաքարներով լեցուն , ապակիէ գիրուկ շիշեր քով քովի շարուած կ'ըլլային...

Խանութպանը մեզ լաւ կ'ընդունէր :

Փողոցին նայող երկու խոշոր պատուհաններու ետեւ, մարմարէ սեղանի մը վրայ ան կը բանար արհաւուսով լեցուն շիշերէն մէկուն բերանը, ու զանազան ձեւերով փոքրիկ կիներու, կենդանիներու եւ մարդերու սեւ արձանիկներ, թուղթէ պզտիկ տոպրակի մը մէջ կը պարպէր:

Մենք Սուրբ Աստուածածին եկեղեցիին դպրաց դասին մաս կը կազմէինք, եւ լսած էինք որ արհաւուսը ձայն կը գտէր եւ կ'աղուորցնէր անոր հնչիւնը :

Տարիներով մասնակցած էինք եկեղեցւոյ երգեցողութիւններուն, ու ես բոլոր շարականները եւ արարողութիւնները այլեւս գոց սորված էի :

Մեր դպրապետը Պոլսեցի Լեւոն Սիրունեանն էր, Եգիպտոսի առաջնորդ Մամբրէ արք. Սիրունեանին եղբայրը :

Երգած ժամանակ ես կը տեսնէի եկեղեցիին նաւը, անոր երկու կողմի պատերու իւրքանչիւրին վրայ բացուած հինգ կամ վեց վանդակապատ խոշոր պատուհանները ու զաւիթէն դաս յառաջացող գետնի բաւական մաշած եւ գոյնը նետած կարմիր գորգը :

Նոր չէր եկեղեցին : Ան շինուած էր 1800ական թուականներու կէսերուն, այն ատենուայ կարեւոր թաղերէն Պէյն էլ Սուրէյնի մէջ: Բայց տարիներու հոլովոյթին հետ փոխուած էին լաւ ժամանակները եւ թաղին փայլն ու շքեղութիւնը մնացած էին փոշիներու մէջ : Անցած էին նաեւ Սուրբ Աստուածածնի փառքի օրերը, եւ ան նոր սերունդին համար այլեւս դարձած էր հին եւ անկարեւոր :

Անոր փայտէ բարձր ձեղունին տակ կնունքներու եւ հարսնիքներու ուրախ արարողութիւններ չէին կատարուէր այլեւս :

Շատեր կը նախընտրէին Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ նոր եւ գեղեցիկ մայր եկեղեցին :

Բայց Սուրբ Աստուածածնի մէջ ըսուած աղօթքներն ալ, ուրիշ տեղերու չափ սուրբ էին, եւ անոր հին ու սրբատաշ քարերն ու պատերը, տարիներով ծծած էին երկինք բարձրացող շատ հոգեշունչ խնդրանքներ, եւ վառած մոմերու լոյսեր ...

Եկեղեցին լուսաւոր էր :

Պատարագի կէսերուն, երբ արեւը երկինքին վրայ բարձրացած կ'ըլլար եւ սարկաւազը բուրվառով խորանը եւ դասը կը խնկարկէր, պատուհանէն ներս թափանցող արեւի սիւնակ մը եկեղեցին երկնքին կը կապէր եւ ներսի աղօթքները Աստուծոյ կը հասցնէր ...



Ես կը սիրէի խորանի կողմէն եկած խունկի քուլաները շնչել, բուրվառին եւ քշոցներուն ձայնը լսել, եւ հոն երգուած Հաւատամքին մտքով ընկերանալ :

Կը սիրէի նաեւ դասին մէջ մեր երգած Սուրբ Սուրբը, եւ եղանակի արեւելեան դարձումներով ինծի շատ հաճելի Տէր Ռոդրիգես :

Դասէն անդին, ամէն Կիրակի նաւուն մէջ կը տեսնէի թաղէն եղող ուրբ կամ տասը պառաւ մամիկներ, որոնք նստարաններուն առջեւ կանուխէն տեղ գրաւած կ'ըլլային : Աւելի ուշ եօթ կամ ութ ուրիշ հաւատացեալներ ալ կու գային :

Պատուհանի լոյսին տակ ես դեռ կը տեսնէի կլոր եւ փայլուն ակնոցներով պրն Արամ Մովսէսեանը : Ան միշտ կը հագուէր սրճագոյն եւ գծաւոր զգեստ մը, ու բարեպաշտի կեղծ երեւոյթով, վիզը մէկ կողմ ծռած, ռոտքի կը հետեւէր արարողութեան :

Ես առաջին մէկ օրէն չէի համակրած իրեն : Անձնապէս խնդիր չէի ունեցած հետը բայց գիտէի եւ լսած ալ էի մանաւանդ, որ փառատենչ էր եւ նենգամիտ :

Իրմէ քիչ անդին, գաւիթի եւ նաւի սահմաններուն վրայ, ամէն կիրակի բաց ափերը երկինք դարձուցած, կ'աղօթէր Ս. Աստուածածին եկեղեցոյ յաղթանդամ հոգաբարձու պրն Պետրոսը: Ան սովորաբար բանկալին մէջ կը մնար, եւ մտերու վաճառքին կը հսկէր, բայց երբեմն, պարապ ժամերուն եկեղեցի կը մտնէր, ու նաւի մուտքին՝ հեռուէն կ'ընկերանար մեր երգերուն :

Իր զօրաւոր ու բամբ ձայնը կը խառնուէր մերիններուն, եւ երգեցողութիւնը տարբեր ձեւով, ճոխ ու հմայիչ կը դառնար ներկաներուն :

Բայց պրն Պետրոսին գործունէութեան գլխաւոր դաշտը, եկեղեցիէն դուրս գտնուող բանկալին մէջ էր : Հոն պատարագէն վերջ տուն դարձողներուն մաս կը բաժնէր, եւ կլոր ափսէի մը առջեւ կեցած՝ թաւ ձայնով շարունակ

- Շէ՛ն մնաք, պայծա՛ր մնաք աղբատներուն պնակը անտես մի՛ առնէք, կը պոռար :
- Այդ ձայնը, աղբատներուն պնակը անտես առնողներու ետեւէն գրեթէ մինչեւ փողոց կը հասնէր, ու դժուար էր չլսել ձեւացնելը....

Իսկ հոգաբարձու Պետրոս Մանիկեանը ափսէին առջեւ կեցած սրտաբուխ նուերի կը սպասէր...

Բանկալը մեծ էր եւ ներսի մթնոլորտը միշտ տաքուկ կ'ըլլար : Մենք դպիրներս, կը սիրէինք եկեղեցիէն վերջ հոն հաւաքուիլ, եւ սեղանին շուրջ խօսելով հաճելի ժամանակ անցնել :

Յունուար ամսուան պաղ կիրակի մը, խօսակցութիւնները բանկալին մէջ վերջացած էին : Պրն Պետրոսը սովորականին պէս կիրակի օրուայ մասը գատելէ վերջ, թուղթ պզտիկ տոպրակի մը մէջ ինծի նշխար մըն ալ նուէր տուաւ :

Նշխարները միշտ չէին գտնուէր :

Երբ տուն հասայ, մասը եւ նշխարը մօրս տուի : Մասը ընտանիքով բաժնուեցանք :

Նշխարը, մայրս համբուրեց եւ տարաւ անկողինիս բարձին տակ պահեց :

Եղբօրս եւ քրոջս բարձերուն տակ ես արդէն տեսած էի նման նշխարներ :

Անոնք կարելոր էին :

Մայրս նշմարելով որ քովը կեցած՝ ըրածը կը դիտեմ,

- Պահեմ, որպէսզի գիշերները բարի հրեշտակներ գան եւ քեզի անուշ քուն բերեն,- ըսաւ :

Բայց գիշերը անուշ քուն բերող հրեշտակները չեկան : Գոնէ ես չտեսայ անոնց գալը ...

Գլուխս բարձիս վրայ դրած, անոնց փոխարէն տեսայ միայն մայրս, որ հրեշտակի չափ բարի, իր կեանքի ամբողջ քունը սիրով նուիրեց որպէսզի մե՛րը ըլլար անուշ, հանդարտ ու անխռով ...:

Կարօ Պօհճալեան

Քամիինաս, Պրագիլ

ԻՄ ՊՐԻՍՄԱԿԷՍ

ԱՌՕՐԵԱՅ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Մարտ 2 Երամեան



Առաւօտեան սուրճին հետ դիմատետրը թերթելը, բարեկամներուս, դասընկերներուս եւ ծանօթներուս լուրերը կարդալը օրս եռանդով կը լեցնէ, մանաւանդ երբ կը մտածեմ՝ իրենց բոլոր ըրածներուն քով իմ ըրածներս ի՞նչ են որ... եւ կը ծրագրեմ աւելին ընել:

Վերջերս սակայն – վերջերս, ըստ պատմութեան կամ ժամանակի հաշուարկին վերջին մէկ վայրկեանը=քառորդ դարը – անասելի բռնութիւններու, անարդար դէպքերու, քաղաքական սրիկայութիւններու եւ

քաղաքականօրէն զօրաւորին ապիկար լկտիութեան անկասելի «շքերթ»-ի մը ժամանակը դարձեր է:

Ընդմիջումներ կը պատահին նաեւ, երբ կեանքը բնականին վերադառնալու խոստում կը թուի:

Կը թուի միայն, որովհետեւ ահա նո՛ր թափով եւ աւելի՛ սաստկութեամբ կը սկսի կրկնութիւնը նոյն այդ շքերթին:

Ի՞նչ ընել:

Երբեմն կը մտածեմ՝ իրապէ՞ս անիծեալ ենք, որ այսքան բան կը պատահի մեզի. Ջարդը, տեղահանութիւնը, Սովետական կարգերը, եւ ի վերջոյ փոքրիկ Հայաստան մը, որ կը խոստանար դրախտ ըլլալ, գոնէ մեզի համար:

Միայն մենք չենք սակայն այս շքերթին գոհերը: Ամբողջ մարդկութիւնը ի՛նք է:

Բայց ինչո՞ւ: Ինչո՞ւ այսքան բրտութիւն: Ո՛ւր մնաց մարդուն քաղաքակրթութիւնը 21-րդ դարու շեմին: Ա՛յս է, այսպէ՞ս եւ այսքա՞ն է մեր՝ մարդ արարածին յառաջացումը, գիտութեան նուաճումը:

Ի՞նչ ընենք: Ի՞նչ կ'ընեն մարդիկ, երբ կը զրկուին ապրելու նուազագոյն պայմաններէն, աւելին՝ արժանապատուութեամբ ապրելու պայմաններէն:

Ի՞նչ տարբերութիւն, թէ ո՛վ է երկրին ղեկավարը, թէ ո՛ր կուսակցութիւնն է իշխողը, թէ ի՛նչ կրօնական համոզումներ կը տիրեն: Կարելորդ՝ մարդը, պարզ, սովորական մարդը արժանապատիւ կերպով կարենայ աշխատիլ, ապրիլ եւ ապրեցնել նախ իր ընտանիքը, ապա իր շրջապատը, քաղաքը, երկիրը...

Այնքա՛ն հարցեր կան աշխարհի ճակատագիրը որոշող քանի մը մեծ երկիրներուն մէջ, այնքա՛ն հարցեր կան երկրագունդին ապագային շուրջ՝ կլիմայական փոփոխութիւններէն, մինչեւ աղբերու կուտակումին հարցը:

Ոչ ոք սակայն ուշք կը դարձնէ նման եւ շա՛տ աւելի հարցերու:

Ինչո՞ւ:

Կար ատեն, երբ կը զարմանայի, թէ Նշան Պէշիկթաշլեան, որ Փարիզ կ'ապրէր, Փարիզի տղոց խումբէն չէր եւ տարիքով ամենէն մեծն էր, կը զարմանայի թէ ինչո՞ւ անոնց նման չի



գրեր իր կեանքին, ամենօրեայ դժուարութիւններուն մասին, կամ Արամ Հայկազի նման Ջարդի անցած ճամբաներուն մասին:

Նշան Պեշկոպաշլեան ընդհանրապէս գրեր է իր գիւղի հեքիաթներուն մասին, գիւղի աւանդութիւններուն, հաւատալիքներուն մասին, որոնք գոյութիւն ունէին ջարդերէն առաջ: Ինչո՞ւ:

Նոր է որ կը հասկնամ, որովհետեւ ահա ես ալ կը լսեմ վերջին ահաւոր դէպքերը, բայց կը գրեմ այլ բան...

Թէեւ այքերս գիրքիս վրայ են, իբր թէ կը կարդամ, բայց միտքս Չարմիկին հետ է.

Թերթը լոյս պիտի տեսնէ՞ այս շաբաթ, կը հարցնեմ քաշուելով, միտքէս:

Լուրերը այնքան ծանր են, որ չեմ կրնար գրել, բայց եթէ թերթը լոյս պիտի տեսնէ, պէ՛տք է գրեմ:

_Տիկին Մարուշ, այսպէս ամէն շաբաթ որ կը գրէք «Գանձասար»-ին, կը վճարուի՞ք:

Ոչ, կ'ըսեմ պարզօրէն:

Իրապէ՞ս, շա՛տ կը զարմանայ խօսակիցս, ինչո՞ւ կը գրէք ուրեմն:

Հիմա ես է որ շա՛տ կը զարմանամ:

Քաղաքիս, ծննդավայրիս միակ թերթն է, հոն չապրելով, նուազագոյնն է որ կրնամ ընել, կ'ըսեմ կրկին պարզօրէն:

Գիտեմ որ ծանր պայմաններու մէջ չիւնթանալու համար, հաւասարակշռութիւնը պահելու կ'երեւի միակ ձեւը կարելիին չափ սովորականը՝ լրութիւնը պահելն է, բան մը որ մեծ կամք կը պահանջէ:

_Թերթը լոյս պիտի տեսնէ՞:

Պետք է հաճելի, ուրախ, կամ յիշատակներ արթնցնող բան մը գրեմ: Բայց գրիչս չի հնազանդիր:

Տաուստը իր հոգին ծախեց սատանային, անսահման գիտելիք եւ երիտասարդի աւիւն ունենալու համար: Կէօթէի այս գիրքը լոյս տեսեր է 1808 թուականին:

Վարպետը իր հոգին ծախեց («Վարպետը եւ Մարկարիթան»), Մարկարիթայի սիրոյն: Միքայէլ Պուկլաքովի գիրքը լոյս տեսեր էր 1946-ին:

Ատտի Լարուն իր հոգին ծախեց-տուաւ Մուրին (The invisible Life of Addie LaRue), որ զինք փրկէ պարտադրուած ամուսնութենէ մը: Victoria E. Schwab-ի գրիչով այս գիրքը հրատարակուեր է ԱՄՆ, 2020 թուականին:

Այլ երկիրներու գրականութիւններուն մէջ եւս հաւանաբար նոյն նիւթին շուրջ գրուած գրական երկեր կան:

Այդ երկերէն ո՞չ մէկը սակայն կ'ըսէ, թէ սատանան ի՞նչ ըրաւ, կամ ի՞նչ կ'ընէ ընդհանրապէս իր առած-գողցած հոգիներով:

Եթէ յիշած վէպերուս առաջին երկուքը տղամարդ հերոսներ ունին, որոնք համաձայնութիւն կնքեր են իրենց անձնական շահերուն համար, ապա երրորդ վէպին հերոսը երիտասարդ աղջիկ մըն է, որ իր հոգին կու տայ, մարդկային ամենէն էական ազատութեան՝ ընտրելու ազատութեան համար. կին է, չունի այդ ազատութիւնը, մանաւանդ 1700-ականներու արեւմտեան աշխարհին մէջ: Եւ ատիկա ունենալու համար, պէ՛տք է Մուրին հետ դաշինք կնքէ:

Այսքանը, նոյնիսկ անձնական շահու դրդապատճառը հասկնալի է, որովհետեւ այդ հերոսները, որոնք տերն են իրենց հոգիին, միայն այդ՝ իրենց ունեցածն է որ գրաւի կը դնեն. անոնց որոշումը ուրիշներու կեանքին համար սպառնալիք չէ՛:

Եւ կը յիշեմ, կրկին ու կրկին, որ միշտ եւ ամէն ժամանակներու մէջ, ամէնէն մեծ մեղքերը գործուած են կեանքի էական հաւատալիքներուն՝ հայրենիքի, կրօնքի եւ սիրոյ անունով, իբր թէ անոնց համար:

<http://www.kantsasar.com/news/54557-2/>

ՏԱՐԻՆ ՈՐՉԱ՛Փ ԱՐԱԳ ԿՐ ՍԱՀԻ:

ԱՆՑԱԳԻՐ ԴԷՊԻ ԾՆՆԴԱՎԱՅՐ 15-3-2024



Սիլվա՛, այս գիծէն անդին առանձինդ ես...: Ճամբորդական ճամպրուկներս յանձնած եմ, իսկ ուսէս կախուած կարմիր պայուսակս, միակ ընկերակիցս է՝ «թեւ- թիկունքս»: Սրտիս բարախումները կրկին մատնուած են խայթող անորոշութեան, «հոս եւ հոնի միջեւ»՝ շուարումի տուայտանքին, անիրականութեան մէջ իրականութիւն որոնելու ջանքին:

Միրելի պայուսակս, որ փայլուն օրերէս կու գայ, զարմանալիօրէն յաջողած է մնալ նոյնքան փայլուն...: Ճամբորդութենէ- ճամբորդութիւն դուրս կը հանեմ զայն մոռացութեան պահարանէն եւ իր գրպանիկներուն մէջ կը տեղաւորեմ անհրաժեշտ պիտոյքներս:

Այսօր առաջին գրպանիկին մէջ տեղադրեցի անցագիրս: Կարծես այդ փոքրիկ մատեան մը ըլլար, որ կը պարփակէր ինքնութիւնս: Դիտեցի անցագրիս մէջ ապրող լուսանկարս, որ ահա չորս տարի ետք նոյն դէմքով զիս կը դիտէ:

Արդեօ ք՞ան տեղեակ է այն մանրամասնութիւններուն՝ ներաշխարհիս մէջ ծառացող ցաւերուն, որոնց անդրադարձները արձանագրուեցան իր պատկերած դէմքին վրայ:

Կարօտով ու թախիծով նայեցայ անցագրիս մէջ դրոշմուած անուններուն, որոնք կեանքիս ընթացքին արեւի պէս փայլեցան ու լուսաւորեցին անամպ երկինքս, ապա ասուպներու նման շիջեցան, անցան ու զացին...: Իրաւացի է Վահան Թեքէեանին «Աղուորները»՝

«Աղուորն անո՛նք են միայն, որ տենչանքիդ ընդմէջէն

Անցան, զացի՛ն ու հիմա քեզ հեռուէն կը կանչեն...»:

Բայց չեմ գիտեր, թէ ինչո՞ւ կը կանչեն. չէ որ իրենք միշտ հետս են, արեանս մէջ լուծուած են, միտքիս ու հոգիիս մէջ խարսխուած են:

Անցագրիս մէջ կը լողայ ծննդավայրս՝ իր կապոյտ միջերկրականով, որուն պարունակէն դուրս կը ծփամ խարխիլած խարխիլով: Այո՛, մղոններ հեռու եմ սիրելի Լիբանանէս, սակայն ամէն զիշեր կը մօտենամ անոր, հմայուած իր տարերքային գեղեցկութեամբ, ամրօրէն կը փարուիմ եւ կը նոյնանանք խլուած յոյսի երազներով ու կարիւնինք նոյն վերքերով...:

Առաւօտեան զարթնումի բաժակ մը սուրճովս, կը պտըտիմ ծննդավայրիս «կաճաններով»: Մերթ սիրտս կը խայտայ լիացած քաղցր յուշերով... մերթ կը մղկտայ այժմու անձուկ ու ցաւատանջ պայմաններով:



Բաժակիս յատակին նստած սեւ մրուրով կը փորձեմ քողարկել ճննդավայրիս բաժին հասած անարդարութեան անմարսելի երեւոյթները: Ու գայրոյթի փոխարէն աղօթք մը կը հիսուի մրմնջացող շուրթներուս վրայ եւ յոյսի թելեր կը շղարշեն աչքերուս դիմաց:

Չարդեղէններս գեղեցկացուցին պայուսակիս պարունակութիւնը, որոնք յատուկ ամեակներու եւ առատաձեռն սիրոյ մը խորհրդանիշներն են: Անոնց փայլփլող օղակներուն հետ միահիստուած են գուրգուրոտ մատնահետքեր եւ քաղցրագոյն յիշատակներ:

Աճապարելու կարիք չունիմ, բայց ակամայ քայլերս կարագացնեմ հասնելու՝ թոյ՛չքիս համար որոշուած դարպասը:

Անտարբեր եմ օղակայանին մէջ ճոխութիւն պոռթկացող վաճառատուններուն հանդէպ: Կը զարմանամ, որ ոչ մէկ ցուցափեղկ զիս կը շլացնէ կամ կը հրապուրէ: Միլվա՛, մարդ այսքան ալ կը փոխուի՞ ..., կը հարցնեմ ես ինձի յատակ իմանալով պատասխանս՝ Այո՛, կը փոխուի, երբ առարկան կը դառնայ անկարելորդ, իսկ քեզ լիացնող «նիւթերը» օրէ օր կը նուազին, կամ գրեթէ կը յանգին:

Շուրջս խուռներամ եռուզեռ է. ճամբորդներ կը վիստան այլազան ազգութիւններով, գոյներով եւ տարազներով: Իւրաքանչիւրին շարժումներէն կը «կարդամ» իր մարմնի լեզուն (body language): Որչա՛ փ թափանցիկ են մարդիկ...:

Յանկարծ յիշողութենէս դուրս կը ցայտեն Եղիշէ Չարենցի տողերը՝

«Անց եմ կենում, շուրջս-մարդիկ, շուրջս դէմքեր հազա ր-հազա ր.

Շուրջս աշխարհն է աղմկում, մարդկային կեանքն անհաւասար.

Եւ ո՛վ կասի՛ ինչո՞ւ ես դու, և ո՛վ կասի, թե ո՞ւր հասար...»:

Չեմ գիտեր ինչպէս պիտի անդրադառնար Եղիշէ Չարենց այսօրուան աշխարհին, քսանմէկերորդ դարու ժխորին ու անհաւասարութեան, ուր ամբողջովին այլ դարձած են ընկերային չափանիշները, հետապնդուած նպատակները, արժանիքներու կշռոյթը: Երբ ահռելիօրէն նահանջած է արդարը, բարին, առաքինին...: Ինչքան ալ մարդ հմուտ ըլլայ «համակերպելու արուեստին», անպայմանօրէն կը ձախողի, կընդվզի, կը պոռթկայ, կը ցաւի...:

Արդէն նստած եմ թոյ՛չքիս համար կանխատեսուած դարպասին մօտ եւ ապակեպատ ձողերէն անդին կէրեւնայ այն օդանաւը, որ զիս պիտի փոխադրէ տուն: Մտքովս արդէն կը շրջիմ տանս մէջ եւ երեւակայութիւնս իր բարի դերը կը խաղայ՝ բացակաները հրաւիրելով տուն, հեռացածները ետ կեանքի բերելով, մռայլ պատերը լուսաւորելով...: Ակամայ մարտ կը մղեմ տրամաբանութեանս դէմ, որ կը զգուշացնէ զիս հիասթափութենէ՝ ...:

Խառնիխուռն մտածումներս, յոյզերս կընդհատուին, երբ բարձրախօսով օղակայանի պաշտօնեան ճամբորդներս օդանաւ կը հրաւիրէ:

Յանկարծ ականջիս մէջ կը հնչէ մօրս քաղցր ձայնով «Թոյ՛չի մտքովս տուն...»ը, եւ ես մանկան մը ոգեւորութեամբ կը թօթափուիմ, կը մանրանամ, թելեր կառնեմ ու կը սլանամ երազներուս յորձանքով...:

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



Առողջ հինքնաքննադատութիւնը դրական լիցքեր կը հաղորդէ անհատին, փոխան ժխտականի, քանզի ան իր մէջ ունի նոր վճռակամութիւն, նոր յանձնառութիւն՝ դասեր քաղելու սեփական սխալէն, սխալներէն եւ խրատուիլ անոնցմէ աւելի լաւ գալիքի մը կերտումին համար...

Առանց նման հինքնաքննադատութեան, կեանքի ճահճացումը անխուսափելի է, քանզի կայ միշտ ինքնակատարելագործուելու անվերջ կենսընթաց:

.....

Եթէ սփիւռքը, սփիւռքները, Հայաստանի Հանրապետութիւնը զիրենք ճշմարտօրէն ցոլացնող հայելիի դիմաց կանգնին, անկեղծ միտումը ունենալով՝ ճանչնալու իրենք զիրենք, ճանչնալու թէ ո՞վ են, ո՞ր կ'երթան, հարց տան թէ ի՞նչ պէտք է ընեն, քայլեր մշակեն այդ ուղղութեամբ եւ հետեւողականօրէն իրագործեն զանոնք...յայնժամ գուցէ հաւաքական Ինքնաճանաչումը դուռ բանայ մեր հաւաքական փրկութեան, բացի եթէ ինքնառչնչացման ախտէն կը տառապինք մենք, որպէս ժողովուրդ եւ հայոց երկիր:

.....

Հոգին պարզ ու խոնարհ պահելը մեծութիւն է, որ քիչերուն է տրուած: Շատեր՝ պճնուելով իրենց տիտղոսներու, դիրքի թէ նիւթական հարստութեան զարդերու փայլով, կը գոռոզամտին, կը դառնան ինքնահաւան եւ նոյնիսկ ամբարտաւան, տակաւ կորսնցնելով ամէնէն թանկը՝ հոգիի պարգոյութիւնը, խոնարհութիւնը, մաքրութիւնն ու անեղծութիւնը, կը դառնան անճանաչելի իրենց մարդկային էութեան մէջ, ինչ որ մարդը՝ մարդէն հեռացնելու եւ խորթացնելու միայն կ'առաջնորդէ...: Մարդուն իսկական զարդը՝ անոր պարզ, մանկական անմիջականութիւնը պահած, անեղծ հոգին է, որ կ'առինքնէ, սեր ու վստահութիւն կը ներշնչէ...

.....

Մենք դեռ անհատաբար եւ ազգովին անչափ շա՛տ բան ունինք սորվելիք, մանաւանդ զիրար լսելու, զիրար յարգելու, մէկս միւսին տեսակէտն ու կարծիքը ընկալելու, հանդուրժողութիւն եւ հասկացողութիւն ցոյց տալու եւ նման բաներու մէջ, ինչ որ էապէս կարելոր է ազգային հարցեր լուծելու համար ալ...Վերացականօրէն կամ տեսականօրէն զիրար կը սիրենք ու կը յարգենք, բայց առօրեայ մեր կեանքին մէջ, տխուր է նկատել որ իւրաքանչիւր հայ ի՛նք կ'ուզէ



երեւիլ, ի՛նք կ'ուզէ յարգուիլ, ի՛նք կ'ուզէ պատուուիլ... Եւ տակաւին, իրենիսնէն տարբեր տեսակետ ունեցողը կ' անարգէ, կ'անպատուէ, կը վարկաբեկէ, կը զրպարտէ...Ի՞նչ անուանենք այս երեւոյթը...ԱՆՀԱՆԴՈՒԹՅՈՒԹՅՈՒԹՅՈՒՆ, ԵՍԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ, ՀԱՏՈՒԱԾԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ, ԱՆՔԱՂԱՔԱԿԻՐԹ ՎԱՐՔ, թէ՛ ...

.....

Ի՞նչ է պետութիւնը, պետականութիւնը... Արդեօ՞ք ինքնանպատակ դրուածք մըն է անիկա, գուտ հաւաքական կարգ ու կանոն, բարեկեցութիւն, հզօրութիւն եւ ապահովութիւն ստեղծելու համա՞ր միայն... Թէ՛ անոր գոյութիւնը պարտի ծառայել աւելի վեհ նպատակի մը: Մարդ արարածը նման բարեմասնութիւններ կրնայ գտնել ամենուր՝ աշխարհի չորս ծագերուն: Բայց ազգային պետականութիւնը էապէս կեանքի կը կոչուի՝ ազգի մշակութային-հոգեւոր-գաղափարական-բարոյական արժէքները պահպանելու եւ ծաղկեցնելու համար, ազգի բուն էութիւնը, առաքելութիւնը ի կատար ածելու համար... Սա է անտարակոյս ազգային պետականութեան բուն գոյիմաստը կամ raison d'etre-ը...Մնացեալ նպատակներու իրագործումը ածանցեալ կը մնան սուկ:

.....

Դար ու դարեր կը բարբառինք միաբանութեան մասին, կը դժգոհինք անոր բացակայութենէն հայ կեանքին մէջ, եւ կը շարունակենք անմիաբան մնալ զանազան պատրուակներով...Մանուկ հասակէն կարծէք մեր դաստիարակութեան մէջ կը մտնէ կուսակցական-քաղաքական-ակումբային այլամերժութիւնները, որոնք կը հրահրուին օտար ուժերու կողմէ ալ՝ «բաժնէ որ տիրես»-ի քաղաքականութեամբ եւ ՄԵՆՔ, եղեռնահար եւ սփիւռքացած ժողովուրդ մը խելքի կու գա՞նք արդեօք, իսկապէս ՄԻԱԲԱՆՈՒԵԼՈՎ, թէ՛ կը շարունակենք ակումբ-ակումբ խաղալ, «մեզմէ է-մեզմէ չէ» ըսելով տարանջատուիլ, ջլատուիլ ու սկարանալ յուրախութիւն մեր թշնամեաց:

.....

Գրելը ինձի համար ամէն ինչ է...Իմ ներքին կանչիս ու մղումիս արձագանքը, իմ ազատութի՛ւնս, կեանքիս իմա՛ստը, մերթ՝ պոռթկո՛ւմ է, ներքին լաւայիս ժայթքո՛ւմը, մերթ՝ ամբարած իմաստնութեանս բառերու վերածո՛ւմը...Ապրում-խոհերուս լեզո՛ւ տալը...Եւ դեռ՝ Մեծասքանչին հետ ամենպահեայ ժամադրութի՛ւն է, անոր բառերը քով-քովի դնելով, անոնց իմաստ ու յոյզ հաղորդելով՝ հոգեմտաւոր խրախճանքի ապրո՛ւմ անփոխարինելի...եւ կաթիլով մը գոնէ՝ հայապահպանման սուրբ գործին իմ ամէնէն խոնարհ լումաս ներդնելու անսահման երջանկութիւն...ԳՐԵԼԸ ԿԵԱՆՔՍ Է, ԳՐԵԼԸ ԿԵԱՆՔՍ ԿՐԿՆԱԿԻ ԱՊՐԻԼ Է:

.....

Էական նշանակութիւն ունի կեանքի մէջ բարեկամ-զրուցակից ունենալը, որուն առջեւ անկեղծօրէն բանաս սիրտդ, միտքդ, հոգիդ, եւ փոխադարձաբար՝ ունկնդիր ու հաղորդակից ըլլաս իր հոգիի կանչին, որ կարծես արձագանգելով քու մէջդ ալ, նորանոր միտքերու, գաղափարներու, խոհ-ապրումներու ծնունդ կու տայ, դրական լիցքեր կը փոխանցէ,



փոխհարստացման ազդակ կ'ըլլայ որոշապէս: Բայց մենակութիւնը նոյնպէս անհրաժեշտ է մարդ էակին, ինքնամփոփ մտածման, շերտ-շերտ բացուող խորհրդածութեանց, վերլուծութեանց եւ անոնց ընդմէջէն Ինքնաճանաչման եւ Մարդաճանաչման անփոխարինելի առիթ մը ընձեռելով...: Ամէնէն խորունկ միտքերը կը թուի թէ կը ծնին մենակութեան մէջ, կարծէք վսեմագոյն ներշնչման պահերուն, երբ դաշն են երկկիւնք ու երկկիր, տիեզերական Ես-ը եւ անհատական Ես-ը..., եւ ի՛նչ խորախորհուրդ միտքեր կ'այցելեն մարդուն նման պահերուն: Թերեւս կարելի է ըսել. ՄԵՆԱԿՈՒԹԻՒՆԸ ՄԵԾ ԴՊՐՈՑ Է ՈԳԻԻ ԸԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ ԵՒ ՆՈՐԱՆՈՐ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒՄՆԵՐՈՒ:

.....

Ընկերդ խաբելով, ժողովուրդը խաբելով, շրջապատդ խաբելով՝ երբե՛ք չես կրնար իսկապէս երջանիկ ըլլալ, ուրախանալ, ներքին բաւարարութիւն զգալ...Սուտի եւ կեղծիքի վրայ կառուցուածը շուտով կը փլի, քանզի հիմքը խարխուլ է: Ինքնախաբելութիւն է թուացեալ որեւէ «յաղթանակ», եթէ վերջինը ձեռքբերուած է ուրիշները խաբելու, ստորնացնելու, անիրաւելու գնով:

.....

Մարդ էակը երբեմն անձանօթ է նոյնինքն ինքն իրեն եւ թերեւս ամբողջ կեանք մը բաւարար չըլլայ որ մարդը լիովին, ամբողջովին ճանչնայ ինքզինք, իր հոգիի ամէնէն խոր շերտերով, թաքուն ծալքերով, գիտակից թէ ենթագիտակից տարածքներով: ԻՆՔՆԱՃԱՆԱԶՈՒՄ: Մա գործընթաց է, որ վերջ չունի երբեք: Իսկ առանց ինքնաճանաչման, մարդը ինչպէ՞ս պիտի ճանչնայ իր նմանին, իր մերձաւորին ու հեռաւորին: Մարդը՝ իր զգացական, յուզա-իմացական, հոգեբանական բոլոր կողմերով առեղծուած մըն է, գոր լիարժէք ճանչնալու համար, կ'արժէ ամբողջ կեանք մը յատկացնել: Եւ զայն աւելի ու աւելի լաւ ճանչնալու ընթացքին, աւելի ՄԱՐԴԱՆԱԼ, ՄԱՐԴԿԱՅՆԱՆԱԼ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՔԱՌԵԱԿՆԵՐ



Թէ մամոնային պիտի ծառայես,
Պիտ'ըլլաս ստրուկն անոր քըմայքին,
Պիտ' մոռնաս ամէն հոգեւոր արժէք,
Սեփական հոգիդ ու սուրբ հայրենիք:

.....

Ի՛նչ ալ ընես, ի՛նչ ալ չընես,
Դժգոհողներ պիտի ըլլան:
Որքան ալ տաս ինքնանուէր,
Միսդ կրծող պիտի ըլլայ:

.....

Թէ կարենաս դժուար պահին,
Չընկրկիլ բիրտ հարուածին տակ
Ու դեռ ժպտիլ կեանքին պատիր,
Գլխագիր մարդ դուն կը դառնաս..

.....

Կեանքի լեղին պիտ' ճաշակես
Որ դաս քաղես իմաստութեան,
Դաւ, խարդաւանք պիտի տեսնես
Որ գնահատես սիրտը արդար...

.....

Ես չհասկցայ այս դարի բանը,
Շահն է գերակայ, մարդը՝ ստրուկը,
Եւ ոլոր-մոլոր նոյն փառատենչը,
Արծաթին գերի գրպանահատը...



.....

Ազատ միտքը մարդուն փառքն է,
Թոյչքն անոր մի՛ կաշկանդէք,
Կաղապարներն բիր պողպատեայ
Կը փշրուին իր սլացքին տակ:

.....

Թէ թշուառ ես ֆիզիքապէս,
Կրնաս բուժուիլ օր մը գուցէ,
Բայց թէ թշուառ ես հոգեպէս,
Ողորմելի արարած ես...

.....

Մերն են արեւ, լուսին, աստղեր,
Մերն են ծառեր ու ծաղիկներ,
Բիր բարիքներ, աշխարհը լայն,
Բայց անկշտում մենք կը մնանք:

.....

Ցաւս հրկիզուէր ու ճրբագ դառնար,
Լուսոյ ճաճանչներ բաշխէր աշխարհին,
Յետոյ աստղ դառնար երկնի ճակատին,
Արտասուքի պէս ցոլար մաքրափայլ...

.....

Հողմերէն ետք փոթորկայոյզ,
Հոգիս արդէն խաղաղած է,
Միտքս սակայն միշտ խուզարկու,
Ժիր ու կայտառ դեռ միտք կ'ածէ...

.....

Կեանքը միշտ ալ վեր ու վար է
Ցնցումներով փոքր ու մեծ,
Միապաղաղ կեանքը մահ է,
Ճահիճի պէս անշարժ փոս է...

.....

Խաղաղ հոգիս դեռ կը փնտռէ
Խորխորատներ եւ բարձունքներ,
Որ մերթ իջնէ անդունդն ի վար,
Մերթ ալ սլանայ երկինքն ի վեր...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

: